DISRUPTING HARM IN ARMENIA

Տեխնոլոգիաների կիրառմամբ
երեխաների սեռական շահագործման
և բռնության վերաբերյալ տվյալներ

Ֆինանսավորող՝ Safe Online

Իրականացնող կազմակերպություններ՝ ECPAT INTERPOL unicef for every child

Ուշադրություն.

Սույն զեկույցում քննարկվում է Հայաստանում երեխաների սեռական շահագործման և բռնության թեման: Այն պարունակում է հայաստանյան մասնագետների ներկայացրած՝ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերի նկարագրություններ: Խորհուրդ է տրվում ընթերցելիս հետևել ձեր ինքնազգացողությանը և անհարմարություն զգալու դեպքում ընդհատեք ընթերցումը:

Առաջարկվող հղում՝

ECPAT, INTERPOL and UNICEF. (2025). Disrupting Harm in Armenia*:*
Evidence on Technology-Facilitated Child Sexual Exploitation and Abuse. Safe Online
(ԷՔՓԱԹ, ԻՆՏԵՐՊՈԼ և ՅՈՒՆԻՍԵՖ (2025). "Վերջ տալ մինչև Հայաստանում. տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության վերաբերյալ տվյալներ". Սեյֆ Օնլայն նախաձեռնություն):

Հեղինակային իրավունք՝ © ECPAT, INTERPOL, Safe Online, UNICEF 2025.

Սույն հրապարակման օգտագործումը թույլատրվում է ոչ առևտրային նպատակներով՝ աղբյուրին պատշաճ հղմամբ: Սեյֆ Օնլայն նախաձեռնության կողմից ֆինանսավորումը չի ենթադրում նյութի բովանդակության հետ համաձայնություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեղմագիր 2
Մեթոդներ 6
Ներածություն 12
Համացանցի օգտագործումը Հայաստանում 13

1. Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործումը և բռնությունը Հայաստանում 19

1.1 տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ինչ դրսևորումների են առնչվում երեխաները Հայաստանում 21
1.2 որտեղ է տեղի ունենում սեռական շահագործումն ու բռնությունը 22
1.3 ովքեր են կատարում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և բռնությունը 27
1.4 ինչպես են գործադրվում սեռական շահագործումն ու բռնությունը 30

2. Ներգործությունը երեխաների վրա 36

2.1 սոցիալական ներգործությունը 38
2.2 ներգործությունը հոգեկան առողջության վրա 43
2.3 ֆիզիկական ներգործությունը 45

3. Բռնության մասին հայտնելը 46

3.1 ինչպե՞ս են բացահայտվում երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերը 47
3.2 բացահայտման խոչընդոտները 49

4. Հաղորդում ներկայացնելը 52

4.1 արդյո՞ք երեխաները հաղորդում տալիս են 53
4.2 ոստիկանություն հաղորդում ներկայացնելուն խանգարող հանգամանքները. անհատական և համայնքային գործոններ 55
4.3 ոստիկանություն հաղորդում ներկայացնելու խոչընդոտները. կազմակերպական և համակարգային գործոններ 57

5. Ծառայությունների տրամադրումը 61

5.1 երեխաների կողմից ֆորմալ աջակցության դիմելու կամ դրանից օգտվելու որոշման վրա ազդող գործոնները 62
5.2 ծառայությունների մատուցման և դրա արդյունավետության վրա ազդող գործոնները 65

6. Արդարադատության մատչելիությունը և իրավական պաշտպանության միջոցները 70

6.1 դեպքերի բացահայտումը և ապացույցների նախնական հավաքումը 72
6.2 քննչական գործողություններ 76
6.3 քրեադատավարական գործողությունները դատարանում 83
6.4 հատուցում 88

7. Անձնական կյանքի գաղտնիության և անանունության՝ երեխայի իրավունքը. լրատվական լուսաբանումը Հայաստանում 90

8. Եզրակացություն 93

9. Առաջարկություններ 96

10. Երախտիքի խոսք 105

11. Հավելված. հիմնական հասկացությունների սահմանում 106

ՍԵՂՄԱԳԻՐ

Սեյֆ Օնլայն (Safe Online) նախաձեռնության ֆինանսավորմամբ ԷՔՓԱԹ Ինտերնեշնլ (ECPAT International) կազմակերպությունը, ԻՆՏԵՐՊՈԼ-ը և ՅՈՒՆԻՍԵՖ Իննոչենթիի Հետազոտությունների և կանխատեսումների գլոբալ գրասենյակը (UNICEF Innocenti) գործընկերային հիմունքներով մշակել և իրականացրել են "Վերջ տալ վնասին" հետազոտական ծրագիրը և դրա մեթոդաբանությունը: Ծրագրի մտահղացումը և հայեցակարգը մշակվել են Սեյֆ Օնլայն նախաձեռնության կողմից՝ հիմք ծառայելով սույն համագործակցության համար:

Սույն բացառիկ գործընկերության շրջանակում կիրառվել է միջգիտակարգային մոտեցում՝ խորացնելու ընդհանուր պատկերացումը տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության, ինչպես նաև երեխաների նկատմամբ բռնության այս ձևերին պետության արձագանքի վերաբերյալ: "Վերջ տալ վնասին" հետազոտությունն իրականացվել է 2019-2022 թվականներին Արևելյան և Հարավային Աֆրիկայի և Հարավարևելյան Ասիայի 13 երկրներում և 2023 թվականից ի վեր՝ ևս 12 երկրում, այդ թվում՝ Հայաստանում:

2023-2024 թվականների ընթացքում ԷՔՓԱԹ Ինտերնեշնլ կազմակերպությունը, ԻՆՏԵՐՊՈԼ-ը և ՅՈՒՆԻՍԵՖ Իննոչենթին Հայաստանում իրականացրել են հետազոտություն՝ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության թեման բազմակողմանիորեն ուսումնասիրելու նպատակով: Հայաստանի վերաբերյալ տվյալները հավաքվել են 12-17 տարեկանների շրջանում տնային տնտեսությունների համազգային հարցման, արդարադատության ոլորտի մասնագետների, առաջնային օղակի աշխատողների, տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված անձանց, իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ հարցազրույցների, ինչպես նաև ազգային օրենսդրության և քաղաքականության վերլուծության միջոցով:

Ի՞նչ է տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործումը և բռնությունը

"Վերջ տալ վնասին" ծրագրում "տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործում և բռնություն" եզրույթը գործածվում է՝ բնութագրելու համար այնպիսի իրավիճակներ, որոնք ենթադրում են երեխայի սեռական շահագործման կամ բռնության որևէ փուլում թվային, համացանցային և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում: Բռնության այս ձևը երբեմն սահմանվում է որպես "երեխայի "առցանց" սեռական շահագործում և բռնություն": Այդուհանդերձ, ներկայում նախընտրելի է համարվում "տեխնոլոգիաների կիրառմամբ" ձևակերպումը[1], որն առավել ընդգծում է, որ երեխաների նկատմամբ բռնության այս ձևը տեղի է ունենում ոչ միայն առցանց տիրույթում, այլև ինչպես ամբողջովին առցանց, այնպես էլ հանցանքը կատարող անձանց և երեխաների միջև առցանց և առերես շփումները համադրելով:

Սույն զեկույցում տեղ գտած հիմնական սահմանումների վերաբերյալ հավելյալ տեղեկությունները ներկայացված են հավելվածում:

Հիմնական արդյունքները

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործումը և բռնությունը Հայաստանում

- Համաձայն "Վերջ տալ վնասին" հարցման տվյալների՝ Հայաստանում միայն մեկ տարում համացանցից օգտվող 12-17 տարեկան երեխաների 5 տոկոսը ենթարկվել է տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության[2]: Տարածելով այս ցուցանիշը համացանց օգտագործող 12-17 տարեկան երեխաների ընդհանուր թվի վրա՝ ստացվում է, որ մեկ տարում շուրջ 9,000 երեխա ենթարկվել է նշված վնասի ձևերից որևէ մեկին:
- Հարցման տվյալներով՝ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության ամենատարածված ձևը սեռական բնույթի նկարներին իրենց կամքին հակառակ առնչվելն է:

1. Interagency Working Group on Sexual Exploitation of Children, *Terminology Guidelines for the Protection of Children from Sexual Exploitation and Sexual Abuse: Second Edition*, ECPAT International, Bangkok, 2025 (Երեխաների սեռական շահագործման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, *Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու տերմինաբանության ուղեցույց. երկրորդ հրատարակություն*, ԷՔՓԱԹ Ինտերնեշնլ, Բանգկոկ, 2025 թ.):
2. Երեխաներին հարց է ուղղվել առ այն, թե հարցմանը նախորդող տարվա ընթացքում ենթարկվել են արդյոք տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման կամ բռնության թվարկված ձևերից որևէ մեկին թեկուզև մեկ անգամ: Հետազոտական տվյալները հավաքվել են 2024 թվականին:

- Մասնագետներն ավելի հաճախ նշել են երեխաների առցանց գրումինգը և սեռական բնույթի շանտաժը: Սակայն բռնության այս երկու ձևերի քրեականացման առումով նույնպես առկա են բացեր:

Երեխաների սեռական շահագործումն ու բռնությունը սոցիալական մեդիայում, առցանց խաղերում և առցանց այլ հարթակներում

- Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերի 71 տոկոսը տեղի է ունեցել բացառապես առցանց միջոցներով (օրինակ՝ սոցիալական ցանցերի կամ առցանց խաղային հարթակների):
- Վարվող դեպքերին անդրադառնալիս մասնագետները հետևողականորեն նշել են Facebook-ը և Instagram-ը որպես հարթակներ, որտեղ հանցանքը կատարող անձինք կապ են հաստատել երեխաների հետ: Ըստ 12-17 տարեկանների շրջանում անցկացված հարցման արդյունքների՝ Instagram-ը (դրվագների 45 տոկոսը) և Snapchat-ը (դրվագների 45 տոկոս) ամենատարածված սոցիալական մեդիայի հարթակներն են, որտեղ երեխաները ենթարկվել են սեռական շահագործման կամ բռնության: Սոցիալական ցանցերում երեխաների սեռական շահագործման և բռնության դրվագների փոքր մասն է տեղի ունեցել Facebook-ի միջոցով (7 տոկոս):
- Չնայած դրան՝ Հայաստանի օրենսդրությամբ համացանցային ծառայություն մատուցողները և առցանց հարթակները չեն պարտավորվում բացահայտել, արգելափակել և հաղորդում ներկայացնել ապօրինի բովանդակության, օրինակ՝ երեխայի նկատմամբ սեռական բռնություն պարունակող նյութերի մասին:
- Բացի այդ՝ երրորդ կողմի ստեղծած բովանդակության համար միջանկյալ պատասխանատվություն սահմանող համապարփակ իրավական կարգավորման բացակայությունը նշանակում է, որ համացանցային ծառայություն մատուցողները և առցանց հարթակները չեն կարող պատասխանատվության ենթարկվել օգտատերերի կողմից վերբեռնվող անօրինական նյութերի համար, այդ պատճառով էլ շահագրգռված չեն բացահայտելու երեխայի նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութերը, հեռացնելու դրանք կամ կանխելու դրանց տարածումը:

Բռնարարների բնութագրերը և կիրառվող տարածված մարտավարությունները

- Հարցման արդյունքներով՝ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դեպքերի կեսից ավելին (57 տոկոսը) վերաբերում է այն իրավիճակներին, երբ բռնարարը եղել է երեխային ծանոթ անձ: Երեխայի շրջապատում բռնարարները եղել են ոչ թե նրա հասակակիցները, այլ առավելապես 18 տարին լրացած չափահասներ:
- Առաջնային օղակի աշխատողների կարծիքով բռնարարների կողմից կիրառվող ամենատարածված մարտավարություններից են վստահություն ձեռք բերելը, երեխայի մեջ սիրված լինելու զգացում առաջացնելը, երեխաներին սեռական շփման դրդելը և սեռական բռնություն պարունակող նյութեր ձեռք բերելը, հաճախ՝ սեռական բնույթի շանտաժի նպատակով:
- Կարևոր է նշել, որ հանրայնացվելու վախը, որը հավանաբար պայմանավորված է բռնության ենթարկվողին խարանավորելու և մեղադրելու տարածված երևույթով, որին երեխաներն առերեսվում են, ևս օգտագործվել է հանցանքը կատարող անձանց կողմից՝ երեխային մշտապես բռնության շրջապտույտում պահելու նպատակով:

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերը բացահայտելը և դրանց մասին հայտնելը

- Համաձայն հարցման տվյալների՝ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների մեծ մասը (53 տոկոսը) որևէ մեկին չի հայտնել իր հետ պատահածի մասին: Եթե անգամ երեխաները ինչ-որ մեկին հաղորդել են բռնության մասին, ապա ամենից հաճախ դա եղել է նրանց ընկերը:
- Բացահայտման ամենատարածված խոչընդոտը եղել է այն, որ երեխաները ամաչել են կատարվածի մասին խոսելուց: Դա նկատվել է նաև մասնագետների վարած դեպքերում, երբ ամոթը, հասարակական խարանը և պատվի ու ընտանիքի հեղինակության վերաբերյալ պատկերացումները խոչընդոտել են, որ երեխաները դիմեն օգնության:

- Երեխաները չեն հաղորդում իրենց նկատմամբ կիրառված շահագործման կամ բռնության մասին և չեն դիմում աջակցող ծառայություններին: Այդպես, համաձայն հարցման արդյունքների, վերջին տարում շահագործման և բռնության ենթարկված 43 երեխաներից միայն մեկն է զրուցել սոցիալական աշխատողի հետ: Ոչ ոք չի դիմել աջակցության համար՝ զանգահարելով թեժ-գծին կամ ոստիկանությանը հաղորդում ներկայացնելով:
- Մասնագետների դիտարկմամբ՝ ոստիկանությանը հաղորդում ներկայացնելու հիմնական խոչընդոտներից են գաղտնիության պահպանման հետ կապված մտավախությունը, բռնության մասին հայտնի դառնալու հետևանքով ընտանիքի հեղինակությանը վնաս հասցնելու վախը և արդարադատության գործընթացով անցնելու մտահոգությունը:
- Առաջնային օղակի աշխատողները և արդարադատության ոլորտի մասնագետները նշել են համակարգային և կազմակերպական մի շարք գործոններ, որոնք դժվարացնում են հայտնելու գործընթացը: Դրանց թվում է դեպքերի հայտնաբերման, միջամտության և դրանց մասին հաղորդում ներկայացնելու հստակ կարգավորումների կամ ուղեցույցների բացակայությունը: Հարցազրույցների ընթացքում ընդգծվել են նաև հաղորդում ներկայացնելու պարտավորության պահանջի և դրա կիրառման շուրջ մասնագետների ոչ միանշանակ ընկալումները:
- Որոշ դեպքերի առնչությամբ մասնագետները նշել են, որ դպրոցները հաճախ խուսափում են բռնության մասին հաղորդում ներկայացնելուց դպրոցի հեղինակությանը վնաս չհասցնելու նպատակով: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դրվագների 24 տոկոսի պարագայում (42 դրվագից 10-ում) երեխաները հանցանքը կատարած անձին առաջին անգամ հանդիպել են դպրոցում:
- Մասնագետների գնահատմամբ՝ երեխաների և ընտանիքների՝ բողոք ներկայացնելուց և դատաբժշկական փորձաքննություններին ու իրավական ընթացակարգերին մասնակցելուց խուսափելու միտումը, թերևս, պայմանավորված է սեռական հարաբերության, սեռականության և սեռական բռնության հետ կապված խարանով ու վախով, ինչը դժվարացնում է նման դեպքերի քննությունը արդարադատության համակարգում:

Երեխաների առնչությունը իրավապահ մարմինների, արդարադատության ընթացակարգերի և սոցիալական ծառայությունների հետ

- Համայնքի կողմից խարանի ենթարկվելը, վախն ու ամոթի զգացումը մասնագետների կողմից հիշատակվել են որպես երեխաների և նրանց ընտանիքների համար ծառայություններից արդյունավետ օգտվելու խոչընդոտներ:
- Հոգեկան առողջության հետ կապված խարանը և թյուրընկալումները պատճառ են դարձել, որ երեխաների նկատմամբ շահագործման և բռնության դեպքերում ընտանիքները երկմտել են դիմելու հոգեկան առողջության գծով աջակցության համար:
- Ծառայությունների մատուցման ձևերը տարբեր են՝ կախված տեղանքից, հատկապես երկրի գյուղական կամ հեռավոր բնակավայրերում: Սրա պատճառը, մասամբ, այդ տարածքներում աշխատող հոգեբանների և սոցիալական աշխատողների սակավությունն է:
- Հայաստանում ձեռնարկվել են որոշ դրական քայլեր հանցագործությունների, այդ թվում՝ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման ենթարկված երեխաների համար արդարադատության գործընթացների լավարկման ուղղությամբ: Այդ քայլերից են Բառնահուս մոդելով "Ապահով անկյունների" հիմնումը, Քննչական կոմիտեի կողմից իրականացվող բոլոր քննչական գործողություններին վերապատրաստված հոգեբանների պարտադիր մասնակցությունը, ինչպես նաև արդյունավետ համագործակցությունը դատական հոգեբանների և քննիչների միջև:
- Նշվել են նաև որոշ խոչընդոտներ՝ ներառյալ ոստիկանության հետ սկզբնական շփումներում երեխաների համար նպաստավոր գործելակարգերի պակասը, "Ապահով անկյունների" ոչ բավարար օգտագործումը, քննությունների ձգձգումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ հոգեբանական գնահատումները սահմանափակվում են զուտ երեխայի ցուցմունք տալու ունակության, ոչ թե երեխայի համար շահագործման և բռնության հետևանքների գնահատմամբ:
- Թեև փոխհատուցման մեխանիզմներ առկա են, դրանք լայնորեն չեն կիրառվում այնպիսի խոչընդոտների պատճառով, ինչպիսիք են բարդ ընթացակարգերն ու կողմերի իրազեկվածության պակասը:

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության սոցիալական հետևանքները և հոգեկան առողջությանը հասցվող վնասը

- Ըստ հարցման արդյունքների՝ Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաները գրեթե 12 անգամ ավելի են հակված ինքնասպանության մտքերի ու վարքագծի[3], և նրանց շրջանում 21 անգամ ավելի բարձր է ինքնավնասման ռիսկը, քան այն երեխաների, որոնք չեն ենթարկվել նման բռնության[4]:
- Հայաստանում բռնության ենթարկված երեխաների համար սոցիալական հետևանքները ծանր են: Մասնագետների վարած դեպքերում երեխաները, մինչև անգամ նրանց ընտանիքները, շատ հաճախ մեկուսացվում են և առերեսվում հասարակական խարանի, որն էլ երբեմն երեխաներին բնակության այլ վայր կամ այլ դպրոց տեղափոխելու պատճառ է դառնում:

Սույն զեկույցն ավարտվում է տվյալներից բխող առաջարկությունների շարքով: Դրանք ներառում են կառավարության, իրավապահ մարմինների, արդարադատության և սոցիալական ծառայությունների ոլորտների, համայնքների, ուսուցիչների ու խնամակալների, ինչպես նաև թվային հարթակների և ծառայություն մատուցողների կողմից ձեռնարկվելիք քայլեր: Սեղմագրում ներկայացնելու համար առաջարկությունները չափազանց մանրամասն են, դրանց կարելի է ծանոթանալ սույն զեկույցի 96 էջում:

3. Սույն վերլուծության շրջանակում ինքնասպանության մտքերի և վարքագծի հարաբերական ռիսկերն արձանագրվել են վերջին տարվա ընթացքում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների, ինչպես նաև այդ ժամանակահատվածում բռնության չենթարկված երեխաների շրջանում: Հաշվարկները հիմնված են փոքր ենթախմբերի վրա, և դրանք պետք է մեկնաբանվեն վերապահումով՝ հաշվի առնելով վստահելիության միջակայքերի մեծությունը (5.383, 27.068):
4. Սույն վերլուծության շրջանակում ինքնավնասման հարաբերական ռիսկերն արձանագրվել են վերջին տարվա ընթացքում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների, ինչպես նաև այդ ժամանակահատվածում բռնության չենթարկված երեխաների շրջանում: Հաշվարկները հիմնված են փոքր ենթախմբերի վրա, և դրանք պետք է մեկնաբանվեն վերապահումով՝ հաշվի առնելով վստահելիության միջակայքերի մեծությունը (6.683, 65.691):

ՄԵԹՈԴՆԵՐ

"Վերջ տալ մնասին" հետազոտության մեթոդաբանությունը համադրում է տվյալների հավաքման քանակական և որակական մեթոդները՝ Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության առավել խորքային պատկերացում ձևավորելու նպատակով: Քանակական տվյալները բնութագրում են հայաստանաբնակ երեխաների շրջանում այս հիմնախնդրի տարածվածությունը: Ազգային օրենսդրության և քաղաքականությունների վերլուծությունը, զուգակցված բռնության ենթարկվածների, արդարադատության ոլորտի մասնագետների, առաջնային օղակի աշխատողների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ հարցազրույցների վերլուծությամբ, պատկերացում է տալիս բռնության ենթարկված անձանց աջակցելու համար նախատեսված ֆորմալ համակարգերի և ընթացակարգերի մասին՝ միաժամանակ ապահովելով այն համատեքստը, որտեղ պետք է մեկնաբանվի երեխաների նկատմամբ շահագործումը և բռնությունը, և այն, թե ինչպես են ընտանիքներն ու համայնքներն արձագանքում դրանց:

Հետազոտության միևնույն մեթոդները կիրառվել են բոլոր 12 երկրներում՝ տեղացի հետազոտողների մասնակցությամբ՝ հարմարեցվելով երկրի առանձնահատկություններին: Հետազոտությունը մշակվել և իրականացվել է անվտանգության և էթիկայի պահանջների խստիվ պահպանմամբ: Ընդհանուր առմամբ մշակվել են վեց առանձին, սակայն փոխլրացնող հետազոտական գործողություններ՝ հետևյալ հարցերին պատասխանելու նպատակով.

1. **Ի՞նչ առանձնահատկություններով են բնութագրվում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործմումն ու բռնությունը:**
2. **Ի՞նչ գործոններով են պայմանավորված զոհականացումն ու բռնարարքի իրականացումը:**
3. **Ինչպե՞ս են երեխաները պաշտպանվում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործումից ու բռնությունից, ինչպե՞ս են կանխում և արձագանքում դրանց:**
4. **Ինչպե՞ս են ընտանիքները, ընկերներն ու սոցիալական ցանցերը կանխարգելում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումն ու բռնությունը և արձագանքում դրանց:**
5. **Ինչպե՞ս են կազմակերպությունները (օրինակ՝ իրավապահ մարմինները, արդարադատության ոլորտը, ծառայություն մատուցողները, կառավարությունը, մանկավարժները) կանխարգելում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումն ու բռնությունը և արձագանքում դրանց:**
6. **Ինչպե՞ս են գործող քաղաքականությունն ու օրենսդրությունը կանխարգելում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումն ու բռնությունը և արձագանքում դրանց:**

Իրավական կարգավորումների և քաղաքականության վերլուծություն

Ազգային իրավական և քաղաքական կարգավորումների վերլուծության նպատակն էր՝ վերհանել իրավական բացերը, գնահատել դրանց համապատասխանությունը միջազգային պարտավորություններին, ինչպես նաև բացահայտել տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործմանը և բռնությանը պետական արձագանքի ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Իրավական կարգավորումների և քաղաքականությունների վերլուծությունը մշակվել է ավելի քան 140 ցուցանիշից բաղկացած մանրակրկիտ ստուգաթերթի միջոցով՝ ապահովելով վերլուծության համադրելիություն բոլոր երկրների համար: Միջազգային իրավական ստանդարտների և լավագույն փորձի վրա հիմնված այս գործիքի օգնությամբ գնահատվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են իրավական սահմանումները, քրեականացումը, իրավասությունների շրջանակը, երեխայակենտրոն արդարադատությունը, մասնավոր հատվածի պարտավորություններն ու երեխայի պաշտպանության քաղաքականությունները:

Վերլուծությունն իրականացնելու համար ԷՔՓԱԹ Ինտերնեշնլ-ը տեղացի գործընկերների հետ համագործակցությամբ առանձնացրել է ազգային օրենսդրությունն ու քաղաքականությունները՝ ապահովելով, որ դրանք արտացոլեն գործող իրավակարգավորումները: Դրանք վերլուծվել են ստուգաթերթի միջոցով՝ իրավական բացերը և իրավական կարգավորումների իրականացման դժվարությունները վերհանելու նպատակով՝ միաժամանակ ուսումնասիրելով նախադեպային իրավունքն ու քրեական հետապնդման վերաբերյալ զեկույցները (առկայության դեպքում):

Վերլուծության նախնական տարբերակն անցել է ներքին և արտաքին փորձագիտական գնահատում, այդ թվում վերանայվել է ԷՔՓԱԹ-ի անդամ տեղական կազմակերպությունների և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ազգային գրասենյակների կողմից՝ ապահովելու դրա ճշգրտությունն ու համապատասխանությունն առկա իրողություններին:

Սույն հետազոտության մեթոդների մասին ավելին կարելի է իմանալ այս հղումով:

Տնային տնտեսությունների հարցում՝ 12-17 տարեկանների և նրանց խնամողների շրջանում

Հարցման նպատակն էր՝ անմիջականորեն երեխաներից և նրանց ծնողներից կամ խնամողներից լսել նրանց ինչպես դրական, այնպես էլ բացասական առցանց փորձառության մասին: Հարցաթերթը բաղկացած էր մոդուլներից, որոնց մեծ մասը ներկայացվել և լրացրվել է հարցազրուցավարի օգնությամբ: Ձգայուն հարցերի պարագայում՝ ներառյալ սեռական շահագործման և բռնության վերաբերյալ, հարցվողներն իրենց պատասխաններն անմիջապես մուտքագրել են պլանշետում՝ երաշխավորելու նրանց համար առավել անկաշկանդ միջավայր և գաղտնիություն: Հարցման թիրախային խումբը ներառել է համացանց օգտագործող 12-17 տարեկան երեխաների, որոնք ապրում են մասնավոր (կամ առանձին) տնային տնտեսությունում: Բացի այդ՝ նրանց ծնողներից/խնամակալներից մեկը ևս մասնակցել է հարցմանը՝ անկախ նրա՝ համացանց օգտագործելու կամ չօգտագործելու հանգամանքից: Համացանց օգտագործողներ են համարվել այն անձինք, որոնք հարցմանը նախորդած երեք ամիսների ընթացքում օգտագործել են համացանցը:

Համացանց օգտագործող 12-17 տարեկան ազգաբնակչության ներկայացուցչական հավանականային ընտրանք ապահովելու համար հարցման շրջանակում կիրառվել է պարզ պատահական ընտրանքի մեթոդը՝ համապետական ծածկույթով: Հայաստանում դաշտային աշխատանքների ծածկույթը եղել է 100 տոկոս: "Ծածկույթ" է համարվում ընդհանուր բնակչության այն մասնաբաժինը, որը հարցման ընտրանքում ներառվելու հնարավորություն է ունեցել՝ նկատի առնելով, որ ընտրանքում տեղ գտնելու պարագայում դաշտային աշխատանքը կատարվելու էր իրենց բնակության տարածքում: Տվյալների հավաքումն իրականացվել է 2024 թվականի մայիսից սեպտեմբեր ամիսներին:

Ընտրանքի ձևավորման ժամանակ կիրառվել է եռաստիճան հավանականային կլաստերացված ընտրանքի մեթոդը: Պատասխանելիության ցուցանիշը եղել է 48 տոկոս, իսկ իրագործված ընտրանքը ներառել է 1,002 երեխայի և նրանց 1,002 ծնողներին/խնամակալներին:

Ստորև ներկայացված է ընտրանքի տարիքային և սեռային բաշխվածությունը:

Երեխաների ընտրանքի տարիքային և սեռային բաշխվածությունը

12-14 տարեկաններ	52%
15-17 տարեկաններ	48%
Աղջիկներ	56%
Տղաներ	44%

Ծնողների ընտրանքի տարիքային և սեռային բաշխվածությունը

Մինչև 40 տարեկան	51%
40 տարեկանից բարձր	49%
Կանայք	93%
Տղամարդիկ	7%
Այլ	0.1%

Հետազոտական այս մեթոդի, այդ թվում՝ անձի պաշտպանության ուղեցույցի և սահմանափակումների վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարող եք գտնել այս հղումով:

Հարցազրույցներ մանկության շրջանում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների և երիտասարդների հետ

Հետազոտության այս բաղադրիչի նպատակն էր լսելի դարձնել այն երեխաների ու երիտասարդների (16-24 տարեկան) ձայնը, որոնք մանկության շրջանում ենթարկվել են տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և

բռնության[5]: Հետազոտությունը չի ընդգրկել այն երեխաներին ու երիտասարդներին, որոնք հետազոտության ընթացքում ներգրավված են եղել դատական գործընթացներում: Մշակվել է տրավման հաշվի առնող հետազոտության մոտեցումը, որը տեղայնացվել է հայաստանյան հետազոտողների և իրականացնող գործընկերների հետ խորհրդակցությամբ: Ձևավորվել է երեխաներին ու երիտասարդներին ներգրավելու երկու ռազմավարություն՝ հնարավորություն տալու նրանց կապ հաստատելու կլինիկական հետազոտողի հետ՝ հարցազրույցի միջոցով իրենց փորձառության մասին պատմելու համար.

1. **Մասնագիտական ցանցեր:** Ծառայություն մատուցող կազմակերպությունները տեղեկատվական թերթիկներ և համաձայնության ձևաթղթեր են բաժանել իրենց ցանցերում ընդգրկված երիտասարդների (16-24 տարեկան) շրջանում: Այս տարիքային խմբում փոքրաթիվ էին այն երիտասարդները, որոնք դեռևս անմիջականորեն կապ ունեին ծառայություն մատուցողների հետ և համապատասխանում էին մասնակցության պահանջներին: Չորս երիտասարդներ մասնակցելու ցանկություն հայտնեցին: Այդուհանդերձ, նրանցից միայն մեկը մասնակցության տեղեկացված համաձայնություն տվեց:
2. **Թվային ցանցեր:** Հետազոտության մասին տեղեկությունը տարածվել է հայաստանաբնակ 18-24 տարեկան երիտասարդների շրջանում թվային հարթակների, այդ թվում՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի Facebook-յան և Instagram-յան էջերի միջոցով: Երիտասարդական կազմակերպությունները, ուսանողական խորհուրդներն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները ևս հետազոտության մասին տեղեկությունը տարածել են իրենց ցանցերում ու կառույցներում: Հետազոտության մասին պաստառները հետաքրքրված անձանց ուղղորդել են այն կայքէջ, որտեղ մանրամասն նկարագրված էին հետազոտությունը, մասնակիցների իրավունքները և համաձայնություն տալու գործընթացը: Հետաքրքրված անձինք հրավիրվել են լրացնելու զտիչ հարցաթերթ:

Չնայած մի քանի ամիս տևած ջանքերին և Հայաստանի երիտասարդ բնակչության շրջանում սոցիալական ցանցերով ապահովված 470,000 դիտումներին՝ մասնակցության պահանջներին համապատասխանող միայն մեկ երիտասարդ է որոշել մասնակցել: Հնարավոր է, որ սեռական բռնության հետևանքով տրավման և խարանը, ինչպես նաև գաղտնիության պահպանման նկատմամբ թերահավատությունը խոչընդոտել են մասնակցությունը: Հավաքագրմանն ուղղված այս ջանքերն ընդգծել են մշակութային և համակարգային այն դժվարությունները, որոնք առկա են տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության ենթարկված երիտասարդներին հետազոտություններում ներգրավելու հարցում: Նրանց ձայներն ու փորձառությունը չափազանց կարևոր են՝ լիարժեք հասկանալու, թե այս խնդիրն ինչպիսի ազդեցություն է ունենում մարդկանց վրա Հայաստանում, այդ իսկ պատճառով ազգային մակարդակում հետազոտության համար այս բացը դեռևս էական խնդիր է:

Զեկույցի բոլոր այն մեջբերումները, որտեղ օգտագործված են այս հետազոտության շրջանակում երեխաներից ու երիտասարդներից ստացված տվյալներ, առանձնացված են (Ե) նշումով:

Հետազոտական այս մեթոդի, այդ թվում՝ անձի պաշտպանության ուղեցույցի և սահմանափակումների վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարող եք գտնել այս հղումով:

Հարցազրույցներ առաջնային օղակի աշխատողների հետ

Հետազոտական այս մեթոդի նպատակն էր հասկանալ, թե Հայաստանում առաջնային օղակի աշխատողներն ինչպես են աջակցում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաներին, նաև պարզել, թե համակարգերն ինչպես կարող են ավելի արդյունավետորեն կանխարգելել բռնության այս ձևերը և արձագանքել դրանց: Այն նաև նպատակ ուներ ուսումնասիրելու տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերը վարող առաջնային օղակի աշխատողների փորձը, ինչպես նաև նրանց ընկալումները դրական գործելակերպի և մարտահրավերների վերաբերյալ:

5. Սույն հետազոտությունում "երեխա" և "երիտասարդ" եզրույթները կիրառվում են սույն հետազոտության մասնակիցների նկատմամբ: Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ: Թեև երիտասարդներին բնորոշելու համար համընդհանուր ընդունելի տարիքային խումբ սահմանված չէ, սույն հետազոտությունը հետևում է Միավորված ազգերի կազմակերպության ուղեցույցին՝ երիտասարդ համարելով 15-24 տարեկան անձանց:

Հետազոտության նպատակային խումբը Հայաստանի առաջնային օղակի աշխատողներն էին՝ սոցիալական աշխատողներ, հոգեթերապևտներ և թեժ-գծի անձնակազմը, որոնք ուղիղ աջակցություն կամ կարևոր ծառայություններ են մատուցում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված անձանց: Հետազոտությանը ներգրավվել են առաջնային օղակի աշխատողներ, որոնց կողմից վարվող դեպքերի կամ բուժառուների թվում վերջին 12 ամիսների ընթացքում եղել է առնվազն մեկ երեխա կամ երիտասարդ, որը մանկության տարիներին ենթարկվել է տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության: Հայաստանում այս ժամկետը ավելացվել է մինչև հինգ տարի՝ հաշվի առնելով նման փորձառություն ունեցող առաջնային օղակի աշխատողների փոքր թիվը: Մասնակցելու հրավիրվել էին առաջնային օղակի աշխատողներ, որոնք կարող էին հետազոտողներին ներկայացնել չնույնականացվող դեպք:

Կիսաձևայնացված հարցազրույցներ են անցկացվել վերապատրաստված հետազոտողի միջոցով առաջնային օղակի 19 աշխատողների հետ: Ընտրանքը ներառել է.

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող պետական համակարգերի (օրինակ՝ ճգնաժամային կենտրոնների և ընտանիքի աջակցության կենտրոնների) սոցիալական աշխատողներին, տարածքային կառավարման մարմինները (համայնքային սոցիալական աշխատողներին), ինչպես նաև երեխաներին, ընտանիքներին ու չափահասներին աջակցող հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները).
- Խոցելի բնակչությանն աջակցող մասնագետներին, որոնց աշխատանքն առնչվում է տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների հետ, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին օժանդակող կազմակերպությունները, ԼԳԲՏՔԻ+ խմբերը, թրաֆիքինգի ենթարկված անձինք և մնասի նվազեցմանն ուղղված ծրագրերը:

Հարցազրույցներն իրականացվել են 2024 թվականի մայիսից հոկտեմբեր ամիսներին: Հարցազրույցներում ներգրավված առաջնային օղակի աշխատողներից 17-ը կին էին, 2-ը՝ տղամարդ: Յոթ մասնակից ներկայացնում էր Երևանը, իսկ մյուսներն աշխատում էին մարզերում՝ Արարատի, Շիրակի, Լոռու, Վայոց ձորի, Կոտայքի և Տավուշի:

Ձեկույցի բոլոր այն մեջբերումները, որտեղ օգտագործված են առաջնային օղակի աշխատողներից այս հետազոտության շրջանակում ստացված տվյալներ, առանձնացված են (ԱՕԱ) նշումով:

Հետազոտական այս մեթոդի, այդ թվում՝ անձի պաշտպանության ուղեցույցի և սահմանափակումների վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարող եք գտնել այս հղումով:

Հարցազրույցներ արդարադատության ոլորտի մասնագետների հետ

Հետազոտության այս մեթոդի նպատակն էր հասկանալ, թե Հայաստանի արդարադատության մեխանիզմներն ինչպես են արձագանքում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների կարիքներին՝ պարզելու համար, թե համակարգերն ինչպես կարող են ավելի արդյունավետորեն կանխարգելել դրանք կամ արձագանքել դրանց: Հետազոտությունը նաև նպատակ ուներ ուսումնասիրելու տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերը վարող արդարադատության ոլորտի մասնագետների փորձը, ինչպես նաև նրանց ընկալումները դրական գործելակերպի և մարտահրավերների վերաբերյալ:

Սույն հետազոտության նպատակային խումբը Հայաստանի արդարադատության ոլորտի մասնագետներն էին՝ փաստաբաններ, դատավորներ և քննիչներ: Հետազոտությանը ներգրավվել են արդարադատության ոլորտի մասնագետներ, որոնք վերջին հինգ տարիներին աշխատանքի բերումով անմիջական առնչություն են ունեցել տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի: Մասնակցելու են հրավիրվել արդարադատության ոլորտի մասնագետներ, որոնք կարող էին հետազոտողներին ներկայացնել անանունացված դեպք: Ընթացքի մեջ գտնվող գործերը դուրս են թողնվել՝ արդարադատության համակարգի համար դեպքի ամբողջականությունն ապահովելու նպատակով:

Կիսաձևայնացված հարցազրույցներ են անցկացվել վերապատրաստված հետազոտողի միջոցով 11 իրավաբանների հետ՝ կառավարության, իրավապահ մարմինների, ՀԿ-ների և իրավական ոլորտի անկախ դերակատարների շրջանակից: Նրանց պարտականությունները ներառում

էին տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի քննությունը, քրեական հետապնդումը և իրավական պաշտպանությունը:

Հարցազրույցներն անցկացվել են 2024 թվականի մայիսից հոկտեմբեր ամիսներին: Հարցազրույցներում ներգրավված արդարադատության ոլորտի մասնագետներից 7-ը կին էին, 4-ը՝ տղամարդ:

Զեկույցի բոլոր այն մեջբերումները, որտեղ օգտագործված են արդարադատության ոլորտի մասնագետներից այս հետազոտության շրջանակում ստացված տվյալներ, առանձնացված են (ԱՈՄ) նշումով:

Հետազոտական այս մեթոդի, այդ թվում՝ անձի պաշտպանության ուղեցույցի և սահմանափակումների վերաբերյալ հավելյալ տեղեկություն կարող եք գտնել այս հղումով:

Հարցազրույցներ պետական իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ

Քանակական տվյալների վերլուծություն

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերի վերաբերյալ տվյալները իրավապահ մարմիններից ստացվել են Հայաստանում ԻՆՏԵՐՊՈԼ-ի ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով: Տվյալներ են ստացվել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող տեխնոլոգիական ընկերությունների պարտադիր զեկույցներից, Անհայտ կորած և շահագործվող երեխաների ազգային կենտրոնից (NCMEC), ինչպես նաև մի շարք գործընկեր կազմակերպություններից, այդ թվում՝ համապատասխան ՀԿ-ներից, երեխայի պաշտպանության ոլորտում գործող պետական մարմիններից և ոլորտում պայմնանագրային հիմքով ներգրավված անկախ մասնագետներից և հեռահաղորդակցության ոլորտի մասնավոր հատվածի ներկայացուցիչներից՝ երկրում կատարված համապատասխան հանցագործությունների, հանցանքը կատարած անձանց և տուժողների վարքագծի, հանցագործությանն օժանդակող գործոնների և խոցելիությունների մասին պատկերացումները խորացնելու նպատակով: Տվյալները վերլուծվել են հինգ տարվա՝ 2020-2024 թվականների ժամանակահատվածի համար:

Որակական տվյալների վերլուծություն

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուց բացի՝ ԻՆՏԵՐՊՈԼ-ը տվյալներ է հայցել այս հանցատեսակին ներպետական իրավապահ մարմինների արձագանքելու կարողությունների և պատրաստվածության վերաբերյալ և հարցազրույցներ է անցկացրել ծառայողների հետ: Շեշտը դրվել է մարդկային ռեսուրսների, մասնագիտական սարքավորումների և վերապատրաստումների հասանելիության, քննչական ընթացակարգերի, միջազգային գործընկերության և համագործակցության, ինչպես նաև հիմնական ձեռքբերումների ու մարտահրավերների վրա:

Սույն հետազոտության մեթոդների մասին ավելին կարելի է իմանալ այս հղումով:

Սահմանափակումներ և տվյալների մեկնաբանումը

Սույն զեկույցի եզրահանգումները լիարժեք մեկնաբանելու համար կարևոր է հաշվի առնել հետազոտական գործողությունների և դրանք Հայաստանում իրականացնելու հետ կապված սահմանափակումները:

Տնային տնտեսությունների հարցումն իրականացվել է մասնավոր տնային տնտեսություններում՝ համացանց օգտագործող 12-17 տարեկանների շրջանում: Հարցումը մշակվել էր այնպես, որ ունենա ազգային ներկայացուցչականություն միայն երեխաների նշված ենթախմբի համար, և չի կարող տարածվել Հայաստանի բոլոր երեխաների վրա: Հարցումը միանվագ է, ոչ թե լոնգիտյուդային՝ արտացոլելով հարցմանը մասնակցած 1,002 երեխաների տվյալներն այդ պահի դրությամբ: Թեև "Վերջ տալ վնասին" հետազոտության տվյալներն ընդգծում են երեխաների կյանքում սեռական բռնության և շահագործման և նրանց կյանքի այլ գործոնների միջև փոխառնչությունը, այդուհանդերձ, հնարավոր չէ զուտ հարցման տվյալների հիման վրա դուրս բերել դրանց պատճառահետևանքային կապերը:

Հարցմամբ չի ենթադրվում չափել թվային տեխնոլոգիաների բոլոր այն հնարավոր եղանակները, որոնցով դրանք կիրառվում են երեխաներին շահագործելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու նպատակով: Սեռական շահագործման և բռնության որոշ ձևեր, օրինակ՝ գրումինգը, հատկապես դժվար է չափել, քանի որ կարող են պարունակել երեխաների և բռնարարների միջև բարդ և շարունակական շփումներ: Երեխայի նկատմամբ սեռական բռնության տեսարանների ուղիղ հեռարձակումը նույնպես դժվար է չափել, քանի որ երեխաները կարող են տեղյակ չլինել, որ իրենց նկատմամբ բռնությունը նկարահանվում է, առավել ևս՝ ուղիղ հեռարձակվում:

Ինչպես սեռական բռնության վերաբերյալ այլ հետազոտություններում, այստեղ նույնպես ենթադրվում է, որ ոչ բոլոր դեպքերի մասին է հաղորդվելու՝ մի շարք պատճառներով, այդ թվում՝ անձնական և ցավոտ իրադարձության մասին խոսելու հավանական անհարմարությունը, գաղտնիության և անանունության հետ կապված վախերը, ինչպես նաև սեռական բռնության թեման քննարկելու հետ կապված սոցիալական նորմերն ու տաբուները: Դա նշանակում է, որ ստացված տվյալները, ամենայն հավանականությամբ, թերի են և ամբողջությամբ չեն ներկայացնում պատկերը: Ընտրանքի փոքր ծավալը ևս սահմանափակում է տվյալների հիման վրա վիճակագրական վերլուծության շրջանակը:

Պայմանավորված հետազոտական այս մեթոդի բնույթով՝ **առաջնային օղակի աշխատողների և արդարադատության ոլորտի մասնագետների հետ հարցազրույցները** նպատակ չունեն չափելու Հայաստանում բռնության բոլոր դրսևորումներն ու դրանց տարածվածությունը: Շատ հաճախ ներկայացված տվյալներն արտացոլում են մասնակիցների ընկալումները: Այդուհանդերձ, այս տվյալները կարող են օգնել՝ մեկնաբանելու բռնության այս ձևերը և դրանց դրսևորման եղանակները կոնկրետ համատեքստում: Կարևոր է նաև նշել, որ ֆորմալ աջակցության հանգեցնող կամ արդարադատության համակարգ հասնող դեպքերը բռնության բոլոր դեպքերի փոքր մասն են միայն, և կարող են արտացոլել ավելի լայն իմաստով բռնություն համարվող դեպքերը:

Մանկության շրջանում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված **երեխաների ու երիտասարդների հետ հարցազրույցներ** կազմակերպելը ևս մեծ դժվարություն էր առաջացրել: Չնայած հետազոտության ընթացքում բնակչության այս խմբին ներգրավելու ուղղությամբ ծավալուն և զգայուն ջանքերին՝ նրանցից միայն մեկը համաձայնեց մասնակցելու հարցմանը:

Էթիկական հաստատում

ՅՈՒՆԻՍԵՖ Իննոչենթի-ն "Վերջ տալ վնասին" ծրագրի էթիկական հաստատումը ստացել է էթիկական փորձաքննության գլոբալ ինստիտուցիոնալ խորհրդից՝ Հելս Մեդիա Լաբ-ից (Health Media Lab): Հայաստանում չկար համապատասխան ազգային հանձնաժողով կամ խորհուրդ, որը կվավերացներ հետազոտության էթիկական նկատառումները: Այդուհանդերձ, ազգային համատեքստում մեթոդաբանության կիրառելիությունը երաշխավորելու համար ՅՈՒՆԻՍԵՖ Իննոչենթին-ն ստացել է տեղի ոլորտային փորձագետների կարծիքը:

Ազգային խորհրդակցություններ

2025 թվականի մայիսին տեղի ունեցած ազգային խորհրդակցության ժամանակ Հայաստանի տարբեր բնագավառների՝ ներառյալ կառավարության, իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին խնդրվել է ներկայացնել իրենց կարծիքները "Վերջ տալ վնասին" հետազոտության եզրահանգումների և առաջարկների վերաբերյալ՝ դրանք հայաստանյան իրականության մեջ առավել կիրառելի դարձնելու համար:

Տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված յուրաքանչյուր երեխա ունի իր յուրօրինակ պատմությունը: Ոմանց համար դա կարող է լինել եզակի միջադեպ, մյուսների համար՝ նրանց կյանքում տեղի ունեցող բռնության ավելի լայն իրողությունների մաս:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

"Վերջ տալ մնասին" հետազոտության մեջ գործածված "տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործում և բռնություն" եզրույթը գործածվում է՝ բնութագրելու համար երեխայի սեռական շահագործման և բռնության *ցանկացած* ձև, որը ենթադրում է տեխնոլոգիաների կիրառում: Այս ընդարձակ սահմանումը թույլ է տալիս ճանաչել այն բազմազան և փոփոխվող եղանակները, որոնցով թվային գործիքները, հարթակներն ու բովանդակությունը կարող են օգտագործվել երեխաների սեռական շահագործման և բռնության նպատակով:

Այս համատեքստում տեխնոլոգիան ներառում է համացանցը, սոցիալական ցանցերը, հաղորդագրությունների հավելվածները, առցանց խաղային հարթակներն ու սարքերը, որոնք կիրառվում են պատկերներ, տեսանյութեր կամ այլ բովանդակություն ստեղծելու կամ տարածելու համար: Սահմանումը կախված չէ նրանից, թե ով է բռնություն գործադրողը, ինչպես է իրականացվել բռնությունը, կամ արդյոք երեխան գիտակցում է, որ իր հետ տեղի ունեցողը բռնարարք է: Այն նաև կախված չէ երեխայի վարքից՝ տեղի ունեցած սեռական շահագործումից և բռնությունից առաջ, բռնության ընթացքում կամ դրանից հետո:

Տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված յուրաքանչյուր երեխա ունի իր յուրօրինակ պատմությունը: Ոմանց համար դա կարող է լինել եզակի միջադեպ, մյուսների համար՝ նրանց կյանքում տեղի ունեցող բռնության ավելի լայն իրողությունների մաս: Սույն զեկույցում տեղ գտած միջադեպերը կարող են կապված լինել բռնարար հարաբերությունների, մարդկանց թրաֆիքինգի, դպրոցում, ընտանիքում կամ համայնքում կատարվող բռնության կամ բռնության այլ ձևերի հետ, որոնք չեն ընդգրկվել սույն հետազոտության շրջանակում:

Բռնարարները կարող են օգտագործել թվային հարթակները՝ իրենց արդեն ծանոթ երեխաներին մանիպուլյացիայի ենթարկելու կամ սպառնալու համար, ինչպես նաև նոր զոհեր գտնելու նպատակով: Տեխնոլոգիան սեռական շահագործումն ու բռնությունը խթանում է տարբեր ձևերով. որոշ դեպքերում այն սահմանափակվում է թվային միջավայրով, որոշ դեպքերում էլ շարունակում է առերես բռնությունը: Լինում են նաև դեպքեր, երբ բռնությունը սկսվում է առցանց, ապա վերածվում ֆիզիկական շփման:

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումը և բռնությունը պայմանավորված են մի շարք այնպիսի գործոններով և զարգացումներով, որոնք դժվար է արձանագրել: Դրանց թվում են ուժային անհավասարակշռությունը, սոցիալական ինքնությունը և սոցիալական, գենդերային, մշակութային և կրոնական նորմերն ու արժեքները: Այս զարգացումները միշտ չէ, որ տեսանելի են տվյալներում, սակայն չափազանց կարևոր են՝ հասկանալու համար, թե սեռական շահագործումն ու բռնությունն ինչպես են տեղի ունենում և ինչպես են անդրադառնում երեխաների վրա:

Այս ամենը կարևոր է հաշվի առնել սույն զեկույցն ընթերցելիս: Առանց նկատի առնելու այն համատեքստը, որտեղ բռնությունը ծագում է, առկա է խնդիրը չափազանց պարզեցնելու վտանգ: Միայն առանձին դեպքերն ու վիճակագրությունը դիտարկելով՝ հնարավոր է անտեսել հասարակության այն ուժերը, որոնք հնարավոր են դարձնում սեռական շահագործումն ու բռնությունը, կամ թույլ են տալիս, որ դրանք մնան չբացահայտված և չհաղորդված: Հարցումների և հարցազրույցների ժամանակ երեխաների հայտնած տեղեկություններն արտացոլում են այն, ինչ նրանք հարմար են գտնում բացահայտելու տվյալ պահին: Դա նշանակում է, որ խնդրի ամբողջական ծավալը, թերևս, ավելի մեծ է, քան ներկայացված է սույն զեկույցում:

Այնուամենայնիվ, սույն զեկույցում ներկայացված եզրահանգումները մեծ քայլ են Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման ու բռնության մեկնաբանման գործում: Այն ներկայացնում է խնդրի նրբերանգները՝ հիմնված երեխաների ու երիտասարդների, ինչպես նաև նրանց աջակցող մասնագետների անձնական փորձի վրա:

Ընտանիքին խայտառակելու սպառնալիքով բռնարարները ճնշում են գործադրել երեխայի վրա, որպեսզի նա շարունակի շփումը և նոր սեքսուալ բնույթի լուսանկարներ ուղարկի.

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեխաների կողմից համացանցի օգտագործման մասին պաշտոնական տվյալները հաճախ սակավ են: Այս բացը լրացնելու նպատակով "Վերջ տալ վնասին" ծրագրի շրջանակում տնային տնտեսություններում անցկացվող հարցման միջոցով հավաքվել են երեխաների կողմից համացանցի օգտագործման վերաբերյալ հիմնական ցուցանիշները:

Երեխաների համար ավելի ապահով և հաճելի թվային միջավայր ստեղծելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչպես են նրանք օգտվում համացանցից, կարողանում են կանոնավոր օգտվել, ինչ են անում առցանց տիրույթում, որքանով են ծնողները ներգրավված դրանում: Այդուհանդերձ, (տեխնոլոգիաների կիրառմամբ) երեխայի սեռական շահագործման և բռնության կանխարգելումը չի վերաբերում միայն նրան, թե երեխաներն ինչով են զբաղվում առցանց տիրույթում: "Վերջ տալ վնասին" հետազոտության տվյալները հետևողականորեն ցույց են տալիս, որ երեխաների նկատմամբ առցանց տիրույթում և/կամ առերես բռնություն գործադրելու համար բռնարարները գործում են ըստ իրավիճակի՝ կիրառելով հարկադրանք և մանիպուլյացիա՝ միաժամանակ օգտվելով առկա սոցիալական և գենդերային անհավասարությունից, կնատյացությունից, աջակցության պատշաճ ցանցերի բացակայությունից և պաշտպանության համակարգերում առկա բացերից:

Ուստի կանխարգելման ցանկացած ջանք պետք է ուղղված լինի ոչ միայն պարզելուն, թե երեխաներն ինչ են անում (կամ ինչ պետք է անեն) առցանց, այլ դրանից անդին, այլապես կարող ենք հանգել զոհին մեղադրելու կամ երեխաներին իրենց իսկ շահագործման և բռնության մեջ որպես մեղսակցի վերաբերվելուն, ինչի մասին վկայում է սույն զեկույցը: Փոխարենը, կանխարգելումը պահանջում է համակողմանի մոտեցում, որն ուղղված կլինի բռնարարքը խոչընդոտելուն և այն նորմերի, արժեքների ու անհավասարությունների վերացմանը, որոնք թույլ են տալիս, որ բռնարարները սեռական շահագործման կամ բռնության ենթարկեն երեխաներին:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ 12-17 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ



n = 1,280 տնային տնտեսություններ

ՀԱՄԱՑԱՆՑ ՄՏՆԵԼՈՒ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ՍԱՐՔԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ 12-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ*

n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ
*Պատասխանի բազմակի տարբերակներով հարց

ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ 12-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ*



n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄ ԵՆ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ԱՌՆՎԱԶՆ ՇԱԲԱԹԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ



n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ

ՀԱՄԱՑԱՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ՎԱՅՐԵՐԸ 12-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ



n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ

ՀԱՄԱՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ 12-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ

*Այն երեխաների տոկոսը, որոնք պատասխանում են, որ "հիմնականում ճիշտ է" կամ "շատ ճիշտ է", որ իրենք գիտեն առցանց անել հետևյալը

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ 12-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՍԵՌԻ

91% 86%
Ես գիտեմ, թե երբ է պետք մարդկանց հեռացնել իմ կոնտակտների ցանկերից

85% 81%
Ես գիտեմ, թե իմ և իմ ընկերների որ նկարներով կիսվեմ առցանց

73% 77%
Ես ինտերնետի մասին ավելի շատ բան գիտեմ, քան իմ ծնողը/խնամողը/խնամակալը

76% 69%
Ես գիտեմ, թե ինչպես խմբագրել առկա թվային պատկերները, երաժշտությունը և տեսանյութերը*

73% 73%
Ես գիտեմ, թե ինչպես արգելափակել ելնող պատուհանի անցանկալի հաղորդագրությունները կամ գովազդերը

71% 70%
Ես գիտեմ, թե ինչպես առցանց որոնումների համար ընտրել լավագույն բանալի-բառերը

66% 70%
Ես գիտեմ, թե ինչպես փոխել իմ գաղտնիության կարգավորումները

49% 56%
Ես գիտեմ, թե ինչպես հաղորդել սոցիալական ցանցերում վնասակար բովանդակության մասին

40% 51%
Ես գիտեմ, թե ինչպես ստուգել՝ արդյոք կայքը վստահելի է*

n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ

* Վիճակագրորեն նշանակալի է՝ ըստ սեռի (p<0.05)

ՀԱՄԱՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ 12-17 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

86% 91%
Ես գիտեմ, թե երբ է պետք մարդկանց հեռացնել իմ կոնտակտների ցանկերից*

77% 91%
Ես գիտեմ, թե իմ և իմ ընկերների որ նկարներով կիսվեմ առցանց*

64% 85%
Ես ինտերնետի մասին ավելի շատ բան գիտեմ, քան իմ ծնողը/ խնամողը/ խնամակալը*

67% 78%
Ես գիտեմ, թե ինչպես խմբագրել առկա թվային պատկերները, երաժշտությունը և տեսանյութերը*

64% 82%
Ես գիտեմ, թե ինչպես արգելափակել ելնող պատուհանի անցանկալի հաղորդագրությունները կամ գովազդերը*

69% 73%
Ես գիտեմ, թե ինչպես առցանց որոնումների համար ընտրել լավագույն բանալի-բառերը

58% 78%
Ես գիտեմ, թե ինչպես փոխել իմ գաղտնիության կարգավորումները

42% 63%
Ես գիտեմ, թե ինչպես հաղորդել սոցիալական ցանցերում վնասակար բովանդակության մասին*

38% 52%
Ես գիտեմ, թե ինչպես ստուգել՝ արդյոք կայքը վստահելի է*

12-14 տարեկաններ ■ 15-17 տարեկաններ

n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ

* Վիճակագրորեն նշանակալի է՝ ըստ սեռի (p<0.05)

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐԸ 12-17 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ



n = 1,002 համացանց օգտագործող 12-17 տարեկան երեխաների ծնողներ/խնամողներ
* Խնամող/խնամակալների ընտրանքում տղամարդկանց համամասնությունը փոքր է (7%): Այս արդյունքները պետք է մեկնաբանել վերապահումով:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾՆՈՂՆԵՐՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԻՐԵՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ*

Այն երեխաների տոկոսը, որոնք նշել են, որ դա "երբեմն", "հաճախ" կամ "շատ հաճախ" այդպես է



n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ
* Ըստ հարցված 12-17 տարեկան երեխաների

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԾՆՈՂՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԻՐԵՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ*



n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ
* Ըստ հարցված 12-17 տարեկան երեխաների

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԾՆՈՂՆԵՐԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ և ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ԱՋԱԿՑԵԼՈՒ և ՆՐԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:



n = 1,002 համացանց օգտագործող երեխաներ

* Վիճակագրորեն նշանակալի է՝ ըստ սեռի (p<0.05

ՈՐՏԵՂԻ՞Ց ԾՆՈՂՆԵՐԸ *ԿՑԱՆԿԱՆԱՅԻՆ* ՍՏԱՆԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԻՐԵՆՑ ԵՐԵԽԱՅԻՆ ՕԳՆԵԼ և ԱՋԱԿՑԵԼ ՀԱՄԱՑԱՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ և ԻՆՉՊԵՍ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՆՐԱՆ:



n = 1,002 համացանց օգտագործող 12-17 տարեկան երեխաների ծնողներ/խնամողներ

* Պատասխանի բազմակի տարբերակներով հարց

1. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ և ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում հարցված երեխաների հինգ տոկոսը մեկ տարում ենթարկվել է տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության այս տեսակներից որևէ մեկին: Տարածելով այս ցուցանիշը համացանց օգտագործող 12-17 տարեկան երեխաների ընդհանուր թվի վրա՝ ստացվում է, որ մեկ տարում շուրջ 9,000 երեխա ենթարկվել է նշված վնասի ձևերից որևէ մեկին: Երեխաների տոկոսը, որոնք նշել են, որ անցած տարվա ընթացքում նրանց հետ պատահել է հետևյալներից որևէ մեկը:

Հիմքը՝ Հայաստանում համացանց օգտագործող 12-17 տարեկան 1,002 երեխա

1.1 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ և ԲՌՆՈՒԹՅԱՆ ԻՆՉ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՆ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում հարցված երեխաների 5 տոկոսը նշել է, որ հարցմանը նախորդած տարվա ընթացքում ենթարկվել է 20 էջում նկարագրված բռնարարքներից առնվազն մեկին:

Նրանցից (կամ 43 երեխաներից, որոնցից 24-ը՝ աղջիկ, 19-ը՝ տղա) 13-ը նշել է, որ ենթարկվել է վերը թվարկված մեկից ավելի բռնարարքի, մինչդեռ մյուս 30-ը ենթարկվել էր բռնության ձևերից մեկին: Ըստ հարցման տվյալների՝ Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ցուցանիշերը հարցված երեխաների շրջանում նույնն է եղել՝ անկախ տարիքից, սեռից, բնակության վայրից (քաղաք կամ գյուղ), ինչպես նաև դպրոց հաճախելու կամ չհաճախելու հանգամանքից: Սույն վերլուծության մեջ ընդգրկված երեխաների փոքր թիվը ցույց է տալիս, որ վերլուծության արդյունքները հարկ է մեկնաբանել վերապահումով: Այնուամենայնիվ, տվյալները կարող են կասկածի տակ դնել այն ընկալումը, թե տղաները խոցելի չեն բռնության նկատմամբ: Դա նաև հիշեցնում է, որ թեև երեխայի սեռը, տարիքը կամ գենդերային ինքնությունը կարող են պայմանավորել բռնության դրսևորման կամ բռնարարի կողմից երեխային բռնության ենթարկելու ձևերը, կանխարգելման և արձագանքման մեխանիզմները չպետք է բացառեն կամ անտեսեն երեխաներին նրանց տարիքի, գենդերի կամ բնակության վայրի պատճառով:

Ամենատարածված բռնարարքը, որին երեխաները ենթարկվել են, իրենց կամքին հակառակ սեռական բնույթի նկարներ դիտելն է (3 տոկոս), ինչպես նշված է x էջի ինֆոգրաֆիկայում: Թեև առաջնային օղակի աշխատողները և արդարադատության ոլորտի մասնագետները բարձրաձայնել են Հայաստանում երեխաների նկատմամբ կիրառվող բռնության զանազան դրսևորումների մասին, նրանց կողմից վարվող տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության ամենատարածված դրսևորումները եղել են գրուումինգը և սեռական բնույթի շանտաժը: Այդ իսկ պատճառով, սույն գլխում ներկայացված որակական տվյալներում առանձնակի կընդգծվեն հայաստանյան մասնագետների ներկայացրած սեռական շանտաժի և գրուումինգի դեպքերին բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ բռնարարների գործելակերպը:

Ինչպես հասկանալ տվյալները

Հայաստանում անցկացված հարցմանը մասնակից երեխաների 5 տոկոսը (43 երեխա) հայտնել է, որ վերջին տարում ենթարկվել է տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության առնվազն մեկ դրսևորման: Որոշ դեպքերում նույն երեխան ենթարկվել էր բռնության մի քանի դրսևորման: Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցած 43 երեխաները ենթարկվել են տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության **83 դրվագի:** Բռնության այդ 83 դրվագները հիմք են դարձել սույն զեկույցում տեղ գտած վերլուծության մեծ մասի համար:

Արդյունքներն ընթերցելիս կարևոր է հաշվի առնել, որ Հայաստանում այս խնդրի իրական ծավալը շատ ավելի մեծ է, մասամբ՝ բացահայտման և դրանց մասին հայտնելու ցածր ցուցանիշերի պատճառով: Սույն զեկույցի տարբեր հատվածներում ծառայություն մատուցողները և արդարադատության ոլորտի մասնագետները հետևողականորեն ներկայացրել են տուժողին մեղադրելու վարվելակերպն ու սոցիալական խարանը, որոնք կարող են ազդել երեխայի՝ բռնությունը վերապրելու փորձառության և այդ բռնությանը հաջորդող իրադարձությունների վրա, այդ թվում՝ դեպքերը բացահայտելու և օգնության դիմելու առումով: Այս համատեքստում հարցված երեխաները գուցեև բավարար չափով հարմարավետ չեն զգացել պատմելու իրենց վերապրածի մասին: Դրանով կարող է բացատրվել նաև այն, որ երիտասարդներից քչերն էին համաձայնում մասնակցել հարցազրույցներին: Սա դժվարացնում է Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների և երիտասարդների փորձառությունը լիարժեք հասկանալը:

1.2 ՈՐՏԵՂ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Սեռական շահագործումն ու բռնությունը վիրտուալ և ֆիզիկական տարածքներում

Երեխաների հետ շփման միջոցով սեռական շահագործումը և բռնությունը խթանելու մեջ թվային տեխնոլոգիաների դերը գնալով ավելի ակնհայտ է դառնում: Հարցված մասնագետները և երիտասարդը նկարագրել են մի շարք դեպքեր, երբ առցանց շփումներին հաջորդել են առերես հանդիպումները, որոնց ժամանակ էլ երեխան ենթարկվել է սեռական բռնության: Օրինակ՝ ծառայություն մատուցող մասնագետը նշել էր մի դեպք, երբ բռնարարը երիտասարդի հետ առցանց շփումներն ու հանդիպումներն օգտագործել էր՝ համոզելու համար, թե սիրահարված է նրան: 16-ամյա աղջիկը համաձայնել էր հանդիպել չափահաս բռնարարի հետ, որը, իր կարծիքով, իրեն հասակակից էր: Առերես հանդիպման ժամանակ երեխան ենթարկվել էր սեռական բռնության:

Այդուհանդերձ, եղել են նաև դեպքեր, երբ այդ ամենը տեղի է ունեցել հակառակ հերթականությամբ: Օրինակ՝ դեպքերից մեկում երիտասարդ տղան մտել էր իր դասընկերուհու տուն: Նա գաղտնի նկարահանել էր աղջկան մերկ վիճակում, ապա տեսագրությունն առցանց ուղարկել իր ընկերներին: Մեկ այլ դեպքում մայրը բռնության էր ենթարկել իր երեխաներին և ստեղծել երեխայի սեռական բռնության մասին նյութ, որն այնուհետև տարածել էր: Այս օրինակները ցույց են տալիս, թե տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումն ու բռնությունը ինչպես կարող են տեղի ունենալ թե՛ առցանց, թե՛ ֆիզիկական տիրույթներում, և թե ինչպես են բռնության ընթացքում դրանք փոխակերպվում:

Պարզաբանում. երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերը Հայաստանի օրենսդրությունում

Իրավական տեսանկյունից վերը ներկայացված երկու դեպքերը ակնհայտորեն պարունակում են երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության նյութերի պատրաստումը, որը Հայաստանի օրենսդրությամբ սահմանված է որպես նյութ, որտեղ երեխան պատկերված է "բացահայտ սեքսուալ բնույթի իրական կամ նմանակված գործողություն կատարելիս" կամ սեռական շարժառիթով երեխայի սեռական օրգանը ցուցադրելիս[6]: Հետևաբար, նկարագրված դեպքերը համարվում են հանցանք՝ համապատասխան ՀՀ քրեական օրենսգրքի, որը, ի թիվս այլ արարքների, քրեականացնում է նման նյութեր ստեղծելը, տարածելը, ձեռք բերելը, մատչելի դարձնելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հասանելիություն ձեռք բերելը կամ համակարգչում, համակարգչային համակարգում կամ համակարգչային ցանցում պահպանելը կամ մանկական պոռնոգրաֆիա դիտելը: Նման արարքների համար նախատեսված է ազատազրկում երեք տարի ժամկետով, կամ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում ազատազրկում՝ հինգ տարի ժամկետով[7]: Երկրորդ օրինակում մայրը, որպես երեխայի խնամող, կարող է պատժվել մինչև ութ տարի ազատազրկմամբ՝ երեխայի նկատմամբ սեռական բռնություն պատկերող նյութ պատրաստելու նպատակով իր երեխաներին շահագործելու համար:[8]

Թեև իրավական համակարգը նախատեսում է վերը նշված հանցանքների քրեական հետապնդում, օրենսդրության մեջ գործածված եզրույթաբանությունը հրատապ ուշադրություն է պահանջում, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքում դեռևս գործածվում է "մանկական պոռնոգրաֆիա" հնացած եզրույթը: Այս արտահայտությունը թեև դեռևս գործածվում է բազմաթիվ իրավական համակարգերում, այն պատշաճ չէ և ապակողմնորոշող է, քանի որ ենթադրում է, որ երեխայի նկատմամբ սեռական բռնություն պատկերող տեսագրությունները կամ պատկերները պարզապես պոռնոգրաֆիայի տեսակ են: Սա կարող է նպաստել երեխաների նկատմամբ սեռական բռնություն և/կամ սեռական շահագործում համարվող գործողությունների ծանրության նվազեցման, մեղմացման կամ, մինչև անգամ, օրինականացման: Հետևաբար դրա փոխարեն հարկավոր է կիրառել "երեխայի նկատմամբ սեռական բռնություն պատկերող նյութեր" եզրույթը:[9]

6. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 300-5 հոդված:
7. Նույն տեղում, 300-2, 300-3, 300-4 հոդվածներ:
8. Նույն տեղում, 239-1, 239-2 հոդվածներ:
9. Interagency Working Group on Sexual Exploitation of Children, *Terminology Guidelines for the Protection of Children from Sexual Exploitation and Sexual Abuse: Second Edition*, ECPAT International, Bangkok, 2025 (Երեխաների սեռական շահագործման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, *Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու տերմինաբանության ուղեցույց. Երկրորդ հրատարակություն*, ԷՔՓԱԹ Ինտերնեշնլ, Բանգկոկ, 2025 թ.):

Սեռական շահագործումն ու բռնությունը սոցիալական ցանցերում և առցանց խաղային հարթակներում

Սոցիալական ցանցերը և առցանց խաղային հարթակները շարունակում են դերակատարություն ունենալ երեխաների սեռական շահագործման և բռնության հարցում[10]: Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի 69 տոկոսը տեղի է ունեցել սոցիալական ցանցերում, իսկ 9 տոկոսը՝ առցանց խաղային հարթակներում: Դեպքերի մեծ մասում բռնարարի հետ առաջին շփումը տեղի է ունեցել առցանց: Մասնավորապես, հարցման տվյալներում *հաճախ է նշվում երեխաների հետ սկզբնական կապ հաստատելու նպատակով* նման առցանց հարթակների լայնորեն օգտագործումը. սեռական շահագործման և բռնության դրվագների 55 տոկոսում (42 դրվագից 23-ում) բռնարարը երեխայի հետ առաջին անգամ կապ հաստատել է առցանց տիրույթում:

Ծառայություն մատուցող և արդարադատության ոլորտի մասնագետների կարծիքով բռնարարներն օգտվում են առկա հնարավորություններից և կիրառում ցանկացած "ակտիվ և նորաձև" հարթակ՝ երեխաներին թիրախավորելու համար: Օրինակ՝ արդարադատության ոլորտի մասնագետներից մեկը նկատել է, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության գործադրման մեթոդները զարգանում են սոցիալական ցանցերի հարթակների հետ զուգընթաց. "Հիմա դա Instagram-ն է, Telegram-ը և որոշ այլ հարթակներ, և մինչև անգամ Viber-ն ու Signal-ը, ամեն հնարավորություն կարող է օգտագործվել: Դա պարզապես մեթոդ է, այսինքն՝ կապ չունի, թե ինչպիսի ծրագիր [հարթակ] է այն" (ԱՈՄ):

Հայաստանում համացանցից օգտվող 12-17 տարեկանների շրջանում ամենատարածված սոցիալական ցանցերը և ակնթարթային հաղորդագրությունների հավելվածները YouTube-ն ու Viber-ն են, սակայն Instagram-ը, WhatsApp-ը, Snapchat-ը, TikTok-ը, Facebook-ն ու Telegram-ը նույնպես օգտագործվում են երեխաների մեծամասնության կողմից (տե՛ս գծապատկերը 1):[11] Հարցման տվյալների համաձայն՝ ամենատարածված սոցիալական ցանցերի հարթակները, որտեղ երեխաները **ենթարկվում են սեռական շահագործման կամ բռնության,** Instagram-ն ու Snapchat-ն են (26 դրվագ՝ յուրաքանչյուրում): Դրանց հաջորդում է TikTok-ը (13), YouTube-ը (9) և Telegram-ը (7): Չնայած համեմատաբար լայն տարածվածությանը՝ Facebook-ը և WhatsApp-ը հազվադեպ են նշվել որպես հավելվածներ, որտեղ երեխաները Հայաստանում ենթարկվել են սեռական շահագործման և բռնության:

Գծապատկեր 1. Երեխաների կողմից Հայաստանում օգտագործվող սոցիալական ցանցերը և խաղային հավելվածները



Հիմքը՝ Հայաստանում ինտերնետից օգտվող 12-17 տարեկան 1,002 երեխա

10. UNICEF Innocenti – Global Office of Research and Foresight, *Disrupting Harm Data Insight 7: The role of social media in facilitating online child sexual exploitation and abuse*, Safe Online, New York, 2023 (ՅՈՒՆԻՍԵՖ Իննոչենթի - Հետազոտությունների և կանխատեսումների գլոբալ գրասենյակ, *"Վերջ տալ վնասին" հետազոտության տվյալների ամփոփում 7. Սոցիալական ցանցերի դերը երեխայի սեռական շահագործումը և բռնությունը խթանելու գործում,* Safe Online, Նյու Յորք, 2023):
11. 2024 թ. սեպտեմբերի դրությամբ, երբ հարցումն իրականացվել է:

1.2 ՈՐՏԵՂ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրենց վարած դեպքերի մասին խոսելիս մասնագետները հետևողականորեն նշել են Facebook-ն ու Instagram-ը՝ որպես հարթակներ, որտեղ բռնարարներն առաջին անգամ կապ են հաստատել երեխաների հետ: TikTok-ը մասնագետների կողմից նշվել է առնվազն մեկ դեպքի առնչությամբ, այն լայնորեն չի հիշատակվում: Odnoklassniki-ի (OK.ru) և Skype-ի[12] նման հարթակները, որոնք տարածված էին հինգ կամ ավելի տարի առաջ, ավելի քիչ են հիշատակվել մասնագետների կողմից: Մասնակիցները նաև հիշատակել են տեսակապի հավելվածների կիրառումը՝ որպես երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և բռնությունը ուղիղ հեռարձակելու միջոց, սակայն չեն կարողացել նշել, թե որ հարթակներն են կիրառվել:

Պարզաբանում. Երեխայի նկատմամբ սեռական բռնության ուղիղ հեռարձակումը հայաստանյան օրենսդրությունում

Անկախ օգտագործվող հարթակից՝ հարկ է նշել, որ Հայաստանի օրենսդրությունը հատուկ դրույթներ չի նախատեսում երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության ուղիղ հեռարձակման վերաբերյալ: Թեև երեխայի նկատմամբ սեռական բռնություն պարունակող նյութեր պատրաստելը և դրանք մատչելի դարձնելը արգելող իրավական դրույթները բավականաչափ լայն են և կարող են կիրառվել նման արարքի նկատմամբ[13], օրենսդրական բարեփոխումները կօգնեին վերացնելու մեկնաբանությունների երկիմաստությունը: Անշուշտ, "երեխայի նկատմամբ սեռական շահագործում և բռնություն պարունակող նյութի" ներկայիս սահմանումը կենտրոնացած է "նյութ" հասկացության վրա[14], որը կարող է մասնագետների համար հարուցել անորոշություն, թե ներկայիս օրենսդրությունը որքանով է տարածվում իրական ժամանակում ուղիղ հեռարձակմամբ և, թերևս, չտեսագրվող կամ գոյություն չունեցող ֆայլի տեսքով բռնության դեպքերի վրա:

Նմանապես հստակ չէ, թե որքանով է երեխային տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով "մանկական պոռնոգրաֆիայի" դրդելու կամ ներգրավելու համար պատիժ նախատեսող դրույթը (որը հանգեցնում է մինչև ութ տարի ժամկետով ազատազրկման)[15] տարածվում ուղիղ հեռարձակմամբ բռնության դեպքերի վրա: Այս անորոշությունը մասամբ պայմանավորված է համապատասխան դրույթի ձևակերպման մեջ կիրառված լայն եզրույթաբանությամբ, որի առավել հստակեցումը օգտակար կլիներ նման դեպքերն ակնհայտորեն ներառելու համար: Հաշվի առնելով երեխայի սեռական շահագործման և բռնության խթանման և կիրառման նպատակով ուղիղ հեռարձակման տեխնոլոգիաների գնալով ավելացող կիրառությունը՝ հարկավոր է ընդունել հատուկ օրենսդրություն, որը հստակ կտարբերակի նման վարքագիծն արդեն իսկ սահմանված հանցագործություններից՝ թույլ տալով առավել հստակ դասակարգել այն և հավաքել ավելի ճշգրիտ տվյալներ դրա տարածվածության վերաբերյալ:

Մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում ի հայտ են բերվել դեպքեր, երբ *բռնարարքը սկսվել է մեկ հարթակում, ապա փոխադրվել մեկ այլ հարթակ*: Օրինակ՝ մասնագետները նշել են, որ Facebook Messenger-ը և Instagram Direct-ը կիրառվել են մասնավոր զրույցների համար, որտեղ բռնարարները ձեռք են բերել երեխաների վստահությունը կամ մանիպուլյացիայի են ենթարկել նրանց: Շփումների զարգացմանը զուգընթաց բռնարարներն անցնում են ավելի փակ հարթակներ, ինչպիսիք են Telegram-ը, Snapchat-ը և WhatsApp-ը՝ շփումը առանձին շարունակելու համար: Հարցման տվյալներով՝ սոցիալական ցանցերի միջոցով տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դրվագների 37 տոկոսում (57 դրվագից 21-ում) կիրառվել են սոցիալական ցանցերի մի քանի հարթակներ, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ դա սովորական գործելակերպ է բռնարարների համար:

12. Հարցազրույցներն անցկացվել են նախքան 2025 թ. մայիսին Skype-ի գործունեության դադարեցումը:
13. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 300-2 հոդված:
14. Նույն տեղում, 300-5 հոդված:
15. Նույն տեղում, 300-5 հոդված:

Պարզաբանում. տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի բացահայտումները և ուղղորդումները միջազգային մակարդակում

Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող Անհայտ կորած և շահագործվող երեխաների ազգային կենտրոնի (NCMEC) կողմից մշակված և տարածված հաղորդումները, որոնք հայտնի են CyberTip անվանումով, կարևոր ցուցիչներ են, որ կարող են որոշակի պատկերացում տալ այս կամ այն երկրում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության վերաբերյալ:

ԱՄՆ-ի օրենսդրությունը ԱՄՆ-ում էլեկտրոնային ծառայություն մատուցողներից (այսինքն՝ տեխնոլոգիական այնպիսի ընկերություններից, ինչպիսիք են սոցիալական մեդիաների հարթակները) պահանջում է NCMEC-ին հայտնել տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության կասկած հարուցող դեպքերի մասին: Այս հաղորդումների մեծ մասում անդրադարձ կա Ամերիկայի Միացյալ Նահանգներից դուրս գտնվող օգտատերերի կողմից երեխայի նկատմամբ սեռական շահագործում և բռնություն պարունակող նյութերի՝ սոցիալական ցանցերի հարթակ վերբեռնմանը: Երեխայի նկատմամբ սեռական շահագործում և բռնություն պարունակող նյութերի վերբեռնման մասին աշխարհագրական ցուցանիշերը կիրառվում են հաղորդումները համապատասխան երկրին և իրավապահ մարմնին ուղղորդելու նպատակով:

Ստորև բերված գծապատկերը վերաբերում է Հայաստանին առնչվող CyberTip հաղորդումների թվին: Ինչպես կարելի է տեսնել, հաղորդումների թիվը համեմատաբար կայուն է եղել 2019-2022 թվականների ժամանակահատվածում: Այդուհանդերձ, 2023 թվականին կատարվել է Հայաստանին առնչվող 11,058 CyberTip հաղորդում, որոնք մանրամասն ներկայացնում են տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության կասկած հարուցող դեպքերը:

Գծապատկեր 2. Հայաստանում երեխայի սեռական շահագործման և բռնության կասկած հարուցող դեպքերի մասին CyberTip հաղորդումների թիվը



Աղբյուրը՝ Անհայտ կորած և շահագործվող երեխաների ազգային կենտրոն (NCMEC)

Կարևոր է ընդունել, որ այս հաղորդումները ցույց չեն տալիս այս կամ այն երկրում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության ընդհանուր պատկերը, մասնավորապես այն պատճառով, որ նման դեպքերի մասին NCMEC-ին հայտնելու իրավական պահանջ ներկայացված է միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող էլեկտրոնային ծառայություններ մատուցողներին: Այնպիսի երկրներում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ հիմնական լեզուն անգլերենը չէ, և որտեղ լայնորեն օգտագործվում են նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներից դուրս գործող էլեկտրոնային ծառայություններ մատուցողներ, այս հաղորդումները չեն արտացոլում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության ամբողջ ծավալը:

1.2 ՈՐՏԵՂ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

NCMEC-ին ներկայացված հաղորդումների թվի աճը միշտ չէ, որ ենթադրում է դեպքերի թվի աճ. դա կարող է պայմանավորված լինել տարբեր արտաքին և համակարգային գործոններով: 2023 թվականին CyberTip հաղորդումների կտրուկ աճը կարող է հետևյալ գործոնների հետևանք լինել.

- **Հայտնաբերման բարելավում.** Meta-ի և Google-ի նման հարթակները բարելավել են ԱԲ-ի վրա հիմնված երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության նյութերի հայտնաբերումը: Հայաստանյան հաստատություններն ու ՀԿ-ները, թերևս, նույնպես ավելի արդյունավետ են համագործակցում և բարձրացնում հանրային իրազեկվածությունը:
- **Քաղաքականության փոփոխություններ.** Հայաստանը գործարկել է ավելի կուռ օրենսդրություն տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության վերաբերյալ՝ բարելավելով դեպքերի հայտնաբերումն ու դրանց մասին հաղորդում ներկայացնելը:
- **Ավելի բարձր իրազեկվածություն.** Հանրային իրազեկման նախաձեռնությունները կարող էին օգնել ծնողներին, ուսուցիչներին ու երեխաներին՝ ճանաչելու տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերը և հայտնելու դրանց մասին:
- **Թերհաղորդումը.** Հնարավոր է նաև, որ 2023 թվականին հաղորդումների թվի զգալի աճը մասամբ պայմանավորված է նախորդ տարիներին դեպքերի մասին ոչ միշտ հայտնելու հանգամանքով:
- **Համացանցային կապի ավելի լայն տարածումը.** Համացանցի և սմարթֆոնների ու նման այլ սարքերի ավելի լայն հասանելիությունը նշանակում է, որ ավելի մեծ թվով մարդիկ կան առցանց տիրույթում: Դա կարող է հանգեցնել ռիսկերի աճի և շահագործման դեպքերի ավելացման:

Իրազեկման, հայտնաբերման և հաղորդում ներկայացնելու մեխանիզմների լավարկմանը զուգընթաց հնարավոր է, որ չհայտնված դեպքերն արդեն գրանցվում են՝ հանգեցնելով թվերի կտրուկ աճի:

Թեև 2023-ին նկատված կտրուկ աճը կարող է վկայել հայտնաբերման և իրազեկման մակարդակի բարձրացման մասին, 2024 թվականին 2023-ին նախորդող ցուցանիշներին վերադարձը վկայում է ծավալները պայմանավորող հիմնարար գործոններում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

CyberTip հաղորդումների թվի նվազումը 2023 թվականին գրանցված 11,058-ից մինչև 2025 թվականի 4,794-ը կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով.

- **Հարթակներում տեղի ունեցած փոփոխություններ.** Տեխնոլոգիական այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են Meta-ն և Google-ը, կարող էին փոփոխել երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության հայտնաբերման իրենց համակարգերը կամ դեպքերի մասին հայտնելու շեմերը, որը հանգեցրել է NCMEC ներկայացված ավտոմատացված հաղորդումների թվի նվազման:
- **Հանցավոր գործունեության ծավալների նվազում.** Հանրային իրազեկման արշավները, իրավապահ մարմինների ավելի ակտիվ գործունեության կամ հարթակների մոդերացիայի լավարկումները կարող էին բռնարարներին հետ պահել հանցագործություններից կամ կանխել նյութերի վերբեռնումը:
- **Տվյալների որակի բարելավումները.** 2023 թվականի կտրուկ ավելացած թիվը կարող էր պարունակել կրկնվող կամ ցածր որակի հաղորդումներ: Ձտման համակարգերի և տեսակավորման կարգավորումների լավարկմանը զուգընթաց հաղորդումների ընդհանուր թիվը կարող էր նվազել, նույնիսկ դրանց որակի ու հավաստիության ավելացելման պարագայում:
- **Բռնարարների հարմարվողական վարքագիծ.** Բռնարարները հաճախ արագ վերանայում են հարթակներից օգտվելու իրենց գործելակերպը՝ օգտվելով գաղտնագրման փոփոխություններից և հասանելի նոր գործառույթներից, որպեսզի ակտիվորեն խուսափեն բացահայտվելուց:

Հահողորդում ներկայացնելու դեպքերի թվի նվազումը միշտ չէ, որ վկայում է խնդրի լուծման մասին, ինչպես որ դրանց աճը միշտ չէ, որ վատթարացում է ենթադրում:

Նյութերի տարածումը հասակակիցների միջև (peer-to-peer) գործող ցանցերում

Երեխաների փրկության կոալիցիան (Child Rescue Coalition) իրավապահ մարմինների վերապատրաստված ներկայացուցիչներին հասանելիություն է տրամադրում երեխայի պաշտպանության համակարգին՝ թույլ տալով հայտնաբերել այն IP հասցեները, որոնք օգտագործվում են երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերը հասակակիցների միջև գործող ցանցերի միջոցով տարածելու համար:

Վերջին 365 օրվա տվյալներից պարզ է դառնում, որ հայկական 163 IP հասցեներում հայտնաբերվել են երեխայի նկատմամբ շահագործման և սեռական բռնության նյութեր: Հատկանշական է, որ այս ահազանգով հայտնի դարձած գործունեության 95 տոկոսը գրանցվել է մայրաքաղաք Երևանում: Քանի որ համակարգը թույլ չի տալիս մշտադիտարկել ֆայլերի փոխանակման բոլոր ցանցերը, այս տեղեկությունը պետք է համարել ոչ ամբողջական, որը թերևս չի արտացոլում նման հարթակներում երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության նյութերի շրջանառության ամբողջ ծավալը:

1.3 ՈՎՔԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ և ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Կա տարածված կարծիք, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործումն ու բռնությունը ամենից առաջ իրականացնում են անծանոթները առցանց տիրույթում: Թեև անծանոթների կողմից բռնություն, անշուշտ, կիրառվում է, Հայաստանի վերաբերյալ հետազոտական տվյալներից հետևում է, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման ու բռնության դրվագների մեծամասնությունը (57 տոկոսը) կատարել է երեխային արդեն ծանոթ անձը, ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 3-ում: Դրվագների 22 տոկոսում բռնարարի ինքնությունը չի պարզվել (այսինքն՝ երեխան չի կարողացել կամ չի ցանկացել նշել, թե ով է բռնարարը):

Գծապատկեր 3. Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դրվագները, որոնք կատարել է...

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության Հայաստանում ուսումնասիրված դեպքերի մեծամասնությունը (84 տոկոսը) գործվել է միայն մեկ բռնարարի կողմից, մինչդեռ 16 տոկոս դրվագներում ներգրավված են եղել մի քանիսը:

Սեռական շահագործումը և բռնությունը առկա հարաբերությունների կամ կապերի շրջանակում

Երեխայի առկա հարաբերությունների շրջանակում հարցման տվյալներով դուրս են բերվել շահագործման և բռնության դրվագներ, որոնք կատարվել են ընտանիքի անդամների, ընկերների և ծանոթների կամ էլ երեխայի հետ ռոմանտիկ կապ ունեցող անձի (օրինակ՝ զուգընկերոջ, զուգընկերուհու) կողմից: Սա համընկնում է մասնագետների կողմից վարվող դեպքերի կառուցվածի հետ, երբ հաճախ ներգրավված են եղել բռնարարներ, որոնք երեխային ճանաչում էին:

Միջին հաշվով, երեխային ծանոթ բռնարարները, որպես կանոն, 18 տարեկանից բարձր չափահասներ են, ոչ թե 18 տարեկանը չլրացած հասակակիցներ, ինչպես ցույց է տրված Գծապատկեր 4-ում: Սա հատկապես տարածված էր ռոմանտիկ զուգընկերների շրջանում:

Գծապատկեր 4. Երեխային ծանոթ բռնարարների խմբերն՝ ըստ տարիքի:



1.3 ՈՎՔԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ և ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագետները նաև խոսել են երեխաներին ծանոթ անձանց, այդ թվում՝ ընտանիքի չափահաս անդամների կողմից կատարված հանցագործությունների մասին: Բազմաթիվ մասնագետներ հիշատակել են աղմուկ հանած մի դեպք, երբ երկու ծնողները սեռական բռնության և շահագործման էին ենթարկել իրենց երեխաներին: Դեպքը ներառում էր կոնտակտային սեռական բռնություն, երեխայի սեռական բռնության ուղիղ հեռարձակում և այլ բռնարարներից հրահանգներ, թե ինչպիսի բռնարարքներ պետք է կատարեն իրենց իսկ երեխաների նկատմամբ:

Երբ երեխան շահագործվում կամ բռնության է ենթարկվում իրեն արդեն ծանոթ անձի, օրինակ՝ ընտանիքի անդամի կողմից, ապա դա ավելի է բարդացնում բռնության դեպքի հայտնաբերումը կամ բացահայտումը, հատկապես, եթե երեխան կամ մեկ այլ խնամակալ տնտեսապես և/կամ հուզականորեն կախված է բռնարարից կամ բռնարարներից: Օրինակ՝ մի մայր հրաժարվել էր իր ամուսնու դեմ բողոք ներկայացնելուց, որն իրենց երեխայի լուսանկարներն օգտագործել էր սեռական ծառայություններ գովազդելու համար, ընդ որում՝ մայրն իր պահվածքը բացատրում էր ընտանիքը պահպանելու ցանկությամբ: Ինչպես առաջնային օղակի աշխատողներից մեկն է նշել՝ "Նա հույս ուներ փրկելու ընտանիքը: Եվ հայրը համարվում էր ընտանիքի սյունը [...] այն հանգամանքը, որ իր երեխան աղջիկ էր, նա չէր ուզում, որ երեխան քննադատվի [համայնքում], քանի որ հետագայում պիտի ամուսնանա, և չի ուզում, որ նրան մատնացույց անեն" (ԱՕԱ):

Ինչպես հասկանալ տվյալները

Ընտանիքի անդամների կողմից կատարվող բռնությունը երբեմն ավելի դժվար է բացահայտել, այդ թվում՝ տնային տնտեսությունների հարցման շրջանակում: Քանի որ երեխաների հետ հարցազրույց անցկացնելու համար անհրաժեշտ է ծնողների համաձայնությունը, հնարավոր է, որ հարցազրուցավարները չկարողանան մուտք գործել շատ տնային տնտեսություններ, որտեղ ընտանիքի անդամների կողմից տեղի է ունենում բռնություն: Սա կարևոր հանգամանք է, որը պետք է հաշվի առնել, քանի որ ընտանիքի անդամների կողմից գործադրվող բռնությունը կարող է ավելի հաճախ տեղի ունենալ, քան արտացոլվում է հարցման արդյունքներում:

Սեռական շահագործումը և բռնությունը անծանոթ բռնարարների կողմից

Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության՝ հարցման ժամանակ գրանցված հինգ դեպքից մոտավորապես մեկը (22 տոկոսը) կատարվել է անձի կողմից, որին երեխան չի ճանաչել նախքան բռնությունը: Ինչպես ծառայություն մատուցողները, այնպես էլ արդարադատության ոլորտի մասնագետներն անդրադարձել են իրենց վարած մի քանի դեպքերի, երբ երեխան կամ երիտասարդը անծանոթին հանդիպել է առցանց, որից հետո ենթարկվել է բռնության և շահագործման: Սա ներկայացված է արդարադատության ոլորտի մասնագետներից մեկի հիշատակած դեպքում. "12-ամյա աղջիկը ենթարկվել է սեռական բռնության, ապա՝ սեռական շահագործման մի բռնարարի կողմից, որի հետ ծանոթացել էր առցանց, և որն աղջկա լուսանկարները տարածել էր մի շարք առցանց հարթակներում՝ նրան սեռական շահագործման ենթարկելու նպատակով: Արդարադատության ոլորտի [այս դեպքը վարող] մասնագետը պարզել էր, որ բռնարարների թիվը, ամենայն հավանականությամբ, գերազանցել էր 30-ը" (ԱՈՄ):

Հարցման տվյալներով՝ չի գրանցվել որևէ դեպք, երբ երեխան շահագործման կամ բռնության ենթարկվել է ինչպես անծանոթների, այնպես էլ ծանոթների կողմից: Այդուհանդերձ, մասնագետներն անդրադարձել են մի քանի դեպքերի, երբ երեխան բռնության կամ շահագործման է ենթարկվել նախ իրեն ծանոթ անձի կողմից, իսկ հետագայում՝ ինչպես ծանոթ, այնպես էլ անծանոթ մարդու կողմից: Ծառայություն մատուցողի վարած դեպքերից մեկում 14-ամյա աղջկան դպրոցի իր հասակակից տղաները համոզել են ստեղծել իր սեռական բնույթի նկարները: Այդ նկարները նույն հասակակիցները հետագայում օգտագործել էին նրան շանտաժի ենթարկելու համար: Դա հանգեցրել էր նրան, որ երեխան ստեղծել էր Instagram-յան օգտահաշիվ, որտեղ կային "գայթակղիչ" լուսանկարներ. դրանք կարճ ժամանակ անց գրավել էին առցանց տիրույթում անծանոթների ուշադրությունը, որոնք սկսել էին հաղորդագրություններ ուղարկել և ապա սեռական բռնության էին ենթարկել երեխային: Բռնությունը տևել էր շուրջ մեկ տարի: Այդ ընթացքում գյուղում նրա մասին բամբասանքներ էին տարածվել, և նրան հրավիրել էին ընտանիքի բարեկամներից մեկի տուն, որտեղ նա կրկին բռնության էր ենթարկվել: Այս դեպքը ոչ միայն ցույց է տալիս, թե ինչպես կարող է երեխայի նկատմամբ բռնությունը սկսվել ծանոթ անձանց կողմից, ապա վերածվել անծանոթների կողմից բռնության և շահագործման, այլև վերահաստատում է, թե առերես և "առցանց" բռնությունները ինչպես կարող են փոխկապակցված լինել երեխաների շրջապատում:

Պարզաբանում. Վնասակար սեռական վարքագիծ դրսևորած երեխաները

Թեև տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դեպքերն ավելի հաճախ տեղի են ունեցել են 18 և բարձր տարիքի չափահասների կողմից, հարցման տվյալները ցույց են տվել նաև, որ շահագործման և բռնության դրվագների 25 տոկոսում ներգրավված է եղել մեկ այլ երեխա, որը դրսևորել է վնասակար սեռական վարքագիծ: Մասնագետների նկարագրած դեպքերը ցույց են տվել, թե շփումներն ու հարաբերությունները ինչպես կարող են վերածվել սեռական բնույթի շանտաժի, երբ ինտիմ բնույթի պատկերները, տեսանյութերն ու հաղորդագրությունները կիրառվում են երեխաներին հետագա սեռական շահագործման, ֆինանսական շանտաժի կամ կոնտակտային սեռական բռնության մեջ ներգրավելու համար: Դա կարող է տեղի ունենալ արդեն իսկ բռնություն պարունակող այնպիսի իրավիճակների համատեքստում, ինչպիսին է գրումինգը, սակայն ի սկզբանե փոխհամաձայնեցված շփումները, ինչպիսին է հասակակիցների միջև սեքսթինգը (սեռական բնույթի հաղորդագրություններ փոխանակելը), նույնպես կարող է վերածվել բռնության:

Վերը քննարկված դեպքում բռնության տարբեր ձևերը, օրինակ՝ բուլինգը, վերածվել են հասակակիցների կողմից սեռական շահագործման և բռնության: Ինչպես նկարագրել է առաջնային օղակի աշխատողներից մեկը, սեռական շանտաժի դեպքը սկիզբ է առել այլ աշակերտների կողմից երեխայի բուլինգի դեպքից: Սոցիալական միջավայրին հարմարվելու ընթացքում բուլինգի ենթարկված աղջկան դպրոցում տղաների մի խումբ համոզել էր տարբեր (անկեղծ) դիրքերով լուսանկարներ անել և ուղարկել իրենց: "Երբ նա լուսանկարվեց և նկարներն ուղարկեց այդ տղաներին [...], շանտաժը սկսվեց" (ԱՕԱ):

Մասնագետների նշած մեկ այլ դեպք վերաբերում էր 12-ամյա մի տղայի, որին իրենց հարևանը՝ 16-ամյա մի տղա, առցանց գրումինգի էր ենթարկել: Նա բթացրել էր ավելի փոքրահասակ տղայի զգոնությունը և դրդել սեռականացված վարքի՝ տեսանյութերի և նկարների միջոցով, ապա հրավիրել էր անձնական հանդիպման: 12-ամյա տղան իր փոքր եղբոր և ընկերոջ հետ գնացել էր հանդիպելու դեռահասի հետ: Ո՛չ եղբայրը և ո՛չ էլ ընկերը տեղյակ չէին իրավիճակից, և հանդիպումն ավարտվել էր երեք տղաների բռնաբարությամբ: Դրանից հետո 16-ամյա տղան սպառնալիքներով հարկադրել էր տղաներին՝ բավարարելու իր հետագա սեռական պահանջները: Բռնաբարության ենթարկված տղաներին աջակցող առաջնային օղակի աշխատողը նշել էր, որ 16-ամյա տղան ասել է. "Եթե մյուս անգամ զանգեմ, ու չգաք, ես բոլորին կպատմեմ սրա [բռնաբարության] մասին, ես կհայտնեմ ձեր հորն ու մորը, որ եկել եք ինձ մոտ ու նման բաներ եք արել" (ԱՕԱ): Այս դեպքն ի ցույց է դնում սույն գլխում նկարագրված շատ իրավիճակներ, այդ թվում այն, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների նկատմամբ սեռական շահագործումն ու բռնությունը կարող են ներառել առցանց տարրեր, ինչպես, օրինակ՝ թվային հարթակներում տեղի ունեցող գրումինգը, որը կարող է հանգեցնել կոնտակտային սեռական բռնության, ինչպես նաև երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության նյութերի պատրաստման և սեռական բնույթի շանտաժի: Այդուհանդերձ, այն նաև պատկերում է իրավիճակ, երբ երեխան, որը շարունակական և բազմակի սեռական բռնության զոհ է եղել, վնասել է մեկ այլ երեխայի:

Այնպիսի իրավիճակներում, երբ բռնարարքն իսկապես տեղի է ունեցել, և երեխան դատապարտվել է դրա համար, կարևոր է նշել, որ Հայաստանում առաջնահերթ է համարվում ոչ թե պատիժը, այլ վերականգնումը: Քրեական օրենսգրքով նախատեսված է, որ հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կիրառվող պատիժը նպատակ է հետապնդում ապահովելու նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումը[16]: Ազատազրկումը նախատեսված է որպես ծայրահեղ միջոց. այն կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլ պատժի միջոցով հնարավոր չէ հասնել վերականգնողական նույն նպատակին[17]. ազատազրկում չի նշանակվում ոչ մեծ ծանրության (մինչև երկու տարի ազատազրկմամբ պատժվող) կամ միջին ծանրության (մինչև հինգ տարի ազատազրկմամբ պատժվող) հանցագործությունների դեպքում, եթե դրանք կատարվել են առաջին անգամ կամ չեն զուգորդվել բռնությամբ[18]: Գործնականում դատական համակարգը հաճախ դիմում է այլընտրանքային այնպիսի միջոցների, ինչպիսին է պրոբացիան: Սա ցույց է տալիս, որ հանցանք կատարած երեխաների պարագայում առաջնային շեշտը դրվում է վերականգնողական մոտեցման վրա[19]:

16. Նույն տեղում, 94-4 հոդված:
17. Նույն տեղում, 99-1 հոդված:
18. Նույն տեղում, 99-2 հոդված:
19. ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ, անձնական հաղորդակցություն, 2023 թ, նոյեմբեր:

1.4 ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՎՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն բաժինն անդրադառնում է մասնագետների կարծիքներին ու ընկալումներին այն ռազմավարությունների վերաբերյալ, որոնք բռնարարները կիրառում են երեխաներին սեռական շահագործման կամ բռնության ենթարկելու համար, հատկապես առցանց գրումինգի և սեռական բնույթի շանտաժի դեպքերում:

Գրումինգ

Հայաստանում գրումինգի դեպքերը մասնագետների կողմից ամենաշատն են քննարկվել: Որոշ մասնագետներ նկարագրել են գրումինգի դեպքեր, որոնք տեղի են ունեցել բացառապես առցանց կամ վիրտուալ տիրույթում, օրինակ, երբ երեխաներին հարկադրել են ներգրավվել առցանց սեռական գործողություններում կամ առերես սեռական բնույթի նկարներ տրամադրել՝ հանդիպում չծրագրելով: Թեև նման արարքը պետք է քրեական հետապնդման ենթարկվի մի շարք հոդվածներով[20], ներկայում այն ՀՀ քրեական օրենսգրքով չի որակվում որպես գրումինգ: Այս հանցանքը իրավական հետևանքներ է առաջացնում այն պարագայում, եթե բռնարարը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, առերես հանդիպում է առաջարկել 16 տարեկանը չլրացած անձին՝ նպատակ ունենալով նրան ներգրավելու սեռական բնույթի գործողություններում կամ ստեղծելու երեխայի սեռական բռնության վերաբերյալ նյութեր, ապա ձեռնարկել նախապատրաստական քայլեր այդ հանդիպման համար: Այս հանցանքը պատժվում է մինչև երկու տարի ազատազրկմամբ[21]:

Առերես հանդիպման առաջարկի և այդ հանդիպման նախապատրաստական գործողությունների վրա կենտրոնանալով, անգամ եթե այդ հանդիպումն ի վերջո տեղի չի ունենում, այդ դրույթը ներկայում չի քրեականացնում վստահության ձեռքբերման և հուզական մանիպուլյացիայի ավելի լայն և ավելի բարդ գործընթացը, որը բնորոշ է գրումինգին, ինչպես նաև գրումինգը, որը տեղի է ունենում առանց երեխայի հետ հանդիպելու և նրա նկատմամբ առերես սեռական բռնության մտադրության և միայն առցանց տիրույթում (օրինակ՝ երեխային հարկադրելով պատրաստել և տրամադրել սեռական բնույթի նյութեր): Բացի այդ՝ 16 և 17 տարեկան երեխաները ներկայում դուրս են մնում առցանց գրումինգի վերաբերյալ դրույթների կարգավորման շրջանակից:

Այս մոտեցումը հակադրվում է "Կիբեռհանցագործությունների մասին" Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիային, որն ընդունվել է 2024 թվականի դեկտեմբերին, և որը գրումինգը սահմանում է որպես "երեխայի նկատմամբ սեռական բնույթի հանցագործություն կատարելու նպատակով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով դիտավորյալ հաղորդակցվելու, նրա հետ կապ հաստատելու, գրումինգի կամ որևէ պայմանավորվածություն ձեռք բերելու գործողությունը"[22]: Այս սահմանմամբ գրումինգը լիարժեք ճանաչվում է որպես դիտավորությամբ կատարվող հանցագործություն, որը կարող է բացառապես տեղի ունենալ առցանց և ապահովում է բոլոր երեխաների պաշտպանությունը՝ անկախ տարիքից: Քանի որ գրումինգի այս ավելի լայն հասկացությունն ի հայտ է գալիս որպես նոր միջազգային ստանդարտ, այն ծառայում է որպես կարևոր ուղենիշ Հայաստանի իրավական կարգավորումները միջազգային զարգացող լավագույն գործելակերպին համապատասխանեցնելու համար:

Առաջնային օղակի աշխատողները և արդարադատության ոլորտի մասնագետներն ընդգծել են գրումինգի՝ որպես "դիտավորությամբ կատարվող հանցագործության" բարդությունները, ինչպես նաև այն ճկուն, հարկադրական ռազմավարությունները, որոնք հանցանքը կատարողները կիրառում են՝ մանիպուլյացիայի ենթարկելու երեխաներին՝ առցանց տիրույթում սեռական գործողություններում ներգրավելու համար: Ըստ մասնագետների՝ այս քայլերը միշտ չէ, որ ուղիղ հաջորդականությամբ են ընթանում: Այդուհանդերձ, նկատվել է հուզական մանիպուլյացիայի աստիճանական ուժգնացման օրինաչափություն.

- Երեխայի հետ սկզբնական կոնտակտի հաստատում:
- Վստահության ձեռքբերում (օրինակ՝ ընդհանուր հետաքրքրություններ քննարկելով):
- Երեխաների մեջ յուրահատուկ, սիրված և ցանկալի լինելու զգացողության առաջացում:
- Երեխային սեքսուալ/սեռական բովանդակությամբ նյութերի ցուցադրում:

20. Տե՛ս, օրինակ, Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 198–201, 300 հոդվածներ:
21. Նույն տեղում, 202 հոդված:
22. United Nations, United Nations Convention Against Cybercrime, General Assembly Resolution 79/243, 24 December 2025, art. 15 (Միավորված ազգերի կազմակերպություն, "Կիբեռհանցագործությունների մասին" ՄԱԿ-ի կոնվենցիա, Գլխավոր ասամբլեայի բանաձև թիվ 79/243, 24 դեկտեմբերի, 2025, հոդված 15):

- Երեխայի նկատմամբ սեռական բռնություն պատկերող նյութի ձեռքբերում՝ հաճախ դրանք օգտագործելով սեռական բնույթի շանտաժի և սպառնալիքի/շորթման նպատակով:

Սկզբնական կոնտակտ: Ինչպես նկարագրել է առաջնային օղակի աշխատողներից մեկը, երեխաների հետ որոշակի առաջնային շփումը սկսվում է չնախատեսված առցանց հաղորդակցությունից: Ավելի փոքրահասակ երեխաների հետ բռնարարների այս շփումը սկսվում է նրանց բարեկամական հաղորդագրություններ և "սրտիկ էմոջիներ [...] ուղարկելուց, ասես նրանք լավ ընկերներ են" (ԱՕԱ): Մասնագետների նկարագրած որոշ դեպքերում "հարաբերությունների հաստատումը" սկսվել է որպես ընկերություն: Որոշ այլ դեպքերում այն սկզբում հիշեցրել է ռոմանտիկ հարաբերություն, երբ բռնարարը ներկայանում է իբրև երեխայի հասակակից կամ նույն կյանքով ապրող մեկը, որպեսզի չեզոքացնի վտանգի զգացողությունը :

Վստահության ձևավորումը: Սկզբնական կապը հաստատելուց և այն շարունակելուց հետո, մասնագետների պնդմամբ, երեխայի վստահությանն արժանանալը բռնարարների կարևոր ռազմավարությունն է դառնում: Դա ներառում է զրույց ընդհանուր հետաքրքրությունների շուրջ՝ կապի և փոխըմբռնման զգացողություն ձևավորելու համար: Նման իրավիճակներում նրանք ձևավորում են հարաբերություն՝ լինելով ընկերական, հոգատար և աջակցող, որն օգնում է ձեռք բերելու երեխայի վստահությունը: Նրանք նաև շողոքորթում են, որպեսզի երեխան իրեն գնահատված, սիրված և յուրահատուկ զգա:

Բռնարարները հաճախ օգտվում են երեխայի կյանքի հանգամանքներից՝ միայնակություն կամ մեկուսացվածություն, ցածր ինքնագնահատական կամ ուշադրության և հավանության արժանանալու անդիմադրելի ցանկություն: Դեպքերից մեկում մի աղջկա բուլինգի էին ենթարկել իր քաշի համար. բռնարարը նրան ասել էր՝ "դու ամենագեղեցիկ, ամենախելացի աղջիկն ես, և մենք ուզում ենք, որ ամբողջ աշխարհը տեսնի, թե ինչպիսին ես դու" (ԱՕԱ):

Սեռական/սեքսուալ բնույթի բովանդակությանն առնչվելը: Մասնագետները նաև նշել են, որ զրույցները ժամանակի ընթացքում կարող են ավելի ինտենսիվ դառնալ, նույնիսկ առանց առցանց տիրույթից երբևէ դուրս գալու, երբ բռնարարը սեքսուալ բնույթի հաղորդագրություններ կամ նկարներ է ուղարկում, ապա ի վերջո խնդրում երեխային՝ ուղարկել սեքսուալ լուսանկարներ: Օրինակ՝ բռնարարներից մեկն օգտվել էր երեխայի նկարչական հակումից՝ կապ հաստատելու, ապա նաև շփումն առավել սեռականացված հաղորդագրությունների հանգեցնելու նպատակով: "Նրանք [երեխան և բռնարարը] պարզապես քննարկել էին տարբեր հայտնի նկարիչների և այլն: Ապա խոսակցությունը շարունակվել էր այսպես. *"Ի՞նչ ես կարծում, մերկ մարմին նկարելն արվե՞ստ է" (ԱՕԱ)"*:

Մասնագետների նկարագրած մի դեպքում էլ իրավապահ մարմինները կարողացել էին կանխել հանցագործությունը՝ գրումինգի գործընթացի վաղ փուլում բացահայտելով մի տղամարդու և փոքրահասակ աղջիկների միջև նամակագրությունը: Նրանք ուշադրություն էին դարձրել երեխայի և բռնարարի միջև շփման աստիճանական սեռականացմանը. "Մենք կարդում էինք այսպիսի հաղորդագրություններ, ասենք՝ *"Դու տանը շորտեր հագնո՞ւմ ես: Դրանք կա՞րճ են, թե՞ երկար"*: Ու նման այլ հարցեր ևս, որոնք կարող էին բնականորեն հանգեցնել որոշակի սեռական գործողության: Շարունակությունը կարող էր լինել այսպիսի հաղորդագրությունների միջոցով, օրինակ՝ *"Բացի՛ր մի փոքր, որ երևա: Հանի՛ր դա" (ԱՈՄ)"*:

Գրումինգի ընթացքում սեքսուալ բովանդակությամբ նյութերին երեխայի առնչությունը բռնարարների կողմից հաճախ կիրառվում էր սեռական գործողության հանդեպ երեխայի զգոնությունը բթացնելու նպատակով՝ դա ներկայացնելով որպես իրենց հարաբերությունների նորմալ կամ բնական մաս: Հայաստանում այս արարքը համապատասխանում է պոռնկագրական նյութը կամ առարկան 16 տարին չլրացած անձանց ցուցադրելը քրեականացվող դրույթներին, որով նախատեսված է մինչև հինգ տարի ազատազրկում, եթե արարքը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ[23]: Այդուհանդերձ, ինչպես և առցանց գրումինգի ձևով հանցանքի դեպքում, այս դրույթը ներկայում չի ապահովում 16 և 17 տարեկան երեխաների պաշտպանությունը, որն էական բաց է, և որից կարող են օգտվել բռնարարները:

23. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 201 հոդված:

1.4 ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՎՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջնային օղակի աշխատողի բերած մի օրինակում նկարագրվում են վերը նշված առցանց գրումինգի հիմնական բաղադրիչները՝ ներառյալ վստահության ձևավորումը, մանիպուլյացիան, գաղտնիությունը, սեքսուալ բնույթի բովանդակության ներկայացումը և աստիճանական ահագնացող գործողությունները.

> *Անձը, որը հետագայում սպառնացել էր երեխային, որոշակի պլան ուներ: Նա երեխային ասել էր, որ ընկերներ կլինեն, կզրուցեն, կպատմի նրան գաղտնիքներ, որպեսզի նա ավելի հեշտ շփվի իր ընկերների հետ [ավելի վստահ կզգա]: Ապա երեխան հայտնել էր [բառացի], որ իր հայրը խիստ է: Եվ որ ինքը չի կարող որևէ մեկի հետ անկեղծ խոսել: Որոշ ժամանակ անց տղամարդն աղջկան առաջարկել էր ցուցադրել իր օրգանները [սեռական օրգանը], որպեսզի նա "ավելի լավ ճանաչի իրեն" և "ավելի ինքնավստահ դառնա": Ապա ավելացրել էր [...] Այդ տղամարդը պարզապես ասել էր. "Եթե հիմա չշարունակես ինձ հետ շփվել, և նույնիսկ եթե չուղարկես քո սեռական օրգանների նկարները, ես այս ամբողջ նամակագրությունը կուղարկեմ քո հայրիկին ու մայրիկին, և բոլորը կիմանան սրա մասին" (ԱՕԱ)*

Այս դեպքը նաև ի ցույց է դնում գրումինգի ժամանակ կիրառվող ամենատարածված ռազմավարությունը՝ **երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերի ձեռքբերումը:** Թեև ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունում է, որ գրումինգը կարող է ծառայել այնպիսի նպատակների, ինչպիսիք են երեխայի նկատմամբ սեռական բռնություն պատկերող նյութերի ստեղծումը, դրույթը սահմանափակվում է միայն այն դեպքերով, երբ նման նյութերը ստեղծվում են առերես հանդիպման նպատակով[24]: Սա ստեղծում է իրավական բաց այնպիսի իրավիճակների համար, երբ նյութը ձեռք է բերվել հեռավար՝ առանց հանդիպման առաջարկի: Հետևաբար չափազանց կարևոր է քրեական օրենսգրքում գրումինգի սահմանումը համապատասխանեցնել Կիբեռհանցագործությունների վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիային[25], որպեսզի իրավական սահմանումներն արտացոլեն հանցանքի փաստացի հատկանիշները՝ ներառյալ բացառապես առցանց տիրույթում տեղի ունեցող բռնության ձևերը: Սա հատկապես կարևոր է, քանի որ, ինչպես երևում է տվյալներից, այն պահից, երբ երեխայի նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութը ձեռք է բերվել կամ ստեղծվել է, դա դա բռնարարներին տալիս է լրացուցիչ լծակներ, որպեսզի ավելի հեռուն գնան շահագործման և բռնության գործողություններում՝ ներառյալ երեխաներին շորթման կամ շանտաժի ենթարկելով:

Սեռական բնույթի շանտաժ

Գրումինգ պարունակող դեպքերի համատեքստում սեռական բնույթի շանտաժը տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության ամենաշատ քննարկված օրինակն է մասնագետների հետ հարցազրույցներում:

Երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության վերաբերյալ նյութերը՝ որպես սեռական բնույթի շանտաժի միջոց:
Բռնարարները սեռական բնույթի նյութերը վերցնում են երեխայից առցանց հաղորդակցության միջոցով ռոմանտիկ հարաբերությունների պատրվակով կամ գրումինգի ընթացքում, ինչպես նկարագրված է նախորդ բաժնում: Այնուամենայնիվ, կան նաև օրինակներ, երբ բռնարարներն իրենք են ստեղծում երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերը: "Եթե անգամ չունեն [բռնարարները] նման լուսանկարներ, կփոփոխեն դրանք այնպես, որ մոտ կլինեն իրականին, և բնականաբար, այս դեռահաս երեխաները կհավատան դրան" (ԱՕԱ):

Կայքէջերի և տեխնոլոգիաների, այդ թվում՝ գեներատիվ արհեստական բանականության (ԱԲ) տարածումը բռնարարներին հնարավորություն է տալիս ստեղծելու նկարներ և տեսանյութեր՝ ավելի հեշտությամբ ստեղծելու երեխաների պատկերով դիփֆեյքեր, ինչն էլ հետագայում կխթանի սեռական շահագործումն ու բռնությունը: Ըստ հարցման տվյալների՝ միայն մեկ տարվա ընթացքում Հայաստանի երեխաների 1 տոկոսը նշել է, որ ինչ-որ մեկը ԱԲ-ի օգնությամբ ստեղծել է իր կեղծ սեքսուալ բնույթի պատկերները կամ տեսանյութերը: Որոշ դեպքերում երեխաները կարող են և չիմանալ, թե ինչ ծրագրի կամ տեխնոլոգիայի միջոցով են ստեղծվել

24. Նույն տեղում, 202-1 հոդված:
25. United Nations, United Nations Convention Against Cybercrime, General Assembly Resolution 79/243, 24 December 2025, art. 15. (Միավորված ազգերի կազմակերպություն, Կիբեռհանցագործությունների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, Գլխավոր ասամբլեայի բանաձև թիվ 79/243, 24 դեկտեմբերի, 2025, հոդված 15):

նկարները, կամ նրանք կարող են չցանկանալ հայտնել, որ իրենց հետ նման բան է տեղի ունենում: Այդուհանդերձ, այս տվյալները հուշում են ԱԲ-ի վտանգավոր կիրառության մասին և այն մասին, որ Հայաստանի երեխաների մի մասն արդեն իսկ կրում է դրա ազդեցությունը:

Այս զարգացումները հատկապես մտահոգիչ են, քանի որ երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերի վերաբերյալ Հայաստանի քրեական օրենսդրության դրույթներում այս ահագնացող վտանգը հաշվի չի առնվում: Անշուշտ, ներկայիս իրավական սահմանումը կարող է վիճելիորեն մեկնաբանվել այնպես, որ ներառի ոչ վիզուալ կամ թվային նյութերը, սակայն դա հստակ ձևակերպված չէ: Օրենսդրությունը հստակ պետք է անդրադառնա այն նյութերին, որոնք իրական երեխաների նկատմամբ փաստացի կոնտակտային բռնություն չեն ենթադրում, սակայն արհեստականորեն ստեղծված այդ նյութերից տպավորություն է ստեղծվում, որ պատկերված են իրական երեխաներ: Սա վերաբերում է նաև ԱԲ-ի միջոցով ստեղծվող նյութերին:

Բացահայտման հանդեպ վախի օգտագործումը: Մասնագետների ներկայացրած դեպքերի մեծ մասում բռնարարներն օգտագործել են բացահայտման նկատմամբ վախը, որն է՛լ ավելի է խորանում ընտանիքի պատվի և սեռականացված սոցիալական նորմերի հետևանքով, որոնք սահմանում են "լավը" կամ "մաքուր" լինելու ակնկալիքներ, և այդ վախը կիրառել որպես լծակ՝ զոհերին իրենց պահանջներին ենթարկելու համար: Որոշ դեպքերում երեխաներին սպառնացել են նաև սեքսուալ բնույթի նկարները կամ տեսանյութերը տեղադրել այնպիսի հարթակներում, ինչպիսին է YouTube-ը: Ինչպես նշել է առաջնային օղակի աշխատողներից մեկը, բռնարարը տեղեկություններ է հավաքել "աղջկա ընտանիքի, նրա եղբոր, բանակում ծառայող ավագ եղբոր" (ԱՕԱ) մասին և սպառնացել է երեխայի՝ սեքսուալ բնույթի նյութերն ուղարկել նրա ընտանիքին, ընկերներին և դպրոց: Մեկ այլ դեպքում առաջնային օղակի աշխատողը պատմում է, որ "[բռնարարը] աղջկան ասել էր. *"Եթե դուրս չգաս [հանդիպելու և սեռական հարաբերություն ունենալու համար], ես քո նկարները կուղարկեմ ծնողներիդ, ավագ քրոջդ... քեռի/հորեղբայրներիդ, մորաքույր/հորաքույրներիդ"* (ԱՈՄ)": Ընտանիքին խայտառակելու սպառնալիքով բռնարարները ճնշում են գործադրել երեխայի վրա, որպեսզի նա շարունակի շփումը և նոր սեքսուալ բնույթի լուսանկարներ ուղարկի.

> *Նրա լուսանկարներն արդեն կային, և նրանք կարող էին այդ նկարներն ուղարկել նրա հորը, եղբորը կամ տարածել գյուղում, սակայն աղջկանից փող կամ որևէ այլ բան չէին պահանջել: Նպատակն էր՝ շարունակական պահել այդ նամակագրությունը: Եվ քանի որ մեր մշակույթն այնպիսին է, որ ինչ-որ պատճառով աղջկա անունը "դուրս գալուց" հետո նա այլևս չի կարող "լավ աղջիկ" համարվել, ու քանի որ ընտանիքը ավանդական էր, նրա հայրը կարող էր նրան տնից հանել այդ ամենի պատճառով" (ԱՕԱ):*

Ըստ իրավիճակի գործելը. Որոշ բռնարարներ չեն հետևում մինչ այժմ սույն գլխում նկարագրված օրինաչափություններին: Փոխարենը, նրանք գործում են ըստ իրավիճակի՝ օգտագործելով երեխաների յուրօրինակ կամ միջավայրին բնորոշ խոցելիությունները՝ բռնություն գործադրելու համար: Օրինակ՝ 2020 թվականին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ընթացքում բռնարարները երբեմն հորինովի տեղեկություն էին տրամադրում անհետ կորած հարազատների մասին՝ զոհերի վրա ճնշում գործադրելու համար: "Պատերազմական իրավիճակում նրանք [զինվորների ընտանիքները] տեղեկություն չէին ստանում իրենց հարազատների մասին, իսկ հանցագործներն օգտվում էին այդ հանգամանքից [...] *"Ես կարող եմ հանդիպում կազմակերպել նրանց հետ իրենց գտնվելու վայրում, ու դուք կարող եք խոսել նրանց հետ..."*: Բայց դա սուտ էր: Դրա դիմաց նա պահանջել էր այդ անձանց մերկ կամ կիսամերկ նկարները, սեռական օրգանների լուսանկարները" (ԱՈՄ):

Չնայած ակնհայտ տարածվածությանը՝ հայաստանյան օրենսդրությունը ներկայում չի պարունակում հատուկ դրույթներ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների նկատմամբ սեռական բնույթի շանտաժի վերաբերյալ: Այդուհանդերձ, քրեական օրենսգիրքը քրեականացնում է անձին, այդ թվում՝ երեխային սեքսուալ/ սեռական բնույթի գործողություններին կամ անձի կամ ուրիշի գույքից կամ գույքի նկատմամբ իրավունքից հրաժարվելուն

1.4 ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՎՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

հարկադրելը՝ շորթման եղանակով[26]: Թեև այս դրույթները տեսականորեն հնարավոր են դարձնում քրեական հետապնդումը՝ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական բնույթի շանտաժը հստակ սահմանելով որպես հանցագործություն, սակայն օգտակար կլիներ ամբողջությամբ արտացոլել պատճառվող վնասը և կատարման մեթոդները: Առանց նման հատուկ կարգավորումների՝ երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության այս տեսակը դասվում է առավել ընդհանրական հանցագործությունների թվին՝ խոչընդոտելով արարքի հստակ դասակարգումը և դրա տարածվածության վերաբերյալ ճշգրիտ տվյալների հավաքումը, որոնք չափազանց կարևոր են արձագանքման և կանխարգելման արդյունավետ ռազմավարություններ մշակելու համար:

Կանխարգելման հնարավորություններ. ուշադրությունը երեխաներից դեպի բռնարարները

Երեխաներին սեռական շահագործումից և բռնությունից պաշտպանելը պահանջում է առավել խորքային պատկերացում հասարակական և համակարգային այն գործոնների վերաբերյալ, որոնք հնարավոր են դարձնում երեխաների հանդեպ բռնությունը: Դա պահանջում է հասկացողություն բռնարարների դրդապատճառների, նրանց գործելակերպի և երեխաներին վնաս պատճառելու հնարավորությունները օգտագործելու եղանակների մասին: "Վերջ տալ վնասին" հետազոտությունը չի անդրադառնում բռնարարների և հանցանքը կատարողների պատկերացումներին: Այդուհանդերձ, այս ոլորտը շարունակում է կարևոր մնալ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործումը և բռնությունը լավագույնս կանխարգելելու տեսակետից: Տվյալները ցույց են տալիս բռնարարների գործունեության որոշ օրինաչափություններ: Ու թեև նրանց մարտավարությունը ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել, այս արդյունքները կմնան որպես կանխարգելման ոլորտները պարզելու կարևոր ելակետ:

Անցանկալի առցանց շփումները: Տվյալները վկայում են, որ Հայաստանում երեխաները առցանց տիրույթում անցանկալի կապեր են հաստատում սեքսուալ բնույթի պատկերներ կամ տեսանյութեր կամ սեռական թեմաներով զրույց կամ սեռական գործողություն պահանջող հաղորդագրությունների ձևով: Դա կարող է դրսևորվել բռնություն պարունակող մեկանգամյա շփման ձևով կամ լինել շարունակական ջանք՝ երեխայի զգոնությունը սեռական բնույթի բովանդակությամբ բթացնելու նպատակով, կամ էլ կարող է վկայել շարունակական սեռական շահագործման կամ բռնության մասին: Այս ամենը հուշում է սոցիալական ցանցերում, ակնթարթային հաղորդագրությունների և առցանց խաղային հարթակներում անվտանգային թերացումների մասին, որտեղ բռնարարները կարող են իրենց առցանց օգտահաշիվների միջոցով հեշտությամբ կապ հաստատել երեխաների հետ: Թեև կանխարգելմանն ուղղված ջանքերը հաճախ ուղղված են երեխաներին սովորեցնելուն, թե ինչպես արգելափակել բռնարարին կամ նրա մասին հայտնել հարթակում, այս քայլերը կատարվում են այն ժամանակ, երբ բռնությունն արդեն իսկ տեղի է ունեցել, և չեն կանխում, որ բռնարարները չստեղծեն նոր օգտահաշիվներ: Նաև հարց է առաջանում, թե ինչու է պատասխանատվությունը դրվում երեխայի վրա և ոչ թե առաջին հերթին ստեղծվում արգելքներ, որոնք թույլ չեն տա, որ բռնարարները կապ հաստատեն երեխաների հետ:

Կեղծ օգտահաշիվներ ստեղծելը: Բռնարարները մշտապես օգտվում են համացանցի ընձեռած անանունության հնարավորություններից՝ երեխաների հետ կապ հաստատելու, նրանց վստահությունը ձեռք բերելու և նրանց հետ հարաբերություններ հաստատելու համար: Թեև երեխաները պետք է տեղեկացվեն այս ռիսկի մասին, թվային տեխնոլոգիաների, այդ թվում գեներատիվ ԱԲ-ի առաջընթացը երեխաների (և չափահասների) համար է՛լ ավելի կդժվարացնի առցանց տիրույթում մարդկանց ինքնությունը պարզելը: Թեև բռնարարները կարող են բարդագույն կեղծ օգտահաշիվներ ստեղծել երեխաների հետ շփումը սկսելու համար, ծառայություն մատուցողի նկարագրած մեկ դեպքում բռնարարից շատ քիչ ջանք էր պահանջվել իր օգտահաշիվն ու կեղծ ինքնությունը համոզիչ դարձնելու համար. «Տեղադրված էր շատ գրավիչ տղամարդու մարմին՝ ամրակազմ և լավ հագնված: Երբ ես աղջկան ասացի, որ նկարում այդ մարդը չէ, նա սկզբում չհավատաց ինձ, սակայն մենք վերցրինք այդ նկարը և Google-ի օգնությամբ որոնեցինք այն: Գտանք տվյալ տղամարդու մի քանի նկարներ: Նա ֆուտբոլիստ էր» (ԱՕԱ):

26. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 199, 258 հոդվածներ:

Նման դեպքերում երեխաներին կարևորագույն մեդիագրագիտություն և մարդկանց ինքնությունն առցանց պարզելու հնարքներ ուսուցանելը կարող է շատ օգտակար լինել: Այդուհանդերձ, իրազեկվածության, կրթության և թվային գրագիտության բարձրացման նպատակով ցանկացած նախաձեռնություն պետք է լինի համակարգերին, քաղաքականությանը, համայնքներին և անհատներին ուղղված միջոցառումների առավել համապարփակ փաթեթի մաս: Թեև իրազեկվածության բարձրացման արշավները կարող են մեծահասակներին օգնել հասկանալու բռնարարների գործելակերպը, միջոցառումները պետք է ուղղված լինեն առցանց տիրույթները բոլոր երեխաների համար ապահով դարձնելուն: Այս հանցագործությունները կանխելու գործում ջանքերը պետք է ուղղվեն ոչ թե պատասխանատվությունը երեխաների կամ նրանց ընտանիքների վրա դնելու, այլ հանցագործությունների դեպքերը նվազեցնելու և առցանց տիրույթներն ապահով դարձնելու գործում հարթակների պատասխանատվությունը բարձրացնելու վրա :

Օգտվելով համայնքային աջակցության բացակայությունից: Բռնարարները հաճախ օգտվում են սոցիալական նորմերից, խարանից ու տաբուներից՝ երեխաներին իրենց ենթարկելու համար: Օրինակներից են սպառնալիքները, որ բռնարարն իր և երեխայի շփումների մասին կհայտնի ծնողներին, հատկապես, եթե երեխան առցանց սեռական բնույթի նյութեր է ուղարկել բռնարարին: Նույնիսկ այն դեպքերում, երբ երեխաները հարկադրված հայտնվել են այնպիսի իրավիճակներում, որոնք կարող են սոցիալական առումով անընդունելի վարքագիծ ենթադրել, իսկ բռնարարները սպառնում են նրանց բացահայտել, չափազանց կարևոր է, որ երեխաներն իմանան, որ իրենց կաջակցեն և կպաշտպանեն և ոչ թե կմեղադրեն կամ կպատժեն բռնության մեջ իրենց ենթադրյալ դերակատարության համար: Ուստի երեխաների և նրանց համար վստահելի մեծահասակների միջև ապահով և աջակցող հարաբերությունների ձևավորումը խիստ կարևոր է այդ վտանգներից երեխաներին զերծ պահելու համար:

Երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերի տարածումը՝ երեխայի կամքին հակառակ. Երեխային վերաբերող սեռական բնույթի նկարները կամ տեսանյութերը տարածելու սպառնալիքը ևս բռնարարների ամենատարածված գործողություններից է: Հեշտ հասանելի գեներատիվ ԱԲ գործիքների ի հայտ գալը բռնարարների համար առավել քան երբևէ հեշտացրել է երեխաների կեղծ (և գնալով իրականին ավելի մոտ) սեքսուալ պատկերների և տեսանյութերի ստեղծումը: Քննարկումներն այն մասին, որ առանց համաձայնության տարածվող երեխաներiի սեքսուալ բնույթի պատկերները, ստեղծվում են հենց երեխաների կողմից, այժմ հնացած են, քանի որ ներկայում ցանկացած ոք կարող է ստեղծել երեխաների՝ իրականին շատ մոտ, սակայն կեղծ սեքսուալ նկարներ: Այս զարգացումները ազդանշան են, որ հարթակներն ուղղակիորեն կանխեն նման բովանդակության ստեղծումն ու տարածումը և կիրառեն բացահայտման և հեռացման ավելի խիստ քաղաքականություններ և մեխանիզմներ, իսկ արդարադատության համակարգը պետք է հավուր պատշաճի և անհապաղ քրեականացնի երեխաների նկատմամբ սեռական բռնության նյութերի ստեղծումն ու տարածումը:

2. ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎՐԱ

Սեռական բռնությունը տևական և հետևանքներով լի ներգործություն է ունենում երեխաների վրա՝ սկսած հուզականից ու հոգեբանականից մինչև ֆիզիկական, ֆինանսական և սոցիալական: Գոյություն ունեն լայնածավալ հետազոտություններ, որտեղ ուսումնասիրվում է, թե մանկության տարիներին տեղի ունեցած սեռական բռնությունն ինչպես կարող է անդրադառնալ մարդկանց բարօրության վրա[27]: Ավելի քիչ բան է հայտնի այն ներգործության մասին, որ տեղի է ունենում բռնության հետևանքով առցանց հարթակներում, կամ որն ինչ-որ կերպ պարունակում է թվային և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում:

"Վերջ տալ մնասին" հետազոտության հայաստանյան եզրահանգումներից հետևում է, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումը և բռնությունը կարող են ունենալ նույնքան ծանր հետևանքներ, որքան երեխայի սեռական շահագործման և բռնության այլ ձևերը՝ ներառյալ հոգեկան, սոցիալական, հուզական և ֆիզիկական մնասները: Հետևաբար, տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական բռնությանն արձագանքելիս հարկավոր է հաշվի առնել սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների վրա ներգործության և նրանց անհրաժեշտ աջակցության մասին արդեն առկա տվյալները:

Սույն գլխում նաև անդրադարձ է արվում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերին բնորոշ ազդեցության որոշ տեսակներին, որոնք հարկ է հաշվի առնել կանխարգելման և արձագանքման մեխանիզմներ մշակելիս: Օրինակ՝ մշտական վախը, որ երեխայի սեռական բռնության վերաբերյալ նյութերը կարող են հայտնվել առցանց տիրույթում և անընդհատ շրջանառվել, կարող է լուրջ ներգործություն ունենալ բռնությունը վերապրած անձի բարեկեցության վրա, նույնիսկ բռնությունը դադարելուց հետո: Բացի այդ՝ կարող են ի հայտ գալ մնասակար այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են ինքնամեղադրանքը, տուժողին կամ զոհին մեղադրելու՝ լայն տարածում ունեցող գործելակերպը և սոցիալական խարանը՝ այն թյուրընկալման հետևանքով, որ իբրև թե երեխաները և երիտասարդները դերակատարություն են ունեցել իրենց նկատմամբ գործադրված սեռական բռնության և/կամ շահագործման մեջ, հատկապես, երբ խոսքը սեռական բնույթի բովանդակության ստեղծման և տարածման մասին է:

> ***Նրանք տեղափոխվեցին [...], քանի որ ամբողջ համայնքը գիտեր դեպքի մասին, աղջկան թույլ չէին տալիս դպրոց հաճախել, իսկ երբ փորձել էր հաճախել գոնե որոշ դասերի, նրան ծեծել էին, ծեծել էին ճանապարհին, նրա առջև փակել էին դռները և թույլ չէին տվել ներս մտնել, այդ պատճառով այս անձը ստիպված էր տեղափոխվել այլ վայր, մեկ այլ քաղաք (ԱՈՄ):***

27. Kristen W. Springer, et al., "The long-term health outcomes of childhood abuse: An overview and a call to action" (Երեխայի նկատմամբ բռնության տևական առողջական հետևանքները. ուսումնասիրություն և գործելու կոչ), *Journal of General Internal Medicine*, 18(10), 2003, 864–870 էջեր; Helen P. Hailes, et al., "Long-term outcomes of childhood sexual abuse: An umbrella review" (Երեխայի նկատմամբ բռնության տևական առողջական հետևանքները. ամփոփ ուսումնասիրություն), *The Lancet Psychiatry*, 6(10), 2019, 830–839 էջեր; Lane Strathearn, et al., "Long-term cognitive, psychological, and health outcomes associated with child abuse and neglect" (Երեխայի բռնության և անտեսման տևական կոգնիտիվ, հոգեբանական և առողջական հետևանքները), *Pediatrics*, 146(4), 2020, e20200438; Manukrishnan and Krishnamani Bhagabati, "Surviving childhood sexual abuse: A qualitative study of the long-term consequences of childhood sexual abuse on adult women's mental health" (Մանկության տարիքում տեղի ունեցած սեռական բռնությունը. մանկության տարիքում տեղի ունեցած սեռական բռնության տևական հետևանքները չափահաս կանանց հոգեկան առողջության վրա), *Journal of Psychosexual Health*, 5(4), 2024, 253–262 էջեր:

2.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագետները նկատել են, որ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործումն ու բռնությունը լուրջ հետևանքներ են ունենում երեխաների սոցիալական բարօրության վրա: Այդ հետևանքներից են սոցիալական մեկուսացումն ու տուժողին կամ զոհին մեղադրելը, ընտանեկան կոնֆլիկտները, հասակակիցներից մեկուսանալը և նրանցից խուսափելը: Այս գործոնները կարող են է՛լ ավելի ծանրացնել սեռական շահագործման և բռնության տրավմատիկ փորձառությունը, որը հանգեցնում է հավելյալ վնասի և, մինչև անգամ, կրկնազոհականացման:

Հասարակական խարանը և մեկուսացումը

Գրեթե բոլոր մասնագետները հասարակական խարանն ու մեկուսացումը համարում են տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների համար ակնկալվող հետևանք: Դեպքերից մեկում 13-ամյա երեխան վերաինտեգրման հետ կապված էական խոչընդոտների էր բախվել, երբ հանրայնացվել էին նրան բազմիցս սեռական շահագործման ենթարկելու դեպքերը: Բռնության մասին հայտնել էին ոստիկանությանը, իսկ բռնարարը ձերբակալվել էր: Այդուհանդերձ, դեպքի մասին տեղեկությունը հայտնի էր դարձել համայնքում: Եվ այլ վայր փոխադրվելու անհրաժեշտությունն անխուսափելի էր դարձել երեխայի նկատմամբ համայնքի թշնամական վերաբերմունքի և նրան մեկուսացնելու պատճառով: "Նրանք տեղափոխվեցին [...], քանի որ ամբողջ համայնքը գիտեր դեպքի մասին, աղջկան թույլ չէին տալիս դպրոց հաճախել, իսկ երբ փորձել էր հաճախել գոնե որոշ դասերի, նրան ծեծել էին, ծեծել էին ճանապարհին, նրա առջև փակել էին դռները և թույլ չէին տվել ներս մտնել, այդ պատճառով այս անձը ստիպված էր տեղափոխվել այլ վայր, մեկ այլ քաղաք" (ԱՈՄ):

Երբ համակարգը ձախողում է գաղտնիության ապահովումը, դա ոչ միայն բացասաբար է անդրադառնում երեխաների, երիտասարդների ու նրանց ընտանիքների վրա, այլև կարող է նախազգուշացում լինել ուրիշների համար և սասանել համայնքի վստահությունը դեպքի մասին հայտնելու անհրաժեշտության հարցում, ինչն էլ ուրիշներին հետ կպահի օգնության դիմելուց: Այս դինամիկան կարող է հանգեցնել նրան, որ ընտանիքները կխուսափեն շահագործման և բռնության մասին պաշտոնական ուղիներով հայտնելուց և ստիպված կլինեն իրավիճակը կարգավորել ոչ պաշտոնական եղանակներով:

Ըստ ծառայություն մատուցողներից մեկի՝ մեկ այլ ընտանիք էլ ստիպված է եղել լքել տունը, քանի որ մայրը ամաչում էր. նրան թվում էր, թե հարևանները դատապարտող հայացքով են նայում իրեն: Ինչպես նշել է ծառայություն մատուցողը. "Մայրը շարունակ պնդում էր. *"Ես չեմ կարող ապրել այստեղ, որովհետև ինձ թվում է, որ երբ բացում եմ դուռը և գնում աշխատանքի կամ խանութ, բոլորը ինձ են նայում կամ ծիծաղում են""* (ԱՕԱ):

Գյուղական վայրերից մեկում խարանն ու մեկուսացումը փոխանցվել են սերնդեսերունդ, և համայնքը դատապարտում և ամոթանք էր տալիս ինչպես բռնության ենթարկված երեխաներին, այնպես էլ նրանց մորը: Սա կարող է մշակութային կամ սեռականացված նորմերի դրսևորում լինել, որոնք կանանց և նրանց երեխաներին ավելի շուտ դատապարտում են ենթադրյալ բարոյական ձախողումների համար, քան վերաբերվում որպես բռնություն վերապրածների. "Դեռ երիտասարդ տարիքից նրանց միջավայրի մարդիկ ասում էին, որ իրենց մայրը հայտնի էր իր "արատավոր" վարքով, բացի այդ՝ նրանք նաև շեշտում էին, որ երեխաներն արդեն ընդօրինակել են իրենց մոր վարքը և կարող էին կապեր ունենալ այլ մարդկանց հետ. այո՛, նրանք թիրախավորվել, քննարկվել ու քննադատվել են" (ԱՕԱ):

Ծառայություն մատուցողները և արդարադատության ոլորտի մասնագետները ևս նշել են, որ տեղական համայնքի կողմից մերժված լինելու ռիսկը կարող է հատկապես բարձր լինել այն ժամանակ, երբ երեխան շարունակաբար ենթարկվում է շահագործման և բռնության: Հարևաններն ու համայնքները շարունակական բռնությունը երբեմն վերագրում են երեխայի որոշակի գործողություններին և առանձնահատկություններին: Ինչպես նշել է արդարադատության ոլորտի մասնագետներից մեկը.

Իմանալով, որ երեխան արդեն իսկ [կրկին] ենթարկվել է սեռական բռնության", փոքր համայնքներում սկսվեցին երեխայի հետապնդումները (մեջբերում խոսքից): նրանք ասում էին. "Միևնույն է, դա արդեն դուր է գալիս քեզ, դու ունես այսպիսի ու այնպիսի փորձ (բռնության), նշանակում է՝ դու կարող ես անել դա (կրկին բռնության ենթարկվել), ուրեմն արա այդ" և այլն: հետևաբար որոշ դեպքերում, ցավոք, կանխարգելմանն ուղղված միակ քայլը երեխային մեկ այլ մարզ փոխադրելն է լինում" (ԱՈՄ):

Այս օրինակներն ընդգծում են տուժողներին մեղադրելու, կրկնազոհականացման և սոցիալական մեկուսացման փոխառնչությունը:

Ընտանեկան կոնֆլիկտ

Միջին հաշվով, Հայաստանում ծնողները կարծես վստահ են, որ կարող են օգնել իրենց երեխաներին, եթե նրանք "առցանց ենթարկվեն մի բանի, որը կանհանգստացնի կամ կհիասթափեցնի նրանց": Այս հետազոտության համար հարցված 1,002 ծնողների 87 տոկոսը վստահ էր, որ կարող են օգնել երեխային հաղթահարել այն ամենն, ինչ անհանգստացնում կամ վշտացնում է նրան առցանց տիրույթում: Այս պատասխանը ավելի հաճախ էր հանդիպում 12-14 տարեկանների ծնողների շրջանում 15-17 տարեկանների ծնողների համեմատ: Նմանապես, քաղաքային բնակավայրերում ապրող երեխաների ծնողները ավելի հաճախ էին ասում, որ կարող են օգնել իրենց երեխաներին, քան գյուղական վայրերում ապրող ծնողները: Գենդերային տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չէին, ուստի, ստորև ներկայացված չեն:

Գծապատկեր 5. Այն ծնողների տոկոսը, որոնք նշել են, որ կարող են օգնել իրենց երեխային՝ հաղթահարելու նրան անհանգստացնող կամ հիասթափեցնող առցանց երևույթները



Հիմքը՝ համացանց օգտագործող 12-17 տարեկան երեխաների 1,002 ծնողներ կամ խնամակալներ

2.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Միևնույն ժամանակ, ծնողների 27 տոկոսը նշել է, որ կսահմանափակեին իրենց երեխայի կողմից համացանցի օգտագործումը, եթե նա առցանց առնչվեր անհանգստացնող կամ վշտացնող երևույթների հետ: 7 տոկոսն ասել է, որ կպատժեին իրենց երեխային: Ծառայություն մատուցողների դիտարկումների համաձայն՝ տուժողներին մեղադրելու և պատժելու գործելակերպը կարող է նպաստել երեխաների և նրանց խնամողների միջև հարաբերությունների խզմանը: Առաջնային օղակի աշխատողը նշել է մի աղջկա մասին, որը հիասթափություն էր հայտնել, երբ մայրը բռնության մասին տեղեկանալուց հետո սահմանափակել էր հեռախոսի հասանելիությունը: Ըստ առաջնային օղակի աշխատողի՝ աղջիկն ասել էր. "Ես չեմ կարող ապրել նրա հետ, նա ինձ չի գնահատում, նա ինձ ապտակել է" (ԱՕԱ): Մեկ ուրիշ դեպքում մայրը աղջկա սոցիալական ցանցի օգտահաշվում գտել էր նրա անկեղծ լուսանկարներն ու առցանց խոսակցությունները: Առաջնային օղակի աշխատողի խոսքերով՝ նա զայրացել էր դստեր վրա և կոտրել հեռախոսը, մեղադրել աղջկան և ասել, որ նա պետք է ամաչի, և որ արժանի չէ լինելու իր երեխան, ինչն էլ հանգեցրել էր թեժ վեճի, և աղջիկը փախել էր տնից: Սեքսուալ բնույթի նկարներ ստեղծելու և տարածելու դեմ ծնողների ուժեղ դիմադրությունն ակնհայտ է դառնում նաև հարցման տվյալներից: Օրինակ՝ հարցմանը մասնակցած ծնողների 94 տոկոսն ասել է, որ համոզված են, որ "սխալ է, որ մարդն իրեն մերկ լուսանկարահանում կամ տեսանկարահանում է:": Ծնողները նման կարծիք հայտնել էին՝ անկախ իրենց երեխայի տարիքից, սեռից, և անկախ նրանից՝ ապրում են քաղաքային, թե գյուղական բնակավայրում:

Ծնողների մեծամասնությունն (95 տոկոսը) կարծում է, որ ինչ-որ մեկի մերկ լուսանկարները կամ տեսագրությունները տարածելը պետք է անօրինական լինի: Ինչպես վերևում, այստեղ ևս երեխայի տարիքով, սեռով կամ բնակության վայրով պայմանավորված վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չէին նկատվել: Չնայած այն համոզմանը, որ դա անօրինական պետք է լինի, ծնողների 90 տոկոսն ասել է, որ եթե ինչ-որ մեկը լուսանկարի կամ տեսագրի ինքն իրեն, և այդ նյութերն ուղարկվեն այլ անձանց, ապա դա իրենց մեղքն է: Աղջիկների ծնողների շրջանում այս տեսակետն ավելի էր տարածված (93 տոկոս), քան տղաների ծնողների շրջանում (88 տոկոս). սա, թերևս, արտացոլում է տղաների և աղջիկների սեռականությանն առնչվող տարբեր ակնկալիքները, և ավելի մեծ հավանականությունը, որ աղջիկները կմեղադրվեն իրենց նկատմամբ բռնության կամ շահագործման համար, եթե տուժեն ինչ-որ պահի սեփական արտադրության սեքսուալ նյութերի տարածման հետևանքով:

Նման վերաբերմունքը կարող է կարևոր պատկերացում տալ ընտանիքների արձագանքի վերաբերյալ, հատկապես այն դեպքերում, երբ երեխայի շահագործման մեջ կիրառվել են երեխայի նկատմամբ սեռական շահագործման և բռնության նյութեր: Ընտանիքի և հասարակության բացասական արձագանքի և սոցիալական ճնշման վախը կարող է ծուղակում հայտնվելու զգացողություն ձևավորել երեխաների մեջ, ինչը բռնարարներն օգտագործում են երեխաներին բռնության շրջապտույտում պահելու համար: Այնուամենայնիվ, երեխաներին պատշաճ աջակցություն չցուցաբերելը, անկախ բռնության հանգեցնող կամ բռնության ընթացքում կատարվող գործողություններից, կարող են չափազանց վնասակար լինել երեխաների համար, հատկապես երբ նրանք օգնության կարիք ունեն: Պատկերների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաներին մեղադրելը լի է հավելյալ վնաս պատճառելու վտանգներով, և այս մոտեցումը կարող է շատ արագ անհիմն դառնալ՝ հաշվի առնելով գեներատիվ ԱԲ-ով իրական երեխաների պատկերով սեռական բռնության կեղծ նյութեր պատրաստելու հանգամանքը: Սա երեխաներին դարձնում է է՛լ ավելի խոցելի կեղծված նկարների և տեսանյութերի միջոցով շահագործման և բռնության նկատմամբ, և է՛լ ավելի է մեծացնում իրենց շրջապատող մեծահասակների ըմբռնման և աջակցության կարիքը:

Ծնողների վերաբերմունքից բացի՝ հարկ է նշել, որ բուն իրավական կարգավորումները կարող են երեխաներին հավելյալ վնաս պատճառել: Իհարկե, հայաստանյան օրենսդրությունը քրեական պատասխանատվության տարիքը սահմանում է 16 տարեկանը[28], ինչը նշանակում է, որ 16 և 17 տարեկան երեխաները, որոնք ստեղծում կամ տարածում են ինտիմ բնույթի նյութեր, կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել, քանի որ նման բովանդակությունը կարող է դիտարկվել որպես երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութ[29]: Այնուամենայնիվ,

28. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 19-1 հոդված:
29. Նույն տեղում, 300-5 հոդված:

ողջունելի է, որ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվությունից ազատում է այն դեպքերում, երբ հանցանքը կատարվել է ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրանքով[30], ինչպես նաև պատասխանատվությունից առանձին ազատում է այն երեխաներին, որոնց հարկադրել են կատարել թրաֆիքինգի վերաբերյալ դրույթներով նախատեսված հակաօրինական գործողություններ[31]: Թեև այս դրույթները վերաբերում են բռնության կամ շահագործման տարրեր պարունակող իրավիճակներին, օրենսդրությունը ներկայում չի նախատեսում նույնպիսի բացառություններ այն երեխաների համար, որոնք իրենց կամքով ստեղծել կամ տարածել են ինքնուրույն արտադրվածսեռական բնույթի նյութեր: Այս բացը լրացնելը կարևոր է՝ ապահովելու համար, որ երեխաներին վերաբերվեն նախևառաջ որպես պաշտպանության կարիք ունեցող անձանց, այլ ոչ թե բռնարարների, երբ իրենց կամքով ստեղծված կամ տրամադրված նյութերը հետագայում տարածվել են առանց իրենց թույլտվության: Սա հատկապես կարևոր է այն համատեքստում, երբ տարածված վերաբերմունքն արդեն իսկ ենթադրում է մեղադրանք նրանց նկատմամբ՝ սեռական բնույթի բովանդակություն տարածելու համար:

Հասակակիցներից մեկուսացումը

Մասնագետները հասակակիցների կողմից մեկուսացումը նշել են որպես բռնության հետևանք, որը նկատվել է երեխաներին և երիտասարդներին աջակցելիս: Ըստ մասնագետների՝ բռնության ենթարկվածները կարող են հեռացվել կամ մեկուսացվել սեփական սոցիալական շրջապատից խարանի կամ վախի պատճառով: Նկարագրված դեպքերից մեկում 16-ամյա աղջիկն ու տղան ծանոթացել են առցանց, ապա, ըստ առաջնային օղակի աշխատողի, որոշ ժամանակ սիրահարված են եղել: Աղջիկը տղային ուղարկել է ինտիմ լուսանկարներ, որոնք տղան օգտագործել է նրան շանտաժի ենթարկելու և գումար պահանջելու համար: Աղջիկը նրան մեծ գումարներ և արդուզարդի պարագաներ է տվել, որոնք վերցրել է տնից: Երբ շորթումը սաստկացել է, դեպքն ի վերջո բացահայտվել է աղջկա ազգականների կողմից, և դիմում է ներկայացվել ոստիկանություն: Բացահայտումից հետո աղջկան մեղադրել էին տղայի հետ հարաբերություններ ունենալու և նրան գումար տալու համար: Թեև նա շահագործման և բռնության զոհն էր, ենթարկվել էր հակադարձ հարվածի, որի հետևանքով էլ իրեն հեռու էր պահում ընկերներից: Իրավիճակն ավելի էր սրվել մոր արձագանքի հետևանքով, քանի որ նա սկսել էր խիստ հետևել և վերահսկել դստեր տեղաշարժը, ինչը առաջնային օղակի աշխատողի կարծիքով աղջկան չվստահելու հետևանք էր.

> *Այդ դեպքերից հետո նա փոխեց դպրոցը, չէր շփվում ընկերներից որևէ մեկի հետ, նրանց հետ կապի դուրս չէր գալիս, փոխել էր հեռախոսահամարը, իսկ մայրն ուղեկցում էր նրան ամենուրեք, քանի որ չէր վստահում դստերը: Մեզ այցելելիս, դպրոց գնալիս, խանութ կամ զբոսանքի գնալիս մայրը հետևում էր նրան ամբողջ ժամանակ: Հիմա մենք նաև այլ խնդիր ունենք. նա [աղջիկը] որոշել է չհաճախել համալսարան... (ԱՕԱ):*

Կապված լինելով հասակակիցներից մեկուսացման հետ՝ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործումը և բռնությունը կարող են էական ազդեցություն ունենալ կրթական գործընթացին մասնակցելու՝ երիտասարդների կարողության վրա: Վախը, հուզական սթրեսն ու խարանը կարող են խաթարել նրանց կրթական ներգրավվածությունը և հետագա ձգտումները: Առաջնային օղակի աշխատողների բերած որոշ օրինակներից են բռնության ենթարկվածի նախընտրությունը անցնել հեռավար ուսուցման, քանի որ վախենում էր, որ կարող են ճանաչել իրեն և ծանոթ լինել իր պատմությանը, կամ խարանի վախի հետևանքով երեխաների՝ դպրոցը փոխելը, վերապրածների՝ դպրոց չհաճախելը, քանի որ բռնությունն ազդել էր նրանց շարժառիթների և ապագայի հույսերի վրա: Ծառայություն մատուցողի բերած մի օրինակում 16-ամյա աղջկան իր իսկ տանը թաքուն նկարել էր նրա ընկերը: Նա սկսել էր տարածել նկարները, որոնք, ի վերջո, շրջանառվել էին ամբողջ դպրոցում, այդ թվում՝ աշակերտների, ուսուցիչների և ծնողների շրջանում: Չնայած դրան՝ դպրոցի ղեկավարությունն աղջկան պաշտպանելուն ուղղված որևէ քայլ չէր ձեռնարկել.

30. Նույն տեղում, 35 հոդված:
31. Նույն տեղում,188-4, 188-5, 189 հոդվածներ:

2.1 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

> *Դպրոցի ուսուցիչները խնդիրը լուծելու որևէ հստակ քայլ չձեռնարկեցին, նրանք որևէ կերպ չհանդիմանեցին տղաներին: Չձեռնարկեցին որևէ քայլ, և կարող ենք ասել, որ աղջկա հեղինակությունը մի տեսակ... նրա հոգեբանական, հուզական... ամբողջ այդ ընթացքում, և միակ լուծումն այն էր, որ ընտանիքը սկսեց մտածել դպրոցը փոխելու մասին... Այդպիսով նա փոխեց դպրոցը, և նրանք մտածում էին, որ դա միակ լուծումն է (ԱՕԱ):*

Ընտանեկան հարաբերությունների խզումը, հասակակիցներից մեկուսացումը և կրթությունից դուրս մնալը վկայում են, որ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների հարաբերությունները շրջապատի հետ կարող են էապես խաթարվել: Դրա հետևանքով երեխաները մեկուսացվում են օգնությունից, երբ դրա կարիքը նրանք ամենաշատն ունեն: Կարևոր է նշել, որ այս փորձառությունը նաև ընդգծում է հասարակական խարանի և ամոթի հավանական ներգործությունը ընտանիքների, հասակակիցների և դպրոցների արձագանքի վրա, ինչն էլ հուշում է սեռական բռնության հետ կապված ամոթն ու տաբուները անհատական, միջանձնային, համայնքային և հասարակական մակարդակներում հաղթահարելու անհրաժեշտության մասին: Այս եզրահանգումները նաև հուշում են, որ մեծահասակներն ու աջակցող կազմակերպությունները կարող են ավելի մեծ դեր ստանձնել երեխաներին օգնելու հարցում, ընդ որում՝ խոսքը ոչ միայն բռնության ենթարկված երեխաների, այլև նրանց աջակցող երեխաների մասին է՝ դրանով իսկ նրանց համար ստեղծելով ապահով միջավայր, որպեսզի մեծահասակների օգնությանը նրանք դիմեն առանց ամոթանքի, խարանի կամ պատժվելու վախի:

2.2 ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հայաստանում երեխաների շրջանում անցկացված հարցման արդյունքները բացահայտել են նշանակալի կապ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման ու բռնության ու հոգեկան առողջության ցուցանիշների միջև՝ սկսած տագնապայնությունից մինչև ինքնավնասում: Նույն արդյունքներն են նկատվել տղաների և աղջիկների շրջանում, ինչը վկայում է այն մասին, որ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ներգործությունը հոգեկան առողջության վրա նույնն է՝ անկախ երեխայի սեռից: Հարցումներին մասնակցած ծառայություն մատուցողները նկատել են նաև ներգործությունը երեխաների և երիտասարդների հոգեկան առողջության վրա, այդ թվում՝ հուզական կարգավորման հետ կապված դժվարությունները, տագնապայնությունն ու դեպրեսիան, որոնք կարող են հանգեցնել նվազ մասնակցության և նպատակների կորստի:

Տագնապայնության ախտանշանները

Հարցման տվյալների համաձայն, տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների մոտ էապես բարձրացել են տագնապայնության ցուցանիշները միջին հաշվով, բռնության ենթարկվածների մոտ տագնապայնության ցուցանիշները 26 տոկոսային կետով ավելի էին բռնության չենթարկվածների ցուցանիշներից:[32] Բռնության և տագնապայնության միջև այս փոխազդեցությունն ակնհայտ էր նաև բռնությունից տուժած երիտասարդներին աջակցություն ցուցաբերող ծառայություն մատուցողների հիշատակած գործերում: Օրինակ՝ ապաստարանի անձնակազմի անդամը նկարագրել է երեխայի հուզական վիճակը, երբ աղջկան առաջին անգամ տեղավորել էին հաստատությունում. "Աղջիկը մի քանի անգամ լաց եղավ, նա հուզականորեն անկայուն վիճակում էր, հետո սկսեց ժպտալ, ծիծաղել" (ԱՕԱ): Մեկ այլ դեպքում 12-ամյա տղային ենթարկել էին ֆիզիկական բռնության, ինչպես նաև շահագործել թվային տեխնոլոգիաների միջոցով: Այս տղան ուներ ընդհանրացված տագնապայնություն և վախ, նրան բուժում էին նշանակել, և ինչպես ծառայություն մատուցողն է նշել. "Նա վախենում էր մթությունից, մենակ մնալուց, նույնիսկ ցերեկը" (ԱՕԱ):

Երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերի ստեղծումն ու տարածումը տեխնոլոգիայի կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության յուրօրինակ բաղադրիչ է, որը հետք է թողնում երեխայի հոգեկան բարօրության վրա: Համաձայն ծառայություն մատուցողների՝ վախը, որ սեռական բռնության նյութը կհրապարակվի, կգտնվի կամ կշրջանառվի, հանգեցնում է երեխայի անպաշտպանվածության ընդհանուր զգացողության, հարաբերություններ հաստատելու վախի և բարձր տագնապայնության: Մասնագետների նկարագրած երկու դեպքում ցույց է տրվել այդ վախերի ներգործությունը երեխայի կյանքի վրա ընդհանուր առմամբ: Դեպքերից մեկում երիտասարդ աղջիկը լիովին փոխել էր իր տեսքը, դուրս եկել դպրոցից և հեռավար ուսուցման անցել, դադարեցրել հարաբերությունները, որովհետև մտահոգվում էր, որ "ինչ-որ մեկը կարող է ծանոթ լինել իրեն, իր պատմությանը, հիշեցնել այդ ամենի մասին կամ վիրավորել" (ԱՕԱ): Մեկ այլ երեխա էլ նման մտահոգություններ արտահայտել էր ապագա հարաբերությունների առումով՝ վախենալով, որ "եթե ինքը նոր հարաբերություններ սկսի այլ տղաների հետ, ապա այդ տղան կտեսնի այն նկարները... Նա ուներ նաև ընդհանուր վախեր՝ կապված հարաբերություններ սկսելու և վստահության հետ (ԱՕԱ)": Այս օրինակները ցույց են տալիս այն տևական ներգործությունը, որ պատկերների կիրառմամբ գործադրված բռնությունը կարող է ունենալ երեխայի, նրա ապագա հարաբերությունների և, հնարավոր է, ամբողջ կյանքի վրա:

Չնայած երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերի շարունակական տարածման հարուցած տևական վնասին՝ հայաստանյան օրենսդրությունը համացանցային ծառայություն մատուցողներին և առցանց հարթակներին չի պարտավորեցնում պարզել, արգելափակել նման նյութերը կամ հայտնել դրանց մասին: Բացի այդ՝ երրորդ կողմի ստեղծած նյութերի համար միջանկյալ պատասխանատվության վերաբերյալ համապարփակ իրավական կարգավորումների բացակայությունը նշանակում է, որ համացանցային ծառայություն մատուցողները և առցանց հարթակները չեն կարող պատասխանատվության ենթարկվել օգտվողների կողմից վերբեռնվող

32. Սույն վերլուծության շրջանակում տագնապայնության գնահատականները վերլուծվել են 0-1 միջակայքում, որտեղ բարձր միավորները բնութագրում են առավել հաճախակի կամ սուր ախտանշանների առկայություն: Միջին գնահատականների տարբերությունները ներկայացված են վերևում, սակայն հաշվարկները հիմնված են փոքր ենթախմբերի վրա, և դրանք պետք է մեկնաբանվեն վերապահումով՝ հաշվի առնելով վստահելիության միջակայքերի մեծությունը (0.154–0.368):

անօրինական նյութերի համար, ինչի պատճառով էլ այդ ծառայություն մատուցողներն ու հարթակներն այնքան էլ շահագրգռված չեն հայտնաբերելու, հեռացնելու կամ երեխայի նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութերը կամ կանխելու դրանց տարածումը: Հետևաբար անհրաժեշտ են թիրախային օրենսդրական բարեփոխումներ՝ այդ բացերը լրացնելու համար, հատկապես սահմանելով պարտադիր հայտնելու պահանջ և պատասխանատվության ստանդարտներ, որոնք պարտավորեցնում են համացանցային ծառայություն մատուցողներին ու առցանց հարթակներին ձեռնարկել գործուն քայլեր երեխայի նկատմամբ սեռական բռնության նյութերի տարածման դեմ:

> *Մայրը շարունակ պնդում էր. "Ես չեմ կարող ապրել այստեղ, որովհետև ինձ թվում է, որ երբ բացում եմ դուռը և գնում աշխատանքի կամ խանութ, բոլորը ինձ են նայում կամ ծիծաղում են" (ԱՕԱ):*

Ինքնասպանություն և ինքնավնասում

Ըստ հարցման արդյունքների՝ Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաները գրեթե 12 անգամ ավելի են հակված ինքնասպանության մտքերի և վարքագծի[33], և նրանց շրջանում 21 անգամ ավելի բարձր է ինքնավնասման ռիսկը[34], քան այն երեխաների շրջանում, որոնք չեն ենթարկվել նման բռնության: Մասնագետներն անդրադարձել են տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության երեք դեպքի, որոնք հանգեցրել են ինքնասպանության, ինքնասպանության փորձի և ինքնավնասման: Մի դեպքում տեղի էր ունեցել տղայի ինքնասպանություն՝ մահվան ելքով, իսկ մեկ այլ՝ սեռական շանտաժի և շորթման դեպքում երիտասարդ աղջիկը ինքնասպանության փորձ էր արել իր սեռական բնույթի լուսանկարների տարածվելու վախի պատճառով (շարունակվող կոնտակտային սեռական բռնության պայմաններում): Ինքնասպանության փորձից հետո, աղջկան աջակցող առաջնային օղակի աշխատողի խոսքերով, "Հայտնի էր դարձել, որ տեղի է ունեցել սեռական բռնություն, և նա ամաչում էր դրա մասին իր ծնողներին պատմելուց, հետևաբար ելքը, այսպես ասած, այդ ձևով էր գտել" (ԱՕԱ):

33. Սույն վերլուծության շրջանակում ինքնասպանության մտքերի և վարքագծի հարաբերական ռիսկերն արձանագրվել են վերջին տարվա ընթացքում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների, ինչպես նաև այդ ժամանակահատվածում բռնության չենթարկված երեխաների շրջանում: Հաշվարկները հիմնված են փոքր ենթախմբերի վրա, և դրանք պետք է մեկնաբանվեն վերապահումով՝ հաշվի առնելով վստահելիության միջակայքերի մեծությունը (5.383, 27.068):
34. Սույն վերլուծության շրջանակում ինքնավնասման հարաբերական ռիսկերն արձանագրվել են վերջին տարվա ընթացքում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների, ինչպես նաև այդ ժամանակահատվածում բռնության չենթարկված երեխաների շրջանում: Հաշվարկները հիմնված են փոքր ենթախմբերի վրա, և դրանք պետք է մեկնաբանվեն վերապահումով՝ հաշվի առնելով վստահելիության միջակայքերի մեծությունը (6.683, 65.691):

2.3 ՖԻԶԻԿԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաները ենթարկվում են նաև ֆիզիկական ներգործության: Սա կարող է այնքան էլ տրամաբանական չթվալ, սակայն ևս մեկ անգամ ընդգծում է, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների նկատմամբ սեռական բռնությունը պետք է դիտարկել ավելի լայն համատեքստում և իր բոլոր դրսևորումներով: Բռնարարների համար թվային տեխնոլոգիաները կարող են նպատակին հասնելու միջոց լինել՝ հեշտացնելով առերես հանդիպումների և կոնտակտային սեռական բռնության կազմակերպումը, որոնք երեխաների համար լուրջ ֆիզիկական վնասվածքների և բացասական առողջական հետևանքների կարող են հանգեցնել:

Մասնագետների հիշատակած դեպքերից առնվազն չորսում բռնությունը երեխայի վրա ունեցել է ֆիզիկական ներգործություն, դրանց թվում՝ սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ, գինեկոլոգիական վնասվածքներ և հղիություն: Նկարագրված դեպքերում գրանցվել է "գիտակցության կորուստ և արյունահոսություն"՝ խմբակային բռնի սեռական ակտի հետևանքով (ԱՈՄ), սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությամբ վարակում՝ չափահաս տղամարդու կողմից սեռական բռնության հետևանքով, որը առցանց հարթակների միջոցով գրումինգի էր ենթարկել և կազմակերպել առերես հանդիպում, 13-ամյա աղջկա հղիություն և 13-ամյա աղջկա անմիզապահություն՝ կոնտակտային սեռական բռնության հետևանքով:

Սեռական բռնության և շահագործման ենթարկված 13-ամյա աղջկա միջադեպը ցույց է տալիս, թե թվային տեխնոլոգիաները որքան միահյուսված կարող են լինել կոնտակտային սեռական բռնության հետ, և թե ինչպիսի ծանր ֆիզիկական հետևանքներ այն կարող է ունենալ:

> *Այս երեխային երեք երիտասարդներ հրավիրել էին քաղաքից դուրս... Երեխան այդ ակտի [սեռական բռնության] ժամանակ կորցրել էր գիտակցությունը: Նրանք [բռնարարները] շատ էին վախեցել դրանից, որովհետև երեխան արյունահոսում էր, և իրենք չգիտեին ինչ անել նրա հետ: Նրանք երեխային այդ վիճակում տեղափոխեցին հիվանդանոց: Նրանք, իհարկե, երեխային պարզապես թողեցին հիվանդանոցում և գնացին՝ առանց որևէ տեղեկություն տալու, սակայն քանի որ տեղանքում կային տեսախցիկներ և այլ հնարավորություններ, հնարավոր եղավ բացահայտել ամեն ինչ: Եվ երբ այս գործի մասին հայտնեցին պատկան մարմիններին, նրանք [իրավապահ մարմինները] սկսեցին ուսումնասիրել [առցանց հայտնաբերված նկարները]... և հասկացան, որ այդ տարվա ընթացքում երեխայի բոլոր լուսանկարները, նրա մասին բոլոր տվյալները ձեռքից ձեռք են անցել [բռնարարների միջև] (ԱՕԱ):*

3. ԲՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼԸ

Բռնության մասին հայտնելը տուժողների համար հաճախ դժվար է՝ անորոշության, վախի և ամոթի պատճառով: Այս գլխում ընդգծված են մի շարք գործոններ, որոնք նպաստում են ապահով և բարենպաստ միջավայրի ստեղծմանը, որտեղ երեխաները կարող են հայտնել բռնության մասին, ինչպես նաև այն խոչընդոտները, որոնք Հայաստանում խանգարում են երեխաներին իրենց հետ պատահած շահագործման և բռնության մասին ինչ-որ մեկի հետ խոսելու:

3.1 ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ և ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Սեռական շահագործման և բռնության դեպքերի մասին երբեմն հայտնում են երեխաները՝ գիտակցաբար, թե պատահաբար, ամբողջությամբ, թե մասամբ: Այնուամենայնիվ, տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դեպքերի մասին հայտնելու գործելակերպը Հայաստանում այնքան էլ տարածված չէ:

Հարցման տվյալները վկայում են, որ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դեպքերի մեծ մասում (53 տոկոսի) երեխաները որևէ մեկին չեն պատմել, թե ինչ է տեղի ունեցել:

Մասնագետներն անդրադարձել են այն դժվարություններին, որոնց երեխաները կարող են առերեսվել դեպքերի մասին հայտնելուց հետո: "Նա [երեխա/երիտասարդ անձը] դեպքը բացահայտվելուց հետո ավելի կոտրված էր... Եվ հիմնականում այդ պատճառով է, որ բազմաթիվ դեպքեր չբացահայտված են մնում, շատերը չեն ցանկանում բարձրաձայնել, և մեր ամոթը մենք պահում ենք մեր ներսում" (ԱՕԱ):

> *Այդ աղջիկն ինձ դիմեց իր խնդիրներով, այո՛, անձնական խնդիրներով... նա հուզական անկայուն վիճակում էր, երբ դիմեց ինձ: Եվ մենք սկսեցինք աշխատել, ու նա ինձ պատմեց, թե ինչից են սկսվել իր խնդիրները (ԱՕԱ):*

Գծապատկեր 6. Նախորդ մեկ տարվա ընթացքում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների կողմից դեպքերի մասին հայտնելը



Հիմքը՝ Տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության 83 դրվագ, որոնց երեխաները ենթարկվել են հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում: Հարկ է նկատի ունենալ, որ ընդհանուր թիվը գերազանցում է 83-ը, քանի որ որոշ դրվագներում երեխաները հայտնել են մի քանի անձի/ծառայություն մատուցողի:

Այս մեջբերումից և Գծապատկեր 6-ում ներկայացված տվյալներից նույնպես հետևում է, որ Հայաստանում երեխաները չեն գտնում ապահով տարածք՝ իրենց նկատմամբ շահագործման և բռնության մասին հայտնելու կամ օգնության դիմելու համար:

Իրենց հետ կատարվածի մասին նրանք ավելի հաճախ հայտնել են ընկերներին ու խնամողներին: Մասնագետները հիշատակել են նաև հասակակիցներին դիմելու մի քանի դեպք, որն ընդգծում է ընկերների դերը թե՛ դեպքերի բացահայտման և թե՛ տուժածներին օգնելու գործում: Հասակակիցներին հայտնելը տեղի է ունենում ոչ ֆորմալ եղանակով. երեխան պարզապես աջակցության կամ շփման կարիք է ունենում կամ պատահաբար է հայտնում: Տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկվածին օգնելու գործում ընկերների

3.1 ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ և ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

դերակատարությունը նկատվել է միայն մեկ անձի օրինակով: Նրա միջադեպն ընդգծում է նման դեպքերում հասակակիցների աջակցության ինչպես հնարավորությունները, այնպես էլ սահմանափակումները: Այս երիտասարդ աղջկա դեպքում նրա ընկերները նշանակալի դեր են ունեցել հուզական և գործնական օգնություն ցուցաբերելու առումով, հատկապես, երբ ընտանիքի աջակցությունը հասանելի չէր: Ամենադժվար պահին զգալի աջակցություն ցուցաբերել էին երիտասարդ աղջկա երկու մտերիմ ընկերները՝ օգնելով վերագտնելու վստահությունը.

> *Ընկերներս ինձ շատ օգնեցին, որովհետև այդ պահին, այդ ժամանակ ես ունեի երկու մտերիմ ընկեր, որոնք գիտեին ամեն ինչ և անընդհատ տեղեկանում էին, թե ինչ է տեղի ունենում: Եվ ինչ-որ պահի նրանք ինձ սթափեցնում էին, ստիպում հասկանալ, որ ես բավականաչափ ուժեղ եմ ինքս ինձ պաշտպանելու համար: Նրանք ասում էին. "Դու նույնպես կարող ես շանտաժի ենթարկել նրան": Այո՛, նրանք ինձ օգնել են այդ առումով, և, բացի այդ, նրանք իմ կողքին էին (Ե):*

Թեև հասակակիցների աջակցությունը բարի նպատակներով էր, նրանց խորհուրդները կարող էին բացասական հետևանքներ ունենալ, եթե նրանք չունեն նման դեպքերին արդյունավետ և ապահով արձագանքելու հմտություններ ու գիտելիք: Չափազանց կարևոր է որ երեխաներն իրենց կողքին ունենան վստահություն վայելող չափահասներ, որոնց կարող են դիմել խորհրդի և ուղղորդման համար: Այս դեպքում երիտասարդի ընկերները քաջալերել են նաև՝ դիմելու մասնագիտական աջակցության. "Նրանք մշտապես զգում էին, որ ես շատ վատ վիճակում եմ, և անընդհատ փորձում էին համոզել ինձ՝ հանդիպելու հոգեբանի հետ, իսկ ինչ-որ պահի ընկերներս ասացին, որ ավելի լավ կլինի հոգեբույժի դիմել, և նրանք ինձ ինչ-որ կոնտակտներ տրամադրեցին" (Ե):

Ինչպես երևում է Գծապատկեր 6-ում, դեպքի մասին մասնագետներին հայտնելը տարածված երևույթ չէ: Առաջնային օղակի աշխատողների փորձը հաշվի առնելով՝ կարելի է ասել, որ երեխաները հազվադեպ են ինքնուրույն որոշել մասնագետներին հայտնել իրենց նկատմամբ շահագործման և բռնության մասին: Ըստ առաջնային օղակի աշխատողների՝ մի քանի դեպքերում դա տեղի է ունեցել ծառայության մատուցման ընթացքում երեխայի հետ վստահության ձևավորելու հիման վրա: Օրինակներից մեկում առաջնային օղակի աշխատողը երիտասարդ աղջկան աջակցում էր՝ հաղթահարելու տարբեր սոցիալական և հուզական դժվարություններ: Աջակցություն ցուցաբերելու ընթացքում երիտասարդ աղջիկն ի վերջո հայտնել էր իր հետ տեղի ունեցած բռնության մասին. "Այդ աղջիկն ինձ դիմեց իր խնդիրներով, այո՛, անձնական խնդիրներով... նա հուզական անկայուն վիճակում էր, երբ դիմեց ինձ: Եվ մենք սկսեցինք աշխատել, ու նա ինձ պատմեց, թե ինչից են սկսվել իր խնդիրները" (ԱՕԱ):

Սեռական շահագործման և բռնության տարբեր ներգործությունները կարող են տուժողներին դրդել հայտնելու այդ դեպքերի մասին, երբ դիմում են օգնության համար կամ ստանում աջակցություն ի հայտ եկած այլ խնդիրների լուծման համար: Երբեմն դա տեղի է ունենում շահագործման և բռնության դեպքը տեղի ունենալուց հետո: Հարցված երիտասարդ անձանցներից մեկը նշել է, որ բռնության դեպքից երկու տարի անց դիմել է հոգեբանական աջակցության: Երիտասարդին քաջալերել էին հայտնելու ընկերներին, որոնք "մշտապես զգում էին, որ ես շատ վատ վիճակում եմ, նրանք մշտապես փորձում էին համոզել ինձ՝ դիմելու հոգեբանի, իսկ մի պահ ընկերներս նույնիսկ ասացին, որ երևի ավելի լավ կլինի այցելել հոգեբույժի, ու ինձ որոշ կոնտակտներ ուղարկեցին" (Ե): Հոգեբաններից մեկը բացատրել է, թե տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական բռնության վերաբերյալ նրբերանգների իմացությունը ինչպես է օգնել իրեն՝ ավելի լավ հասկանալու հնարավոր նախանշանները.

> *"Նրանք" [ծնողները] ինձ դիմում են հիմնականում այն ժամանակ, երբ նկատում են վարքային շեղումներ, սնվելու կամ քնելու խանգարումներ, ագրեսիվություն, որևէ այլ հոգեբանական կամ սոցիալական խնդիր: Եթե 15 տարի առաջ ինձ մոտենային նման հարցով, ես գուցեև չհասկանայի, թե ինչն է խնդիրը, և ես հիմա դրա համար չեմ մեղադրում ներկայիս իմ գործընկերներին, որովհետև ինքս այն ժամանակ չէի հասկանում, թե ինչ է տեղի ունենում (ԱՕԱ):*

3.2 ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Հարցման ընթացքում երեխաների հետ զրույցները բացահայտեցին մի շարք դիտարկումներ, որոնք կարող են խանգարել՝ հայտնելու դեպքի մասին: Ամոթի և խարանի վախի մասին մասնագետների տեսակետները հաշվի առնելով՝ ամենատարածված խոչընդոտը, ըստ հարցման տվյալների, երեխայի ամաչկոտությունն է (35 տոկոս): Դրան հաջորդել է անտեղյակությունը, թե ուր պետք է գնալ և ում պետք է պատմել (22 տոկոս):

Գծապատկեր 7. Նախորդ տարվա ընթացքում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների կողմից դեպքի մասին հայտնելու խոչընդոտները (Դրվագների տոկոսը)

Հիմքը՝ Տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության 83 դրվագ, որոնց երեխաները ենթարկվել են հարցմանը նախորդած մեկ տարվա ընթացքում

Մասնագետները նշել են, որ առանց քննադատության զրույցները դեպքի մասին հայտնելու կարևոր պայման են: Սա հատկապես կարևոր է, եթե հաշվի առնենք, որ հարցման արդյունքներով՝ ամոթը, արժանահավատ չթվալու և փորձանքի մեջ ընկնելու վախը կարող են խոչընդոտել, որ երեխաները դիմեն օգնության ու աջակցության: Այնուամենայնիվ, մասնագետների հետ հարցազրույցներից պարզ է դարձել, որ դեպքերի մասին հայտնելը միշտ չէ, որ ընդունվում է առանց դատապարտման: Ծնողների բացասական արձագանքը և հասարակական խարանը էական խոչընդոտներ են դեպքերի մասին հայտնելու համար, ինչպես նշել են հարցմանը մասնակցած մասնագետներն ու երիտասարդը:

Վախը ծնողների արձագանքից: Տրավմայի, սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաները կարող են խուսափել օգնության համար իրենց ծնողներին դիմելուց՝ վախենալով, որ նրանք բացասաբար կարձագանքեն: Որոշ դեպքերում այս վախերը հաստատվում են, ինչպես կարելի է տեսնել Գլուխ 2-ի "Ընտանեկան կոնֆլիկտ" բաժնում: Հայաստանում հարցված երիտասարդ աղջիկը հիշել է, որ շահագործման և բռնության մասին չհայտնելը ավելի շատ պայմանավորված էր նրանով, թե ինչ կզգան ծնողները, քան իր իսկ կարիքներով: Սա բացահայտում է ևս մեկ բեռ, որ դրվում է սեռական շահագործման և բռնության ենթարկված որոշ անձանց վրա: "Ես ավելի շատ մտահոգված էի նրանով, թե նրանք ինչ կզգան կամ ինչպես կարձագանքեն, քան ինձ վրա հետևանքներով, որովհետև ինձ թվում էր, որ նրանք այդ ամենը սրտին ավելի մոտ կընդունեն, քան ես" (Ե):

Առաջնային օղակի աշխատողները շեշտադրել էինտարածված ընկալումը, որ արական սեռի խնամողները ավելի խիստ են արձագանքում, քան իգական սեռի խնամողները: Օրինակ՝ մասնագետներից մեկը բացատրել էր այսպես. "Եթե նա/հայրը իմանա սրա մասին, լուրջ կռիվ կլինի [...] Կապ չունի՝ աղջիկը դա արել է կամովին, թե ոչ, ծնողների համար դա անընդունելի է" (ԱՕԱ): Առաջնային օղակի մեկ այլ աշխատող էլ ակնկալում էր բռնի արձագանք մի հորից, որն իմացել էր, որ իր տղա երեխան բռնության է ենթարկվել առցանց ծանոթացած արական սեռի անձի կողմից, սակայն առաջնային օղակի աշխատողը զարմացել էր, որ բացի տղայի մազերը "չափազանց կարճ" կտրելուց, որով նա, թերևս, փորձում էր վերականգնել տղաներին վերագրվող առնականության կարծրատիպերը, հոր արձագանքն այնքան էլ դաժան չէր, և որ նա ֆիզիկական այլ պատիժների չէր դիմել:

3.2 ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Մշակութային նորմերը և ընտանեկան հիերարխիան երեխաների համար կարող են դժվարացնել բռնության մասին ծնողներին հայտնելը: Մասնագետներից մեկը բացատրել է այս կերպ. "Մենք հայ ենք, և խստությունը մեր ազգային թերությունն է: Մենք պետք է շատ խիստ լինենք, մեր երեխաները պետք է... նրանք պետք է գնան այն ճանապարհով, որով մենք ենք ուզում, և որը մենք ճիշտ ենք համարում նրանց համար" (ԱՕԱ): Ինչպես կարելի է տեսնել վերը, այս ակնկալիքները ձևավորում են այնպիսի միջավայր, որտեղ երեխաները կարող են ավելի վեր դասել իրենց ծնողների զգացողությունները, քան այն հանգամանքը, որ հենց իրենք աջակցության կարիք ունեն:

Ծնողների իրազեկվածության պակասը. Նման վնասակար արձագանքների խորքային պատճառը ծնողների շրջանում (տեխնոլոգիաների կիրառմամբ) սեռական շահագործման և բռնության, դրա տարբեր դրսևորումների, նշանների ու երեխաների վրա ներգործության մասին իրազեկվածության պակասն է: Հոգեբաններից մեկը բացատրել է, որ սեռական շահագործման և բռնության ոչ ֆիզիկական հետևանքների շուրջ պատկերացումները թույլ են, և որ հոգեբանական հետևանքները կարող են նվազագույնի հասցվել կամ, գոնե, պահվել հսկողության ներքո: Նա բացատրել է այսպես.

> *Եթե առկա է բռնության դեպք, մենք պետք է որ տեսնենք դրա որոշակի ֆիզիկական հետքերը: Նույնը, երբ լսում ենք, որ տվյալ անձը վատառողջ է, օրինակ՝ ֆիզիկապես վատ է զգացել: Նման դեպքերում հոգեբանական կողմն այնքան էլ կարևոր չէ: Նա [բռնության ենթարկված աղջիկը] կարող է, օրինակ, ինքնամփոփ դառնալ, իսկ մայրը կմտածի՝ "Ի՜նչ արած, բոլոր երեխաների հետ էլ պատահում է": Այսինքն՝ մենք դեռևս այնքան կրթված չենք՝ հասկանալու որ այդ ինքնամփոփությունը կամ վախը ինչ-որ տեղից է գալիս, և որ դա պարզապես դեռահասության պատճառով չէ (ԱՕԱ):*

Սեռական շահագործման և բռնության հնարավոր "նախանշանները"՝ լինեն դրանք ֆիզիկական, հուզական, հոգեբանական և/կամ վարքային, կարող են օգնել՝ երեխաների հետ սկսելու զգայուն զրույց, որը կարող է դեպքի մասին հայտնելու առաջին քայլը լինել: Եվ հակառակը, այդ նախանշանները կամ վարքի աննշան փոփոխությունները աչքաթող անելը երեխային խնամք և աջակցություն ցուցաբերելու բաց թողած հնարավորություն է:

Համայնքային խոչընդոտներ. Ինչպես քննարկվել է Գլուխ 2-ում, պատվի և համեստության շուրջ նորմերը կարող են էական դեր ունենալ սեռական շահագործմանն ու բռնությանը արձագանքելու բնույթի վրա և կարող են դեպքի մասին հայտնելու խոչընդոտներ հարուցել: Երբ դեպքերը հայտնի են դառնում, դրանք դիտարկվում են ոչ թե որպես առանձին, այլ ամբողջ ընտանիքի բնութագիր, որը հանգեցնում է ընտանիքի մի քանի անդամների նկատմամբ խարանի: Առաջնային օղակի աշխատողները համայնքային նորմերին անդրադարձել են գյուղական բնակավայրերի և փոքր տարածքների համատեքստում: "Գյուղերում անընդունելի է համարվում, որ ինչ-որ մեկը մտածի կամ ասի, որ իր դուստրն իր նկարներն է ուղարկել ինչ-որ մեկին: Ոչ ոք չպետք է խոսի դրա մասին" (ԱՕԱ):

Մասնագետները նաև նշել են, որ Հայաստանի սերտորեն կապված գյուղական համայնքներում անանունությունը պահելու անհնարինությունը կարող է խորացնել շահագործման և բռնության սոցիալական հետևանքները: Որոշ մասնագետներ ընդգծել են, որ բռնության բացահայտումից հետո գաղտնիությունը պահելը տուժողների և նրանց ընտանիքների համար չափազանց դժվար է դառնում.

Ինչ վերաբերում է տվյալ մարզում գերիշխող մտածելակերպին, բարքերին ու ավանդույթներին, կարող ենք ասել, որ եթե հարևանները տեղյակ են անձի անձնական կյանքի որոշ մանրամասներին, ապա նրանք դրա մասին խոսում են տարիներ շարունակ, և դա, ըստ էության, մեծ ազդեցություն է ունենում մարդկանց վրա (ԱՕԱ):

Ամբողջ գյուղը, այդ երեխային պաշտպանելու փոխարեն, սկսեց խարանել նրան և ասել՝ "Ինչ մայրը, այն էլ աղջիկը", "Ուրիշ ի՞նչ էիք սպասում այդ երեխայից" [...] Մենք անգամ ինքնասպանության դեպքեր ենք ունեցել (ԱՈՄ):

Գաղտնիությունը չպահպանելու, համայնքից աջակցություն չստանալու և խարանի վախի հետևանքով տուժողները և նրանց ընտանիքները կարող են երբեք էլ չհայտնել դեպքի մասին կամ չդիմել աջակցող ծառայություններին: Ընտանիքները կարող են մեկուսանալ՝ իրենց համբավը պաշտպանելու և հասարակության մերժումից խուսափելու համար: Առաջնային օղակի աշխատողներից մեկը հետևյալն է նշել. "Կարծում եմ՝ մեր հասարակությունը պատրաստ չէ ընդունելու, մենք դեռ շատ հեռու ենք նման [սեռական շահագործման և բռնության ենթարկված] երեխաներին ընդունելու հեռանկարից" (ԱՕԱ): Նման միջավայրում առաջնային օղակի աշխատողները կարող են ստիպված լինել երեխաների վերականգնմամբ զբաղվելու փոխարեն օգնել ընտանիքներին՝ պաշտպանվելու հարևանների ու ազգականների ճնշումից ու դատապարտումից և պահպանելու նրանց գաղտնիությունը:

4. ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

4.1 ԱՐԴՅՈ՞Ք ԵՐԵԽԱՆԵՐԸ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼԻՍ ԵՆ

Ըստ հարցման արդյունքների՝ Հայաստանում երեխաները հազվադեպ են դիմում ծառայություններին կամ պաշտոնական հաղորդում տալիս իրենց նկատմամբ շահագործման և բռնության վերաբերյալ: Նախորդ տարվա ընթացքում բռնության ենթարկված 43 երեխաներից ոչ մեկը հաղորդում չի ներկայացրել ոստիկանություն: Հատկանշական է, որ մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում քննարկված տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման ու բռնության բոլոր դեպքերից միայն մեկում է երեխան ուղիղ դիմել իրավապահ մարմիններին: Ավելին՝ հարցվածներից միայն մեկ երեխա է խոսել սոցիալական աշխատողի հետ, և որևէ մեկը օգնության համար չի դիմել թեժ գծի հեռախոսահամարին: Երեխաները, որոնք չեն դիմել թեժ գծերին, սոցիալական աշխատողներին կամ ոստիկանությանը, նշել են հետևյալ պատճառները.

Գծապատկեր 8. Հաղորդում տալու կամ ֆորմալ ծառայություններից օգտվելու խոչընդոտները (Երեխաների թիվը)

Ամենատարածված խոչընդոտը, որ նշել էին 9 հարցված երեխաներ, այն էր, որ բռնարարը սպառնացել էր վնասել նրանց, եթե հայտնեն ինչ-որ մեկին: Վերը թվարկվածներից բացի՝ այլ խոչընդոտների առերեսված 5 երեխաներ նշել էին, որ չեն զգացել հաղորդում տալու անհրաժեշտություն և պարզապես չեն ցանկացել հաղորդում տալ:

Սոցիալական ցանցի հավելվածի միջոցով բողոք ներկայացնելը: Սոցիալական ցանցերի ծառայություն մատուցողները հիմնական դերակատարներից են, որոնք կարող են ապահովել, որ առցանց տիրույթում երեխաները լինեն անվտանգ՝ հաշվի առնելով այն, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության վերլուծված դրվագների 69 տոկոսը տեղի է ունեցել սոցիալական ցանցի հավելվածում: Դրվագների 43 տոկոսում սոցիալական ցանցերում սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաները հաղորդում կամ բողոք ներկայացրել են նաև հենց սոցիալական ցանցի հավելվածում: Snapchat-ը և Instagram-ը ամենատարածված հավելվածներն էին, որտեղ Հայաստանի երեխաները ենթարկվել էին սեռական շահագործման և բռնության, և այս հավելվածներով է ներկայացվել հաղորդումների ու բողոքների մեծ մասը:

Ինչ վերաբերում է ծանուցման և հեռացման մեխանիզմներին, հարկ է նշել, որ հայաստանյան օրենսդրությունը առցանց հարթակներից հատուկ չի պահանջում ներդնել հստակ, հասանելի և օգտատերերին հարմար համակարգեր՝ անօրինական բովանդակության կամ վարքագծի մասին հաղորդում տալու համար: Արդյունքում, առանձին վերցված հարթակների քաղաքականությունից է կախված՝ արդյոք առկա են նման գործառույթներ, և թե որքանով արդյունավետ կամ երեխայի կարիքներին հարմարեցված են դրանք:

Արդյոք ծնողները հաղորդում կտայի՞ն: Հարցմանը մասնակցած 1,002 ծնողներին ուղղվել է հիպոթետիկ հարց. ի՞նչ կանեին, եթե *իրենց* երեխան ենթարկվեր սեռական հետապնդման, շահագործման կամ բռնություն: Ծնողների միայն 2 տոկոսն էր (19 հարցվող) նշել, որ դա գաղտնի կպահեին:

Մյուս կողմից՝ ծնողների մեծամասնությունն ասել էր, որ ինչ-որ բան կձեռնարկեին: Ծնողների կեսից ավելին (59 տոկոսը) նշել էր, որ կհայտներ իր զուգընկերոջը կամ ամուսնուն/կնոջը, իսկ 41 տոկոսը նշել էր, որ հաղորդում կներկայացնեին ոստիկանություն: Այդուհանդերձ, ծնողներն ավելի քիչ

էին հակված օգտվելու թեժ գծերի կամ սոցիալական պաշտպանության կազմակերպությունների. ծնողների միայն 5 տոկոսն էր նշել, որ եթե իրենց երեխան ենթարկվեր սեռական հետապնդման, բռնության կամ շահագործման, կդիմեին սոցիալական ծառայության աշխատողին, իսկ 8 տոկոսն ասել էր, որ կզանգահարեին թեժ գծին:

Թեև ծնողների գրեթե կեսը նշել էր, որ կդիմեին ոստիկանություն, հարցված մասնագետների փորձը վկայում է ընտանիքներում վախի և լռության մթնոլորտի մասին, երբ խոսքը վերաբերում է իրավապահ մարմիններին դիմելուն և ֆորմալ արդարադատություն պահանջելուն: Այս գործոնները մանրամասն ներկայացված են հաջորդ բաժնում:

Թեև ծնողների գրեթե կեսը նշել էր, որ կդիմեին ոստիկանություն, հարցված մասնագետների փորձը վկայում է ընտանիքներում վախի և լռության մթնոլորտի մասին, երբ խոսքը վերաբերում է իրավապահ մարմիններին դիմելուն և ֆորմալ արդարադատություն պահանջելուն:

4.2 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ԽԱՆԳԱՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ. ԱՆՀԱՏԱԿԱՆ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Մասնագետների հիշատակած դեպքերի մեծ մասում ծնողները խուսափել են շահագործման և բռնության մասին իրավապահ մարմիններին հաղորդում ներկայացնելուց: Օրինակ՝ առաջնային օղակի աշխատողներից մեկը բացատրել էր. "Ընտանիքն արդեն որոշել էր, որ չեն դիմելու [հաղորդում չեն ներկայացնելու], և բնականաբար, ինձ էլ թույլ չտվեցին հաղորդում ներկայացնել" (ԱՕԱ): Մեկ ուրիշն էլ ասել էր. "[Երեխայի] մայրը կապ էր հաստատել ինձ հետ՝ նախապես ասելով, որ ոչ ոք չպետք է իմանա դրա մասին, և նա նույնիսկ որևէ խորհրդատվություն չխնդրեց" (ԱՕԱ):

Մասնագետները, հիմնվելով իրենց փորձի վրա, որոշ մտքեր հայտնեցին այն մասին, թե ծնողներն ինչու կարող են խուսափել հաղորդում ներկայացնելուց: Այդ դեպքերի թեմատիկ վերլուծությունը վերհանել է երկու հիմնական, փոխկապակցված երևույթ, որ ընկած են ծնողների դժկամության հիմքում՝ համայնքի կողմից դատապարտվելու վախը՝ ուժեղ խարանավորման պատճառով, և իրավական գործընթացներով անցնելու մտահոգությունը:

Գաղտնիության և ընտանիքի հեղինակության վերաբերյալ մտահոգությունները

Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դեպքերի մասին հաղորդում տալու խոչընդոտներից մեկը այն մտահոգությունն է, որ համայնքը կարող է իմանալ բռնության դեպքի մասին: Այս մտահոգությունները համընկնում են սեռականության և բռնության և ընտանիքի պատվի շուրջ հասարակական խարանի հետ: Ըստ հարցված մասնագետների՝ գաղտնիությանն առնչվող վախերը ավելի մեծ են փոքր համայնքներում: Ինչպես նշել է մասնագետներից մեկը, "Փոքր համայնքներում, որտեղ մարդկանց մեծ մասը ճանաչում է միմյանց... տեղեկության արտահոսք հաճախ է լինում" (ԱՈՄ): Մեկ այլ մասնագետ պատմել էր, թե ծնողներն ինչպես են անհանգստանում, որ գաղտնիությունը չի պահպանվի. "Շատ դժվար է գնալ ոստիկանություն, երբ դուստրդ ներգրավված է նման դեպքի մեջ... Քանի որ մենք ապրում ենք փոքր քաղաքում, բոլորը միմյանց ճանաչում են, ես վստահ չեմ, որ գաղտնիությունը չի խախտվի" (ԱՕԱ):

Հայաստանում մասնագետները նկարագրել են դեպքեր, երբ ընտանեկան պատվի՝ ընտանիքի սոցիալական հեղինակության ու վարկի հետ կապված ընկալումները նպաստել են լռության մշակույթի ձևավորմանը, քանի որ պատիվը վեր է դասվում անհատի կարիքներից: Առաջնային օղակի աշխատողներից մեկը նկարագրել է այս միտումը, և թե ինչպես կարող են ընտանիքի հեղինակության վերաբերյալ մտահոգությունները, տուժողի գործողությունների շուրջ բարոյական քննադատությունների հետ մեկտեղ, հանգեցնել երեխայի բարօրության անտեսման. "Դրանք ավանդական ընտանիքներ են, և նրանց համար միանգամայն անընդունելի է, որ ինչ-որ մեկը կարող է մտածել կամ ասել, որ իր դուստրը ինչ-որ նկարներ է արել կամ լուսանկարներն ուղարկել է ինչ-որ մեկին: Որևէ մեկը չպետք է խոսի դրա մասին, դա նրանք համարում են անբարոյականություն: Այժմ նրանց ընտանիքի ուշադրությունն առավելապես կենտրոնացած է նրան ամուսնացնելու վրա (ԱՕԱ)":

Երեխայի սեռական շահագործման և բռնության շուրջ լռություն պահպանելու ձգտումը կարող է այնքան սևեռուն լինել, որ ընտանիքները նախընտրեն հաղորդում չներկայացնել նույնիսկ այն դեպքում, երբ բռնությունը դեռ շարունակվում է: Ինչպես նշել է առաջնային օղակի աշխատողներից մեկը՝ "Բռնություն գործադրած պատանիներից մեկը նորից կապ էր հաստատել աղջկա հետ, և շորթումը վերսկսվել էր [...] Նրանք նորից հրաժարվում էին ոստիկանություն դիմելուց, և նրանց ազգականը նորից խոսեց այդ տղայի հետ" (ԱՕԱ): Նույնիսկ երբ մասնագետները բացահայտում էին սեռական շահագործման և բռնության ավելի լայն ցանց, ինչի շնորհիվ հնարավոր կլիներ պաշտպանել այլ տուժողներին, ընտանիքները հաճախ ընդդիմանում էին.

> *Գոյություն ուներ տարբեր աղջիկների [նկատմամբ բռնության] մի շղթա: Եվ իմ մոտեցումը և ահազանգն այն մասին էին, որ մենք կարող ենք ընդհատել մի մեծ շղթա և օգնել ուրիշներին նույնպես: Բայց քանի որ ընտանիքն արդեն որոշել էր, որ հաղորդում չի ներկայացնելու, ինձ նույնպես թույլ չտվեցին անել դա (ԱՕԱ):*

4.2 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ԽԱՆԳԱՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ. ԱՆՀԱՏԱԿԱՆ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Իրավական ընթացակարգերով անցնելու վերաբերյալ մտահոգությունները

Իրավական գործընթացներն ինքնին կարող են վանել ծնողներին: Դեպքի քննության տևողությունն ու բարդությունը կարող են ընտանիքներին հետ պահել արդարադատության համակարգին դիմելուց: Որոշ ծնողներ ձգտում են իրենց երեխաներին պաշտպանելու բազմակի հարցաքննություններից և իրավական առերեսումներից՝ վախենալով, որ դրանով կրկնակի տրավմայի կենթարկեն նրանց. "Նրանք չեն ուզում երկրորդ անգամ տրավմայի ենթարկել իրենց երեխային, նույնիսկ այդ շենք [դատարան] գալ չեն ուզում" (ԱՈՄ):

Հայաստանում մասնագետները նկարագրել են դեպքեր, երբ ընտանեկան պատվի՝ ընտանիքի սոցիալական հեղինակության ու վարկի հետ կապված ընկալումները նպաստել են լռության մշակույթի ձևավորմանը, քանի որ պատիվը վեր է դասվում անհատի կարիքներից:

Ըստ մասնագետների՝ արդարադատության համակարգի հետ բազմակի շփումների հավանականությունը նույնպես վանող հանգամանք է բռնության ենթարկվածների համար. "Նա ուզում էր հասկանալ, որ եթե միայն ինքը դիմում [հաղորդում] ներկայացնի, դրանով ամեն ինչ կավարտվի՞, թե՞ ստիպված կլինի անընդհատ գնալ, ցուցմունք տալ, ապա ներկայանալ դատարան" (ԱՈՄ): Երբ արդարադատության ոլորտի մասնագետն ընտանիքին պարզաբանեց ամբողջ գործընթացը, նրանք որոշեցին չդիմել. "Երեխայի մայրը չէր ուզում մնասել երեխային, որովհետև չէր ուզում, որ դեպքը հանրայնացվի... մենք նաև բացատրեցինք, որ պետք է անցնեն ամբողջ գործընթացը, այդ հարցաքննություններն ու երեխային առնչվող այլ գործողությունները, այդ պատճառով նրանք որոշեցին չանցնել այդ ամենի միջով" (ԱՈՄ): Այս մտորումներից պարզ է դառնում, որ հաղորդում ներկայացնելու հիմքով իրավական գործընթացով անցնելու վերաբերյալ մտահոգությունները նույնպես փոխկապակցված են բռնության դեպքի մասին համայնքի և հանրության տեղեկանալու վերաբերյալ մտահոգություններին, ինչպես նաև նրանց անկեղծ մտահոգություններին այն մասին, թե արդարադատության համակարգի ընթացակարգերն ինչպես կանդրադառնան իրենց երեխայի բարօրության վրա:

4.3 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ և ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Ֆորմալ հաղորդման բացակայությունը

Բռնության ենթարկվածների և նրանց ընտանիքների լռությունը, ինչպես նաև համապատասխան մարմիններին բողոքների բացակայությունը գործնական դժվարություններ են ստեղծում մասնագետների համար: Դա նշանակում է, որ հաճախ հնարավոր չի լինում նույնիսկ քրեական վարույթ սկսել, եթե անգամ իրավապահ մարմինը տեղեկանում է շահագործման և բռնության մասին: Դեպքերից մեկում բռնության ենթարկվածը պաշտոնական բողոք չէր ներկայացրել, և իրավապահ մարմինները ստիպված էին սահմանափակվել նախազգուշացումներով՝ մեղադրանք առաջադրելու փոխարեն:

> *Ձախողումն այն էր, որ բռնարարը չէր պատժվել, իսկ ոստիկանությունը պարզապես ձեռնարկել էր ամենահրատապ քայլերը, այդքան բան: Շատ կցանկանայի դա հասկացնել տուժողի մայրիկին... և նրա բողոքը տանել մինչև վերջ: Կարող եմ ասել, որ ես այդտեղ ձախողել եմ, ես՝ որպես սոցիալական աշխատող, չեմ կարողացել ճիշտ մոտիվացիա ապահովել (ԱՕԱ):*

Ինչպես երևում է վերը նշված մեջբերումից, ծառայություն մատուցողները երբեմն գործում են որպես միջնորդներ՝ փորձելով համոզել երեխաներին ու նրանց ընտանիքներին՝ մասնակցելու արդարադատության գործընթացներին, միաժամանակ չկորցնել երեխաների վստահությունը: Ծառայություն մատուցողների հետ հարցազրույցները վերհանեցին նրանց հուսահատության և հիասթափության զգացումները, քանի որ նրանք ի զորու չէին օգնելու ընտանիքներին, սակայն հարցազրույցները նաև վերհանեցին գործին ընթացք տալու հարցում երեխայի թույլտվությունն ունենալու կարևորությունը: Իրականում, առաջնային օղակի աշխատողներից շատերը որպես երեխաների դեմ բռնության մասին հաղորդում չտալու պատճառ նշել են ընտանիքի դիմադրությունն ու պաշտոնական ցուցմունքների բացակայությունը:

Առաջնային օղակի աշխատողներից մեկն այսպես է բացատրել. "Անկախ նրանից, թե որքան անարդար է ոստիկանություն չհայտնելը, մենք [նման բան անողը] չենք"... Եթե մայրը թույլ չտա, ես ինքս ինձ թույլ չեմ տա անել դա: Եվ եթե աղջկա համաձայնությունը չլինի, ես չեմ շարունակի այնքան ժամանակ, մինչև մայրը տա իր համաձայնությունը: Մենք աշխատում ենք մայրերի հետ՝ համաձայնեցնելու ոստիկանությանը դիմելու հարցը, սակայն չենք կարողանում համոզել նրանց (ԱՕԱ):

Հայաստանում մասնագետները նշել են, որ ընթացակարգերը մեծապես կախված են տուժողների ներգրավվածությունից, որը ենթադրում է մասնակցություն դատական փորձաքննություններին և իրավական ընթացակարգերին: Առանց տուժողի համագործակցության չեն կարող տեղի ունենալ այնպիսի կարևոր քայլեր, ինչպիսիք են դատական փորձաքննությունները կամ ցուցմունքներ վերցնելը, որը կարող է հանգեցնել քրեական հետապնդման համար ոչ բավարար ապացույցների: Մասնակիցներից մեկը նշել է, որ "Եթե անձը չներկայանա դատական փորձաքննությանը, ապա նա չի կարող մասնակցել վարույթին, և համապատասխան մարմինները չեն կարող հարկադրաբար նրան տանել և ասել՝ *"Պետք է անել այս կամ այն բանը"* (ԱՕԱ)": Գործի քննությունը կարող է դադարել բավարար ապացույցներ կամ ցուցմունք չունենալու պատճառաբանությամբ:

Մասնակիցներից մի քանիսը նշել են, որ առանց տուժողների մասնակցության իրենք սահմանափակված են դեպքերի քննությունն առաջ մղելու հարցում: Այնուամենայնիվ, քիչ հավանական է, որ Հայաստանում սեռական շահագործման և բռնության ենթարկված անձինք կսկսեն հետամուտ լինել արդարադատության գործընթացներին, քանի դեռ հաղորդում տալուն խոչընդոտող վերոհիշյալ գործոններն ու արդարադատության համակարգին առնչվելու հետ կապված վախերը (Գլուխ 6-ում նկարագրված) հաղթահարված չեն, որպեսզի տուժողներն ու նրանց ընտանիքները համոզված լինեն, որ իրենց իրավունքներն ու գաղտնիությունը պաշտպանված կլինեն:

Դեպքերի մասին հայտնելու և միջամտություններ իրականացնելու ստանդարտ կարգերի բացակայությունը

Մասնագետները բացատրել են, որ իրենց տրամադրության տակ չունեն (տեխնոլոգիաների կիրառմամբ) երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի մասին հայտնելու, միջամտությունների և հաղորդում տալու ուղեցույցներ և չափանիշներ: Արդարադատության ոլորտի՝ իրավապահ մարմինները ներկայացնող մասնագետները պարզաբանել են, որ դրա պատճառով երբեմն ստիպված են եղել ապավինել անձնական և մասնագիտական համոզմունքի, այլ ոչ ստանդարտացված ընթացակարգերի վրա: Մասնակիցներից մեկը նշել էր. "Մենք չունենք ո՛չ չափանիշներ, ո՛չ էլ պարտադիր հայտնելու ընթացակարգեր... Եթե մենք պետք է հայտնենք դեպքերի մասին, ապա որո՞նք են [կատարելու] չափանիշները, և ի՞նչ մեթոդներ պետք է կիրառենք" (ԱՈՄ):

Այս մարտահրավերներն ընդգծում են հստակ ուղեցույցներ ունենալու, մասնագետների պարտադիր պարբերական վերապատրաստումների և խնամքի պարտավորություն ունեցողների շրջանում իրազեկումների հրատապ անհրաժեշտությունը: Գաղտնիության պահպանման, հաղորդելու վերաբերյալ կարգավորումների և դեպքի մասին հայտնելու միասնական քաղաքականության սահմանումը չափազանց կարևոր է մասնագետներին անհրաժեշտ գործիքներով ու գիտելիքով զինելու համար, որպեսզի նրանք կարողանան արդյունավետորեն արձագանքել երեխաների դեմ սեռական բռնության բոլոր, այդ թվում՝ թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դեպքերին:

Պարտադիր հաղորդում տալու դրույթի ոչ հետևողական կիրառումը

ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում նրանց համար, ովքեր նախապատրաստվող կամ հանցափորձի փուլում գտնվող հանցագործության մասին չեն հայտնել իրավասու մարմնին այն ժամանակահատվածում, երբ հնարավոր էր կանխել հանցանքի կատարումը կամ դրա հետևանքների առաջացումը: Այդուհանդերձ, այս պարտավորությունը չի տարածվում այնպիսի հանցագործությունների մեծամասնության վրա, որոնք, սովորաբար, բնորոշվում են որպես տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործում և բռնություն: Հատկանշական է, որ հոդվածից դուրս են մնացել սեռական բնույթի շանտաժի որոշ տեսակներ, ինչպիսին է երեխային սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը շանտաժի միջոցով: Հետևյալ հանցագործությունները նույնպես դուրս են կարգավորման շրջանակից. 16 տարին չլրացած երեխային տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով պոռնկագրական նյութ ցուցադրելը կամ "սեքսուալ բնույթի զրույցը" 16 տարին չլրացած երեխայի հետ, սեռական բնույթի գործողություն կատարելը 16 տարին չլրացած երեխաների հետ, առցանց գրումինգը, ինչպես նաև երեխայի նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութերին առնչվող հանցագործությունները, պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը կամ կավատությունը[35]:

Պարտադիր հաղորդում տալու վերաբերյալ ավելի լայն դրույթ է ներառվել "Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին" օրենքի նախագծում[36], որը 2025 թվականի հուլիսի դրությամբ սպասում էր ընդունման: Օրենքի նախագծի 48-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք երեխայի նկատմամբ բռնության կամ դրա ռիսկի վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում պարտավոր է այդ մասին տեղեկացնել կամ հաղորդում ներկայացնել ոստիկանությանը կամ սոցիալական ծառայություններին (համայնքային սոցիալական աշխատողին)[37]: Տեղեկացնող անձի ինքնությունը պահվում է գաղտնի, եթե նա նման ցանկություն է հայտնել: Այդուհանդերձ, առաջարկվող այս դրույթը դեռևս շատ լայն և անորոշ է, և դրանով կարծես նախատեսված չեն հանցանքի մասին հաղորդում տալու հետևանքով հնարավոր կրկնակի տրավմայի կանխարգելման երաշխիքները:

Այս զարգացումներն է՛լ ավելի են կարևորվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաների դեմ բռնության դեպքի մասին պարտադիր հաղորդում տալու պահանջը մասնագետների կողմից հետևողականորեն չի կատարվում Հայաստանում:

35. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 473-1 հոդված:
36. Սույն զեկույցը խմբագրելու պահի դրությամբ՝ օրենքի նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025թ.-ի հոկտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2025թ.-ի նոյեմբերի 29-ին:
37. Հայաստան, *Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին օրենքի նախագիծ*, 2022, 48 հոդված: Հաստատված օրենքի տեքստում այս դրույթը ներառված է 29.2-րդ հոդվածում:

Հարցված ծառայություն մատուցողների շրջանում առկա էր որոշակի շփոթություն պարտադիր հաղորդում տալու պահանջի և դրա կատարման շուրջ: Ոմանք նշել են հետևյալը. "Եթե մենք հայտնաբերում ենք ծնողների կամ ուրիշների կողմից կատարված բռնություն, ապա, այո՛, մենք պարտավոր ենք... Մենք պետք է դիմենք [հաղորդում տանք], մենք պարզապես պարտավոր ենք" (ԱՕԱ): Նմանապես, ՀԿ-ն ներկայացնող առաջնային օղակի աշխատողներից մեկը նշել է. "Երեխայի անվտանգության վերաբերյալ ցանկացած փոքր մտահոգության դեպքում, որպես մասնագետ, ես դիմում և արձագանքում եմ շատ արագ: Ես դիմում եմ իրավապահ մարմիններին" (ԱՕԱ):

Այդուհանդերձ, մասնակիցների մեկ այլ խումբ էլ նշել է, որ այդ ընթացակարգերը գործնականում իրականացնելը միշտ չէ, որ հստակ է. "Անկեղծ ասած, ես չգիտեմ, թե ով պետք է անի դա [հաղորդում ներկայացնի], հիվանդանո՞ցը պետք է տեղեկացնի նրանց, թե՞ ինչ... կամ գուցե մենք պետք է դրա մասին տեղեկացնենք [համապատասխան մարմիններին]" (ԱՕԱ): Երբ հարց ուղղվեց՝ երեխայի նկատմամբ սեռական բռնության կասկածի դեպքում արդյո՞ք առաջնային օղակի աշխատողները պետք է հայտնեն ոստիկանությանը, արդարադատության ոլորտի մեկ այլ մասնագետ հատկապես ուսուցիչների վերաբերյալ պատասխանեց հետևյալը. "Նման պարտավորություն, որպես այդպիսին, չկա, սակայն ես անձամբ հավատացած եմ, որ ուսուցիչը պետք է ծնողին հայտնի այդ ամենի մասին: Ծնողը պետք է որոշի՝ հայտնե՞լ ոստիկանությանը, թե՞ ոչ" (ԱՈՄ):

Մի քանիսն էլ անդրադարձել են պարտադիր հայտնելու մասին պահանջի և երեխայի հետ կապված գաղտնիությունը հարգելու բարդ հավասարակշռությանը. "Երեխան վստահում է հոգեբանին: Այս հարցը մի քիչ ավելի բարդ է, հակասական հարց է մասնագետների համար՝ որ դեպքերում պետք է [...] հայտնել, իսկ որ դեպքերում՝ չի կարելի, քանի որ համարվում է, որ այդ տեղեկությունը պետք է գաղտնի պահվի" (ԱՈՄ):

Դպրոցները ևս հնարավոր վայր են, որտեղ մեծահասակները կարող են նկատել տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դրսևորումները: Այնուամենայնիվ, ըստ մասնագետների, դպրոցի անձնակազմը կարող է երկմտել սեռական շահագործման և բռնության մասին հայտնելու հարցում՝ ստուգումների կամ դպրոցի համբավի վրա բացասական ազդեցության վախի պատճառով:

> *Դպրոցների տնօրենները [...] միշտ փորձում են կոծկել դեպքերը: Եվ եթե անգամ ուսուցիչը կամ ինքը՝ աշակերտը, մոտենա տնօրենին և ասի՝ "Մենք այսպիսի իրավիճակ կամ այսպիսի խնդիր ենք ունեցել", տնօրենը կասի՝ "Մեր դպրոցում նման բան չկա, մենք չենք ուզում խայտառակ լինել ամբողջ հանրապետությունում, մենք չպետք է խոսենք դրա մասին [...] Եթե երեխան բռնության ենթարկվի դպրոցից դուրս, ապա դա դպրոցի հոգսը չէ, և դրանով պետք է զբաղվեն սոցիալական ծառայությունները կամ ծնողները (ԱՈՄ):*

Թեև որոշ դպրոցներ կարող են խուսափել բռնության դեպքերի մասին հաղորդում տալու պարտավորությունից, հարկ է նշել, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դրագների 24 տոկոսում (42 դրվագից 10-ը) երեխաները բռնարարին առաջին անգամ հանդիպել են հենց դպրոցում: Սա հնարավորություն է միջամտությունների միջոցով՝ բարելավելու դպրոցների և կրթական հաստատությունների կողմից երեխաներին աջակցելու պահանջների կատարումը և, եթե դա բխում է երեխայի լավագույն շահից, սեռական շահագործման և բռնության դեպքերի մասին հայտնելու պրակտիկան:

Թեև պարտադիր հայտնելու պահանջները նպատակ ունեն երեխաներին պաշտպանելու շահագործումից ու բռնությունից և քաջալերում են վաղ հայտնաբերումն ու միջամտությունները, դա արվում է այն մտայնությամբ, որ պաշտոնական բողոք ներկայացնելը բոլոր դեպքերում բխում է երեխայի լավագույն շահերից: Ինչպես նշված է սույն զեկույցի բոլոր հատվածներում, գոյություն ունեն բազմաթիվ էական խոչընդոտներ երեխաների ու նրանց ընտանիքների համար՝ բռնության մասին հայտնելու և արդարադատության համակարգին դիմելու հարցում վստահ կամ հարմար զգալու առումով: Այս համատեքստում աջակցող մասնագետներին պաշտոնական հաղորդում ներկայացնելուն պարտավորեցնելը, եթե անգամ դա չի բխում երեխայի լավագույն շահից, կարող է ընդհանրապես խաթարել ընտանիքների վստահությունն ու պատրաստակամությունը՝ համագործակցելու աջակցող կազմակերպությունների

հետ: Չափազանց կարևոր է քայլեր ձեռնարկել դեպքերի մասին բարձրաձայնելու և հաղորդում տալու այս նորմատիվ խոչընդոտների, այդ թվում՝ համայնքի բացասական և խարանող արձագանքների դեմ, ինչպես նաև ապահովել, որ ծառայություն մատուցողները ապահովված լինեն անհրաժեշտ միջոցներով և վերապատրաստված՝ բռնության ենթարկվածներին աջակցելու համար, այդ թվում այն իրավիճակներում, երբ երեխայի վերաբերյալ դեպքի մասին հայտնել են առանց նրա թույլտվության:

Ծառայություն մատուցողների հետ հարցազրույցները վերհանեցին նրանց հուսահատության և հիասթափության զգացումները, քանի որ նրանք ի զորու չէին օգնելու ընտանիքներին, սակայն հարցազրույցները նաև վերհանեցին գործին ընթացք տալու հարցում երեխայի թույլտվությունն ունենալու կարևորությունը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Արդարադատության ոլորտի մասնագետները և առաջնային օղակի մասնագետներն անդրադարձել են այն գործոններին, որոնք կարող են ազդել սեռական բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ծառայությունների տրամադրման վրա: Մասնագետները նաև ներկայացրել են իրենց տեսակետները Հայաստանում այդ ծառայությունների մատուցման և արդյունավետության վերաբերյալ: Կարևոր է նշել, որ այդ հետազոտական արդյունքները հիմնված են նրանց ընկալումների վրա: Դրանք կարող են կազմել ընդհանուր պատկերի կարևոր մի մասը, այդուհանդերձ, չեն լրացվել կամ վերահաստատվել տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների տեսակետների հիման վրա, որոնք, ինչպես նկարագրված է սույն զեկույցի՝ մեթոդների վերաբերյալ բաժնում, չեն ցանկացել մասնակցել որակական հետազոտությանը:

5.1 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՐՄԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՄ ԴՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հասարակական խարան, վախ և ամոթ

Թեև համայնքը և սոցիալական կապերը կարևոր են առողջության և բարօրության տեսանկյունից, մասնագետները հաճախակի հայտնել են այնպիսի օրինակների մասին, երբ համայնքը հանդես է եկել որպես խոչընդոտ, որպեսզի բռնության ենթարկվածները ստանան անհրաժեշտ աջակցությունը: Փոքր, սերտաճած համայնքներում խարանը և գաղտնիության վերաբերյալ մտահոգությունները կարող են ավելի ուժգին լինել՝ երեխաներին և/կամ ընտանիքներին հետ պահելով աջակցության դիմելուց: Մասնագետներից մեկը բացատրել է, որ համայնքում բամբասանքների տարածումը կարող է ավելի վատթարացնել տուժողի տրավման. "Եթե հարևաններն իմանան տվյալ անհատի անձնական կյանքի որոշ մանրամասներ, ապա դրա մասին կխոսեն տարիներ շարունակ" (ԱՕԱ): Ինչպես առաջնային օղակի աշխատողներից մեկն է բացատրել, այս վարքագիծը նշանակալի հետևանքներ է ունենում աջակցող ծառայություններ փնտրող և դրանցից օգտվող երեխաների համար. "Համայնքում... սովորաբար լավ չէ... Նրանք մատնացույց են անում նրանց... որպես այդ համայնքի "վատ երեխաների": Դեպքերի մեծամասնությունում հենց սա է պատճառը, որ ծնողները համայնքի ներսում որևէ աջակցության չեն դիմում" (ԱՕԱ):

Այս համատեքստում մասնագետները հիշատակել են բազմաթիվ դեպքեր, երբ ընտանիքները խանգարել են օգնության դիմելու՝ գենդերի, սեռի և սեռականության և հոգեկան առողջության վերաբերյալ գերակա սոցիալական նորմերի պատճառով: Որոշ դեպքերում դա ազդում է այն տեսակի աջակցության վրա, որ ծնողները փնտրում են իրենց երեխաների համար, ինչպես նաև աջակցությունը ստանալու համար անհրաժեշտ քայլերին հետևելու պատրաստակամության վրա: Առաջնային օղակի աշխատողի նկարագրած մի դեպքի առնչությամբ ասվել է հետևյալը. "Նրանց [ծնողների] համար ամենակարևորն այն է, որ իրենց աղջիկը կույս լինի: Այլ խոսքով՝ այնքան էլ կարևոր չէ, որ իրենց դստեր հոգեբանական վիճակին և հոգեկան առողջությանը վնաս է հասցվել" (ԱՕԱ): Աղջկա խնամողները հետագայում հրաժարվել էին հոգեկան առողջության վերաբերյալ խորհրդատվությունից՝ վախենալով հոգեբուժական ծառայությունների շուրջ պիտակավորումից: Ինչպես բացատրել էր առաջնային օղակի աշխատողը.

> *Ախտանշաններից մեկը, որ զարգանում էր և սկսել էր ինձ անհանգստացնել, ինքնասպանության մտքերն էին... Մենք առանձին խոսեցինք նրա ծնողների հետ և առաջարկեցինք, որ իրենց աղջիկն այցելի հոգեբույժին: Սակայն նրանք չհամաձայնեցին, և զննությունը տեղի չունեցավ... Որքան էլ բացատրեցինք, որ հոգեբույժի այցելելը միշտ չէ, որ նշանակում է, թե իրենց աղջիկն այդուհետև պետք է սկսի դեղորայք ընդունել, և որ դա արվում է ընդհանուր վիճակը պատկերացնելու համար, նրանք չընդունեցին մեր խորհուրդը և նրան չտարան խորհրդատվության (ԱՕԱ):*

Այս ծառայություն մատուցողը նաև բացատրեց, որ ծնողները հրաժարվում են նախնական հոգեբուժական ուղղորդումից, որովհետև "երբ նրանք լսում են "հոգեբույժ" բառը, [ծնողները] սկսում են մտածել, որ իրենց աղջկան տանելու և պահելու են հոգեբուժական հիվանդանոցում" (ԱՕԱ): Մեկ այլ դեպքով ծնողները հրաժարվել են երեխային հոգեբուժական հիվանդանոց փոխադրելուց, որովհետև "հոգեբուժական հիվանդանոցում լինելը նույնպես ամոթ է" (ԱՕԱ): Այս օրինակներում հոգեկան ոչ բավարար առողջության շուրջ սոցիալական խարանը կարող է երեխաներին հետ պահել իրենց անհրաժեշտ մասնագիտական օգնությունից:

Ծառայություն մատուցողները հայտնել են, որ նաև երեխաները կարող են ընդօրինակել այս թյուրընկալումը կամ հոգեբանական օգնության հանդեպ վախը: Առաջնային օղակի աշխատողներից մեկը նկարագրել էր, թե երեխան ինչպես էր հոգեբաններին շփոթում հոգեբույժների հետ, որի պատճառով վարանում էր դիմելու օգնության: "Մենք հասանք նրան, որ նա սկսեց հասկանալ, որ հոգեբանը հոգեբույժ չէ, և որ հոգեբանը մասնագետ է: Մենք չենք գործածում "հոգեբան" բառը, այլ ասում ենք, որ մասնագետը կխոսի քեզ հետ, որ հասկանա քո խնդիրն ու օգնի քեզ" (ԱՕԱ):

Մասնագետները նաև նշել են, թե որքան դժվարությամբ են ծնողները համակերպվում իրենց երեխայի նկատմամբ բռնության փաստին՝ միաժամանակ փորձելով աջակցել նրանց: Որոշ դեպքերում ծնողներն այնքան վշտացած են, որ նախընտրում են չընդունել շահագործման և բռնության իրողությունը, կամ կարող են խնդիրը լուծել ընտանիքի ներսում: Նման դեպքեր նկարագրել են մի քանի ծառայություն մատուցողներ.

> *Ծնողները երբեմն չեն ցանկանում խոսել այդ դեպքերի մասին: Նրանց համար դա փակ թեմա է, ցավոտ խնդիր: Նրանք չեն ուզում, որ մարդիկ իմանան իրենց երեխաների մասին, սակայն երբեմն իրավիճակն այնքան անհույս է դառնում, որ նրանք մեզ այցելում են անելանելի վիճակում [իրենց իսկ խոսքով]՝ հույսով, որ մենք կօգնենք իրենց: Երբեմն լինում են դեպքեր, երբ երեխային բերում է ոստիկանությունը, սակայն ծնողները դեմ են դրան: Նրանք ասում են՝ "Ինչո՞ւ եք երեխային այստեղ բերել: Մենք մեր խնդիրն ինքներս կլուծեինք" (ԱՕԱ):*

> *Նրանք [ծնողները] պարզապես որոշում էին այլևս չգալ, քանի որ, նրանց կարծիքով, վտանգն անցել էր [...] Մենք ունեցել ենք դեպքեր [երեխայի սեռական շահագործման և բռնության], երբ ծնողները պարզապես վերցնում էին երեխաներին ու հեռանում [...] Ծնողներից շատերը չեն հասկանում (ԱՕԱ):*

Ըստ մասնագետների՝ ծնողների ներգրավվածությունը էական է երեխային ծառայություն մատուցելու ամբողջ ընթացքում, սակայն ծնողներն ու ընտանիքը նույնպես հաճախ մենակ են մնում իրենց ապրումների և կարիքների մեջ: Որոշ մասնագետներ ընդգծել են ընտանիքահենք թերապիաների կենսական նշանակությունը, որոնց միջոցով հնարավոր է նաև փոխել երեխաներին իրենց իսկ վերապրած շահագործման ու բռնության համար մեղադրելու գործելակերպը: Որոշ դեպքերում պահանջվել են համատեղ թերապիայի կուրսեր՝ երեխաների ու նրանց ընտանիքի անդամների միջև վստահությունն ու շփումը վերականգնելու նպատակով: Օրինակ՝ մայրերը հաճախ իրենք իրենց են մեղադրում երեխայի զոհականացման համար, և անհրաժեշտ է նրանց աջակցել՝ այդ զգացումները հաղթահարելու և ընտանիքում խաթարված հարաբերությունները վերականգնելու համար:

Եվ հակառակը, ըստ մասնագետների, որոշ ծնողներ ընդդիմացել են երկարատև թերապիային, քանի որ համոզված էին, որ դա օգտակար չէ: Ըստ առաջնային օղակի աշխատակցի՝ մայրերից մեկն ասել էր. "Ես ուզում եմ դադարեցնել այս ամենը, որովհետև նա [իր դուստրը] արդեն սկսել է չմտածել դեպքի մասին ամեն օր: Եվ երբ նա այցելում է ձեզ [հոգեբանին], դա անընդհատ հիշեցնում է նրան այդ [շահագործման և բռնության] մասին" (ԱՕԱ): Սա ընդգծում է այն, որ ծնողները հաճախ կարիք ունեն ինտենսիվ աջակցության, որպեսզի կարողանան արձագանքել իրենց երեխաների կարիքներին:

Հարցված մասնագետները չեն նշել երեխաների կողմից ծառայություններից ինքնուրույն օգտվելու դեպքեր: Ընտանիքի համագործակցությունից ու ներգրավվածությունից կախված լինելը դեռևս լուրջ մարտահրավեր է, քանի որ ընտանիքները հաճախ խուսափում են ծառայություններից օգտվելուց՝ ուժգին վախի ու ամոթի պատճառով, կամ, գուցե, չեն գիտակցում իրենց երեխաների վրա շահագործման և բռնության ներգործության լրջությունը:

Ծառայությունների անհավասար հասանելիությունը գյուղաբնակ երեխաների համար

Մասնագետների հետ հարցազրույցների ընթացքում վերհանվել են ծառայությունների մատուցման հետ կապված անհամաչափություններ՝ կախված տեղանքից, հատկապես գյուղական կամ հեռավոր բնակավայրերում: Այս առավել մեկուսացված տարածքներում մասնակիցները որպես ծառայությունների արդյունավետ մատուցման վրա ազդող խոչընդոտներ նշել են լոգիստիկ դժվարություններն ու պրոֆեսիոնալ աջակցության սակավությունը: Մասնագետները նշել են, որ հաճախ կորցնում են կապը մեկուսացված համայնքներում ապրող ընտանիքների հետ լոգիստիկ խնդիրների պատճառով: Աշխատողներից մեկը նշել է. "Ես փորձում էի նրանց ինձ մոտ [աշխատավայր] բերել, բայց նրանք այլևս չեկան: Ու քանի որ ես միայն գյուղի բուժքրոջ կոնտակտներն ունեի, նրա միջոցով

5.1 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՐՄԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՄ ԴՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

տեղեկացա, որ նրանք այժմ ապրում են ինչ-որ հեռավոր վայրում, մայրը բաժանվել է ամուսնուց, վերցրել է երկու երեխաներին և գնացել է ապրելու այդ տարածքում, և այդքանով նրանց հետ կապն ընդհատվեց" (ԱՕԱ):

Առաջնային օղակի աշխատողն անդրադարձել էր նաև երեխային աջակցության ծառայությունների տրամադրման հետևողականության բացակայության խնդրին. "Նա [երեխան] պետք է լրացուցիչ աջակցություն ստանար, ես չեմ կարծում, թե նրա հետ աշխատանքն ավարտվել էր" (ԱՕԱ):

Գյուղական բնակավայրերում հոգեբանների պակասը է՛լ ավելի է սահմանափակում աջակցության ծառայությունների հասանելիությունը երեխաների համար: Ծառայություն մատուցողներից մեկը նկատել էր. "Երեխան ապրում էր հեռավոր գյուղական համայնքում: Այնտեղ հոգեբան չկար, դպրոցում՝ նույնպես: Հաստիքն առկա էր, բայց թափուր էր" (ԱՕԱ): Ինչպես բացատրել է ծառայություն մատուցողներից մեկը, լավ վերապատրաստում անցած մասնագետները շահագրգռված չեն աշխատելու գյուղական բնակավայրերում, ինչն ավելի էր բարդացնում իրավիճակը. "Լավ մասնագետները մարզեր չեն գնում, աշխատավարձերը ցածր են, խիստ ցածր, և հոգեբանների նման լավ մասնագետներին մարզում մատների վրա կարելի է հաշվել" (ԱՕԱ):

Առաջնային օղակի աշխատողներից մեկը բացատրել էր, որ թեև իրենք փորձում են հայտնաբերել սեռական բռնությունից տուժած երեխաներին և նրանց ուղղորդել տեղի հոգեբանի մոտ, սակայն հաճախ դա հնարավոր չի լինում: Գյուղական բնակավայրերում ապրող նման երեխաների համար դա նշանակում է, որ նրանք ստիպված են մասնագիտացված ծառայությունների համար հաճախ ուղևորվել քաղաքային կենտրոններ կամ մայրաքաղաք: Եթե անգամ ՀԿ-ներն ապահովում են փոխադրումը, միևնույն է, ստիպված երկրով մեկ ճամփորդելը հավելյալ բեռ է երեխաների համար, որը կարող է նրանց հետ պահել աջակցությունից օգտվելուց: Առաջնային օղակի աշխատողներից մեկը պարզաբանել է, թե ինչպես մի աղջիկ "ամեն շաբաթ չորս ժամ անցկացնում է տաքսիներում՝ երկու ժամ՝ Երևան գալու, և ևս երկու ժամ՝ տուն վերադառնալու համար, և դա՝ հոգեբանին այցելելու համար" (ԱՕԱ):

Կարևոր է նշել, որ երբ սոցիալական աշխատողներն օգտվում են տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրած փոխադրամիջոցներից, դա ակամա կարող է ուշադրություն հրավիրել երեխայի և նրա ընտանիքի վրա, հատկապես փոքր համայնքներում: Ինչպես ծառայություն մատուցողներից մեկն է նշել.

> *Եթե դեպքը գյուղում է, ապա սոցիալական աշխատողներին հարկավոր է համայնքի ղեկավարի օգնությունը [տրանսպորտն ապահովելու հարցում]: Նրանք պարտավոր են մեզ ապահովել տրանսպորտով և դա սիրով են անում: Բայց, օրինակ, եթե որևէ գյուղում այդ անձն օգնեց մեզ մեկ անգամ, երկու, երեք, չորս անգամ, նրա մոտ բնականաբար հարց կառաջանա՝ ինչի՞ համար է սոցիալական աշխատողն այցելում այս ընտանիքին, ինչի՞ համար է շարունակում այցերը (ԱՕԱ):*

Ինչպես քննարկվել է սույն զեկույցի տարբեր հատվածներում, հասարակական խարանն ու որպես բռնության զոհ պիտակավորվելու վախերը շատ տարածված են և կարող են հավելյալ խոչընդոտներ հարուցել ծառայություններին դիմող երեխաների ու երիտասարդների համար: Ստորև լրացուցիչ անդրադարձ է արված ծառայությունների մատուցման ընթացքում գաղտնիության վերաբերյալ այս մտահոգություններին: Այդուհանդերձ, սեռական բռնության ենթարկված երեխաների ու երիտասարդների վերաբերյալ հետազոտությունները չափազանց կարևոր են ծառայությունների մատուցման շուրջ նրանց ընկալումները, շարժառիթները և նրանց առջև ծառացած խոչընդոտներն ավելի լավ ըմբռնելու համար:

5.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ և ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հայաստանում մասնագետների հետ անցկացված հարցազրույցների ընթացքում վերհանվել են որոշ դիտարկումներ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաներին առաջարկվող ծառայությունների մատուցման ու դրանց արդյունավետության վերաբերյալ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հարցվածների կարծիքով տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների համար հատուկ նախատեսված ուղեցույցներ և մեթոդաբանություններ սահմանված չեն:

Շահագործումից և բռնությունից տուժած երեխաներին աջակցելու՝ տվյալների վրա հիմնված թերապևտիկ մոդելների անհրաժեշտությունը

Ծառայություն մատուցողներն անդրադարձել են հոգեբանական այն միջամտություններին, որոնք իրենք գործադրել են երեխաների հուզական և վարքային կարիքներին արձագանքելու համար: Նրանցից մի քանիսը որպես հոգեբանական վերականգնմանը նպաստելու գործիքներ նշել են այնպիսի գործողությունները, ինչպիսիք են ձեռագործությունը, պարը կամ լողը: Այդուհանդերձ, այս գործողությունները բնութագրվել են որպես "օրվա մեծ մասը երեխաներին զբաղված պահելու և տարբեր բաներով զբաղեցնելու միջոց, որպեսզի նրանք չկենտրոնանան իրենց խնդիրների վրա" (ԱՕԱ), այլ ոչ որպես թերապևտիկ միջոցառումներ, որոնք կարող են օգնել երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգմանը: Այս գործողությունները ներառված չեն նաև լայն թերապևտիկ ուղեցույցների և մոտեցումների մեջ, որոնք նպատակ ունեն հաղթահարելու տրավման և բարելավելու բարեկեցությունը. "Մեր աշխատանքն է՝ փորձել երեխաներին զերծ պահել կրկնակի զոհականացումից, երկրորդային տրավմայից: Եվ այդ գործում մենք օժանդակող դեր ունենք, ուզում եմ ասել՝ նման իրավիճակներում մենք չենք կարող թերապիա իրականացնել" (ԱՕԱ):

Ծառայություն մատուցողներից որևէ մեկը չի հիշատակել երեխաների ու երիտասարդների տրավման հաղթահարելու համար հոգեբանական ապաքինման միջազգային ուղենիշների[38] կիրառման մասին, ինչպիսին է, օրինակ, տրավմայի վրա կենտրոնացած կոգնիտիվ վարքային թերապիան: Ստանդարտացված թերապևտիկ մոդելին հետևելու փոխարեն մասնագետները իրենց մոտեցումը ձևավորում են անցյալի փորձառության և ներքին քննարկումների հիման վրա: Սրա մասին նշել է ծառայություն մատուցողներից մեկը. "Երբեմն մեզ թվում է, թե քանի որ մենք արդեն իսկ աշխատել ենք նման մարդկանց հետ, հետագայում ամեն ինչ ավելի հեշտ կլինի: Սակայն հենց այստեղ է սխալմունքը, որովհետև դեպքերը միանման չեն լինում: Ուստի մենք հավաքվում ենք և խմբային մասնագիտական ժողովում քննարկում, թե ինչ պետք է անել հաջորդիվ" (ԱՕԱ):

Սեռական բռնության ենթարկվածների համար մասնագիտացված ծառայությունների սակավությունը կարող է նշանակել տրավմայի վրա կենտրոնացած պատրաստի թերապիայի անհասանելիություն: Ծառայություն մատուցողները որոշ դեպքերում հստակ նշել են սրա մասին, երբեմն էլ դա դիտարկել են իրենց փորձառության լույսի ներքո. "Մեր մարզում չկա այնպիսի կառույց, որը կզբաղվեր նրանց [բռնության ենթարկվածների] հարցերով: Կան ընտանեկան բռնության հարցերով զբաղվող կառույցներ, բայց դրանք չեն զբաղվում սեռական բռնության ենթարկված կամ հանցանք կատարած երեխաների գործերով" (ԱՕԱ):

Բացի այդ՝ հարցվածներից որևէ մեկը չի նշել, որ մասնագետներն աջակցություն են ստացել թերապևտիկ ուղեցույցները տեղի մշակութային առանձնահատկություններին հարմարեցնելու համար՝ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության հետ կապված տրավման հաղթահարելու համար: Սա կարող է վկայել արդյունավետ թերապևտիկ մեթոդների վերաբերյալ իրազեկված չլինելու և այս հանցագործություններից տուժածների համար նախատեսված մասնագիտացված ծառայությունների բացակայության մասին: Դա նշանակում է, որ երբ երեխաներն ու երիտասարդները ստանում են

38. Jonathan F.B. Thielemann, et al., "A systematic review and meta-analysis of trauma-focused cognitive behavioral therapy for children and adolescents" (Երեխաների և դեռահասների համար տրավմային վրա կենտրոնացած կոգնիտիվ վարքային թերապիայի համակարգային ուսումնասիրություն և մետա-վերլուծություն), *Child Abuse & Neglect*, 134, 2022, 105899:

հոգեբանական օգնություն, միշտ չէ, որ դա ենթադրում է բարձրակարգ և տվյալների վրա հիմնված թերապևտիկ խնամք:

Ավելին՝ հոգեսոցիալական աջակցությունը հաճախ տրամադրվում է ոչ թե որպես սեռական շահագործման և բռնության ենթարկված բոլոր երեխաներին հուզական աջակցություն ցուցաբերելու կարևորագույն գործիք, այլ միայն, այն երեխաներին, որոնք գնահատվել են որպես ախտորոշելի հոգեկան հիվանդություն ունեցողներ: Օրինակ՝ դեպքերից մեկում տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված մի երիտասարդ տղայի հոգեբանական աջակցություն չէր առաջարկվել, որովհետև, ինչպես ծառայություն մատուցողն էր բնորոշել. "[Երիտասարդ տղան] որևէ բան չէր ասել այն հոգեկան տրավմայի մասին, որից տառապում էր այդ պահին" (ԱՕԱ): Այս մոտեցումը խոսում է այն խնդրի մասին, որ հոգեկան առողջության խնդիրներն անտեսվում են այնքան ժամանակ, մինչև ի հայտ գան ակնհայտ և ախտորոշելի վիճակները: Նախքան հոգեկան առողջության ծառայություն մատուցելը երբեմն կարող են առաջարկվել ֆորմալ գնահատումներ և հոգեբանական վնասի փաստաթղթային արձանագրում, որոնց պատճառով կարող են ուշանալ անհրաժեշտ միջամտությունները:

Միջոլորտային համակարգում և համագործակցություն

Հարցվածները պարբերաբար նշել են այս բնագավառում առկա համագործակցության մասին, այդ թվում՝ ՀԿ-ների և պետական ծառայություն մատուցողների, տեղի դպրոցների, ոստիկանության բաժանմունքների, խնամակալության և հոգաբարձության մարմինների միջև: Թեև մասնագետների գործունեության վերաբերյալ հարցազրույցների ընթացքում համակարգման և համագործակցության հարցերին անդրադարձ արվել է, հետազոտության շրջանակում համակարգման և համագործակցության հարցերն առանձին չեն գնահատվել: Գնահատումը թույլ կտար ներկայացնել առավել մանրակրկիտ պատկերը: Հետազոտությունից միայն պարզ է դարձել, որ ծառայություն մատուցողներն իրենց համագործակցությունը բնութագրում են դրական, և դա ամրապնդելու ուղղությամբ քայլերի համար լուրջ հիմքեր կան:

> *Երբ երեխայի նկատմամբ տեղի է ունենում բռնություն [...], կան այդ դեպքերը վերհանելու մի քանի միջոցներ [...] Մեկը այն է, երբ ես անձամբ եմ վերհանում դեպքը, ասենք՝ տնայցերի ժամանակ... Մեկ այլ միջոց է ոստիկանությունը... Այդ [երեխայի նկատմամբ բռնության] դեպքերով ավելի հաճախ զբաղվում է ոստիկանության համապատասխան բաժանմունքը, և նրանք հրավիրում են սոցիալական աշխատողին, այսինքն՝ ինձ: Եղել են դեպքեր, երբ Միասնական սոցիալական ծառայությունն է մեզ տեղեկացրել դեպքի մասին կամ համայնքապետարանի համապատասխան բաժինը: Ինչ վերաբերում է նշված դեպքին, ես զանգը ստացել եմ ոստիկանությունից (ԱՕԱ):*

> *Ոստիկանությունը, վստահաբար, տեղեկությունը կուղարկի համապատասխան սոցիալական կենտրոններ, քանի որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համապատասխան ծրագրեր ունեցող ՀԿ-ները ծառայություն մատուցում են ոչ միայն թրաֆիքինգի կամ ընտանեկան բռնության զոհերին, այլև սեռական բռնության ենթարկված անձանց (ԱՈՄ):*

Գաղտնիություն

Գաղտնիությունն ու վստահությունը առաջնային օղակի աշխատողները բնութագրել են որպես չափազանց կարևոր հանգամանք բարեհաջող միջամտության և երեխաներին ու ընտանիքներին խարանից ու սոցիալական հետևանքներից պաշտպանելու համար. "Գաղտնիությունը շատ ճիշտ պահվել է ինչպես կենտրոնի ու մնացած աշխատողների [...], այնպես էլ համայնքային սոցիալական ծառայության և ոստիկանության կողմից: Վերջինս նույնպես պահպանել է գաղտնիությունը: Քանի որ դեպքը բացահայտվել էր [...], այն կարող էր դառնալ ամբողջ համայնքի խոսակցության թեման, իսկ երեխան կարող էր թիրախավորվել" (ԱՕԱ):

Նույն կերպ, մեկ այլ մասնակից նկարագրել էր, թե ինչպես է գաղտնիության պահպանման մասին հավաստիացումը վստահություն հաղորդել երեխային. "Երբ աղջիկն արդեն հասկացել էր, որ իրեն այլևս վտանգ չի սպառնում, այսինքն, որ ամաչելու կարիք չկա և այլն, և որ ամեն ինչ գաղտնի է մնալու, որն ամենակարևորն էր, ամեն ինչ սկսեց լավ ընթանալ" (ԱՕԱ):

Այնուամենայնիվ, մասնագետները նշել են նաև, որ տարբեր կազմակերպություններ և ծառայություն մատուցողներ միշտ չէ, որ հետևողական են գաղտնիությունը պահելու հարցում և նշել են գաղտնիության խախտման դեպքեր, որոնք կարող էին բացասական հետևանքներ ունենալ տուժողների և նրանց ընտանիքների համար: Առաջնային օղակի աշխատողներից մեկը հիշատակել էր նման խախտման մի դեպք, որը շատ ծանր հետևանքներ էր առաջացրել. "Կարող եմ ասել, որ եղել են դեպքեր, երբ ընտանիքը ստիպված փոխել է բնակության վայրը [...] Սխալ միջամտությունը կարող է կործանել ընտանիքի ապագան" (ԱՕԱ):

Մասնագետները քննարկել են, թե որքան բարդ է գաղտնիությունը պահպանել գյուղական միջավայրում, հատկապես փոքր համայնքներում, որտեղ ոստիկանություն գնալը կամ սոցիալական աշխատողի այցը կարող են կասկածներ հարուցել համայնքի մյուս բնակիչների մեջ: Առաջնային օղակի աշխատողներից մեկը պատմել էր այս խնդրին իր մոտեցման մասին. "Տնայցերը ոչ միայն հարմարավետ միջավայր են ապահովում շահառուների համար, այլև հնարավորություն են տալիս խուսափելու անհարկի քննարկումներից ու բամբասանքներից, թե ինչու է անձը այցելել ոստիկանություն, ինչու է գնացել համայնքապետարան և այլն": Այդուհանդերձ, նույնիսկ շահառուի տուն կրկնակի այցերն են կասկածներ առաջացրել համայնքի ներսում. "Հարևանները, ազգականները և այլ մարդիկ շատ հետաքրքրված էին՝ ի՞նչն է պատճառը, որ ես՝ որպես մասնագետ, այցելում եմ նրանց, կամ նրանք են այցելում ինձ, ինչի՞ շուրջ են մեր հանդիպումները: Դա է պատճառը, որ սկսեցինք հանդիպել չեզոք վայրերում՝ զբոսայգիներում, հրապարակում, այսինքն՝ այնպիսի վայրում, որը հարցեր չէր առաջացնի" (ԱՕԱ):

Ծառայությունների շարունակականությունը

Ծառայություն մատուցողները հաճախակի անդրադարձել են այն ջանքերին ու համակարգմանը, որոնք անհրաժեշտ են երեխաների, երիտասարդների ու նրանց ընտանիքների հետ շարունակական աշխատանք ապահովելու համար: Ծառայություն մատուցողներից մեկը նշել էր, որ. "Դա միայն մեկ մասնագետի գործ չէ, այլ պրոֆեսիոնալ թիմի, և դրա համար հարկավոր է լավ թիմային աշխատանք" (ԱՕԱ): Նրանք պարզաբանել են շարունակական մշտադիտարկման և հետևողական գործողությունների անհրաժեշտությունը, սկսած երեխայի տուն այցելելուց՝ նրա միջավայրը լավ պատկերացնելու համար, մինչև միջամտության պլանների կազմում, ինչպես նաև հետևողական այցելություններ երեխայի տուն կամ համայնք.

> *Այդ պլանի վերջնական բաժինը վերաբերում է մշտադիտարկմանը: Մշտադիտարկման փուլում ես հետևողականորեն, մի քանի անգամ կարող եմ այցելել ընտանիքներին կամ տեղեկություններ հավաքել այլ աղբյուրներից (ԱՕԱ):*

> *Մենք ասել ենք նրանց, որ կարող ենք իրենց այցելել առանց նախապես տեղեկացնելու՝ պարզելու համար, թե ինչպես են, ինչով են զբաղվում, այսինքն՝ իրավիճակը վերահսկողության տակ ենք պահում, որ նրանք չկարծեն, թե ամեն ինչ վերջացավ, և մենք այլևս չենք այցելելու (ԱՕԱ):*

5.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ և ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Մասնագետների կողմից վերը նկարագրված քայլերը պահանջում են որոշակի ռեսուրսներ և հանձնառություն՝ ապահովելու համար, որ երեխաները շարունակեն ստանալ աջակցություն, որն անհրաժեշտ է անվտանգ լինելու համար, հատկապես, երբ երեխայի լավագույն շահերից է բխում, որ նա մնա իր սովորական միջավայրում:

Չնայած այս ջանքերին՝ կարող են լինել դեպքեր, երբ հետևողական աշխատանքներ չեն իրականացվում: Այլ մասնագետների նկարագրած մի շարք դեպքերում բռնությունը շարունակվել էր մինչև անգամ աջակցող ծառայություններ տրամադրելուց հետո: Որոշ դեպքերում երեխաները վերադարձել էին ընտանեկան միջավայր, որտեղ սեռական շահագործումն ու բռնությունը շարունակվել էին, իսկ սոցիալական աշխատողները (անհայտ պատճառներով) չէին կարողացել երեխայի հետ շարունակել աշխատել՝ գնահատելու նրա անվտանգությունը: Արդարադատության ոլորտի մասնագետները սա վերագրում են համակարգային թերացումներին, այդ թվում՝ հետևողականության, խնամքի տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների և խնամատարական ծառայությունների անբավարարությանը, որոնք անհրաժեշտ են երեխաների երկարաժամկետ պաշտպանությունն ապահովելու համար:

Առաջնային օղակի աշխատողների և արդարադատության ոլորտի մասնագետների ընկալումները

Ինչպես ծառայություն մատուցողների, այնպես էլ արդարադատության ոլորտի մասնագետների հետ զրույցներից կարելի է ենթադրել, որ, թերևս, առկա են բացեր տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերին արձագանքելու վերաբերյալ գիտելիքների և կարողությունների մասով: Մասնավորապես, ծառայություն մատուցողները կարող են անտեսել կամ թերագնահատել տղաների, ԼԳԲՏՔԻ+ երիտասարդների կամ երեխաների որոշակի տարիքային խմբի վրա բռնության ազդեցությունը: Բացի այդ՝ որոշ մասնակիցներ հավատացած էին, որ հոգեբանական աջակցություն հարկավոր չէ այն երեխաներին, որոնք չունեն տրավմայի ակնհայտ ախտանշաններ, կամ "ամաչկոտ" են:

Քննարկված որոշ դեպքեր բացահայտեցին մասնագետների շրջանում տարածված այն պատկերացումը, որ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործումն ու բռնությունը փոքր տարիքի երեխաների վրա ավելի քիչ ազդեցություն են ունենում, քանի որ դրանք անմիջապես նկատելի չեն ծառայություն մատուցողներին: Դա նկարագրել է հոգեբաններից մեկը, որը պարզաբանել է ավելի փոքրահասակ երեխաներին աջակցելու գործընթացը. "Երբ երեխան փոքր է և ամբողջությամբ չի հասկանում, թե ինչ է կատարվել իր հետ, նման դեպքերում հետևանքներն այնքան էլ սաստիկ կամ խոր չեն լինում: Եվ, անշուշտ, մենք նրանց շատ հաճախակի չենք այցելում" (ԱՕԱ):

Այնուամենայնիվ, այն կարծիքը, որ երեխան հոգեբանական աջակցության կարիք չունի, է՛լ ավելի տարածված էր ավելի մեծ տարիքի (15-17 տարեկան) դեռահասների առնչությամբ, երբ սեռական կոնտակտը ձևակերպվել է որպես կամավոր և փոխհամաձայնությամբ տեղի ունեցած գործողություն: Դեպքերից մեկում ծառայություն մատուցողը երիտասարդ կնոջն ուղղորդել էր սեքսոլոգի մոտ, երբ եզրակացրել էր, որ այն, ինչին նա ենթարկվել էր, երեխայի նկատմամբ սեռական բռնություն չէր կարող համարվել, քանի որ, ըստ մասնագետի, նա իր վարքի համար ամոթի զգացում չէր ցուցաբերում: 16-ամյա աղջկան ենթարկել էին գրումինգի, և նրա նկատմամբ սեռական բռնությունը ցուցադրվել էր ուղիղ հեռարձակմամբ: Սակայն, նրան ասել էին, որ հոգեբանական աջակցության կարիք չկա.

> *Նա հասուն էր, խելացի, փոքր-ինչ վարքային խանգարում ուներ, սեփական մոր հետ նրա պահվածքը, ինձ հետ այստեղ խոսելու ձևը [...] Նա բացարձակապես չէր ամաչում իր արածից [...] Այս աղջկա դեպքը պարզապես այսօրվա կյանքի արդյունքն է, համամիտ չե՞ք: Դա այսօրվա համացանցի խնդիրն է: Դա չափից ավելի ազատության խնդիր է, ամբողջ աշխարհի բարոյականության հետ կապված խնդիր (ԱՕԱ):*

Տուժողների գենդերային և սեռական ինքնության շուրջ խարանը նույնպես կարող է նպաստել նրան, որ ծառայություն մատուցողներն անտեսեն շահագործման և բռնության հնարավոր ներգործությունը: Մասնագետները որոշ դեպքերում կրկնազոհականացումը պայմանավորում էին երեխաների վարքագծով և նախկինում տեղի ունեցած շահագործման և բռնության հետևանքով առաջացող անդառնալի հոգեբանական փոփոխություններով: Որոշ դեպքերում մասնագետներն ունեին այն պատկերացումը, թե բռնության հետևանքով երեխաները դառնում են հիպերսեքսուալ: Օրինակ՝ մասնագետներից մեկը պատմել էր մի դեպքի մասին, երբ աղջկա պահվածքն ընկալվել էր որպես սեքսուալ կոնտակտ ունենալու ֆիզիկական պահանջ, որը դրդում էր աղջկան կրկին շփվել իր հարևան չափահաս բռնարարի հետ. "Բժիշկները մեզ բացատրում էին, որ եթե ամեն ինչ այդքան հեռու է գնացել, ապա դա [սեռական կոնտակտը] կարիք է... Եթե դուք աղջկան չպահեք [ապաստարանում], դա, իհարկե, խնդիր է, սակայն դրա հետ ոչինչ չեք կարող անել" (ԱՕԱ): Մեկ այլ դեպքում էլ մասնագետներից մեկը նշել էր. "Եթե դա նրա [տղայի սեռական] կողմնորոշումն է, ապա ոչ ոք չի կարող նրան հետ պահել [իրեն շահագործող տղամարդկանցից]" (ԱՕԱ):

Այլ դեպքերում էլ "գայթակղիչ" օգտահաշիվներ ստեղծելը կամ սեքսուալ բնույթի նկարներ տարածելը դիտարկվել է որպես երեխայի ակտիվ ընտրություն, ոչ թե խոցելիության կամ դեռահասության տարիքի դրսևորում: Օրինակ՝ մասնագետներից մեկը նշել էր, որ երեխայի նկատմամբ սեռական բռնություն պատկերող նյութեր ստեղծելը բխում էր աղջկա՝ սեռականությանն առնչվող թեմաներ քննարկելու նախաձեռնությունից. "Աղջիկը սեփական նախաձեռնությամբ սկսել էր զրույցներ վարել սեռականության թեմաներով: Աղջիկը հասուն էր, բայց տղան [որը նրան ցույց էր տվել մնասակար սեռական վարք պատկերող նյութերը], այնքան էլ հասուն չէր" (ԱՕԱ):

Նման տեսակետները կարող են առանց դիտավորության հանգեցնել բռնության ենթարկվողներին մեղադրելու և խարանավորելու գործելակերպի, որը բացասաբար է անդրադառնում երեխաների՝ ծառայություններից, պաշտպանության համակարգերից ու վերականգնողական գործընթացներից օգտվելու փորձառության վրա և կարող է մնաս պատճառել: Երբ երեխաների առցանց հարաբերությունները դիտվում են որպես ռիսկի գնալու ակտիվ ընտրություն, այլ ոչ թե խոցելիության կամ դեռահասի սեռական զարգացման դրսևորում, ապա դա նվազեցնում է բռնարարների պատասխանատվությունը և հանգեցնում է երեխաներին մեղադրելու արատավոր գործելակերպի՝ առաջ մղելով այն մտածելակերպը, որ երեխաներն ինչ-որ չափով պատասխանատու են իրենց նկատմամբ գործադրված շահագործման և բռնության համար:

Սա վկայում է այն մասին, որ հարկավոր է միջոլորտային մոտեցում, որպեսզի սեռական շահագործման կամ բռնության ենթարկված երեխաներին առնչվող մասնագետները իրազեկված լինեն այս գործելակերպի ու համոզմունքների մասին, երբ մեղադրվում են երեխաները: Դրանով նաև ընդգծվում է վերապատրաստումների անհրաժեշտությունը երեխաների նկատմամբ բռնության բոլոր՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հետևանքների վերաբերյալ՝ անկախ տարիքային խմբից, գենդերային ինքնությունից և սոցիալ-տնտեսական իրավիճակից կամ այլ գործոններից, ինչպես նաև այնպիսի մոտեցումների վերաբերյալ, որոնք կօգնեն զգայուն աջակցություն ցուցաբերելու բռնության ենթարկված երեխաներին նրանց վերականգնման ընթացքում:

6. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

6. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ և ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

"Երեխայի իրավունքների մասին" կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն՝ երեխաներն ունեն բռնությունից և շահագործումից զերծ ապրելու իրավունք[39]: Երեխայի իրավունքի խախտման պարագայում Պետությունները պարտավորվում են ապահովել արդարադատության և իրավական պաշտպանության միջոցների հասանելիության իրավունքի իրացումը: Արդարադատության մատչելիությունն ընդգրկում է իրենց իրավունքների խախտման դեպքում արդար և ժամանակին ողջամիտ իրավական պաշտպանությունից օգտվելու կարողությունը: Սա ներառում է արդարացի և ժամանակին իրականացվող իրավական ընթացակարգեր և երեխաների վերականգնումն ու վերաինտեգրումն ապահովելուն ուղղված աջակցության ծառայությունների հասանելիություն[40]: Երեխայակենտրոն արդարադատության գործունեության նպատակն է՝ ապահովել, որ արդարադատության և իրավական պաշտպանության միջոցների հասանելիությունը պակաս վախեցնող լինի երեխաների համար և նվազեցնի բուն արդարադատության համակարգում հավելյալ վնասի առաջացման ռիսկը, ընդ որում՝ այնպիսի գործընթացների միջոցով, որոնք տարիքին համապատասխան են, արագ և ուղղված երեխայի կարիքների բավարարմանն ու նրանց անձնական գաղտնիության ապահովմանը[41]:

Այդուհանդերձ, սեռական շահագործման և բռնության ենթարկված այն երեխաները, որոնք առնչվում են արդարադատության համակարգի հետ՝ սեփական ցանկությամբ թե ոչ, ասես հայտնվում են իրենց համար միանգամայն օտար միջավայրում: Մեծահասակների կողմից հարցաքննությունները, բարդ իրավական գործընթացները, անորոշ արդյունքներն ու երկար սպասելաժամանակը կարող են խորացնել վախի ու հուսահատության զգացումները: Սույն բաժնում մասնագետների հետ քննարկումների հիման վրա նկարագրված են Հայաստանի ֆորմալ արդարադատության համակարգի հիմնական բաղադրիչները՝ սկսած հայտնաբերումից մինչև քննչական գործողություններ և դատական վարույթ, և դրանք ուսումնասիրվում են երեխայակենտրոն արդարադատության տեսանկյունից:

> *Երեխաներն ու ծնողները մեզ համարում են իրավապահ մարմին, պատժիչ ստորաբաժանում [...] Մենք փորձում ենք բացատրել, որ այստեղ ենք՝ ոչ միայն պատժելու, այլև աջակցելու, օգնելու համար (ԱՈՄ):*

Իրավապահ մարմինների անդրադարձից կարելի է եզրակացնել, որ առկա են անհամապատասխանություններ երեխայակենտրոն գործընթացների մասին իրենց ընկալումների և երեխաների իրական փորձառության միջև:

39. Միավորված ազգերի կազմակերպություն, Convention on the Rights of the Child, General Assembly Resolution 44/56, 20 November 1989 (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, Գլխավոր ասամբլեայի բանաձև թիվ 44/56, 20 նոյեմբեր 1989 թ.):
40. ECPAT International, *Voices of Survivors of Child Sexual Exploitation and Abuse on Justice and Effective Remedies (Երեխայի սեռական շահագործում և բռնություն վերապրածների ձայնը՝ արդարադատության և պաշտպանության արդյունավետ միջոցների վերաբերյալ)*, ԷՔՓԱԹ Ինտերնեշնլ, Bangkok, 2024:
41. Council of Europe, *Guidelines of the Committee of Ministers of the Council of Europe on Child-friendly Justice*, Council of Europe *(Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ուղենիշերը երեխաների համար նպաստավոր արդարադատության վերաբերյալ)*, Ստրասբուրգ, 2011:

6.1 ԴԵՊՔԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ և ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Պարզաբանում. Հայաստանի իրավապահ մարմինների դերերը, պարտականությունները և կառուցվածքը

ՀՀ քրեական ոստիկանությունը կիբեռհանցագործությունների դեմ պայքարում է քրեական ոստիկանության գլխավոր վարչության ստորաբաժանում հանդիսացող կիբեռհանցագործությունների դեմ պայքարի բաժնի միջոցով: Այս բաժինը ամբողջ երկրի տարածքում զբաղվում է կիբեռհանցագործությունների հարցերով, այդ թվում՝ համակարգչային համակարգերի դեմ ուղղված այնպիսի հանցագործություններով, ինչպիսիք են հաքերությունը, կենսական կարևորության ենթակառուցվածքների վրա հարձակումները, ապօրինի գաղտնալսումը և տվյալներ մուտք գործելը: Այն նաև զբաղվում է տեխնոլոգիաներին առնչվող այնպիսի հանցագործություններով, ինչպիսիք են համակարգչային խարդախությունը, համացանցային հանցագործությունները, մտավոր սեփականության հետ կապված հանցագործությունները և տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումն ու բռնությունը:

Երբ քրեական ոստիկանությունը գործողություններ է ձեռնարկում ահազանգի կամ հաղորդման հիման վրա, կամ ինքն է հայտնաբերում քրեական արարք և հաստատում հանցանքի կատարման հանգամանքը, գործն անմիջապես փոխանցվում է Քննչական կոմիտեին:

ՀՀ քննչական կոմիտեն նույնպես կարևոր դերակատարություն ունի տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեմ պայքարի գործում՝ Կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության միջոցով: Այս վարչությունը պատասխանատու է կիբեռ-բնույթի հանցագործությունների քննության համար և սերտ աշխատում է իրավապահ այլ մարմինների հետ՝ երկրում կիբեռհանցագործությունների, այդ թվում՝ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության ահագնացող սպառնալիքը չեզոքացնելու ուղղությամբ:

ՀՀ ոստիկանությունը կարևոր դեր ունի երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի նախնական հայտնաբերման գործում և հաճախ ծառայում է որպես առաջին շփման կետ տուժողների և նրանց ընտանիքների հետ: Ոստիկանությունը ստանում է հանցագործության մասին տեղեկությունը և փոխանցում Դատախազություն և/կամ Քննչական կոմիտե՝ քրեական գործ հարուցելու համար:

Օրենսդրության վերանայումից հետո տուժողները կամ նրանց ներկայացուցիչները սեռական հանցագործությունների մասին կարող են հաղորդում տալ արդեն անմիջապես Քննչական կոմիտեին՝ առանց ոստիկանություն հաղորդում ներկայացնելու անհրաժեշտության. "2022 թվականի հուլիսի 1-ից ի վեր նրանք կարող են նաև ուղիղ դիմել Քննչական կոմիտե [...] Մինչ այդ դա հնարավոր էր միայն ոստիկանության միջոցով: Այժմ առկա են այս երկու ուղիները" (ԱՈՄ): Չնայած այս տարբերակի առկայությանը՝ մասնագետների հետ քննարկված դեպքերից որևէ մեկի մասին երեխաների կամ նրանց ներկայացուցիչների կողմից անմիջապես Քննչական կոմիտե դիմելու դեպքեր չեն եղել: Ավելին՝ հարցված մասնագետներից որևէ մեկը տեղյակ չէր, թե ինչպես կարող է օգտվել հանցագործության մասին հաղորդելու այս մեխանիզմից: Սրանից հետևում է, որ անմիջապես Քննչական կոմիտե հաղորդելու տարբերակը տվյալների հավաքման պահին հիմնականում հայտնի չէր տեղում աշխատող մասնագետներին:

Հետևաբար ոստիկանությունը շարունակում է կենտրոնական դերակատարություն ունենալ սկզբնական տեղեկությունը ստանալու, քրեական վարույթ նախաձեռնելու և ուղղորդումն ապահովելու գործում: Այդուհանդերձ, հարցազրույցների ժամանակ մասնագետները հակասական կարծիքներ են հայտնել այն մասին, թե ոստիկանությունն ինչպես է վարում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերը: Չնայած վերջերս Հայաստանի օրենսդրությունում ներդրված՝ գործերի քննության ժամանակ երեխաների համար նպաստավոր մոտեցումներին՝ այդ դրույթները հետևողականորեն չեն տարածվում ոստիկանական ընթացակարգերի վրա: Մասնագետները մատնանշել են հակասություններ այն հարցերում, թե երբ է ոստիկանությունն ընթացք տալիս տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերին, ինչ պայմաններ են ստեղծված երեխաների համար ոստիկանության բաժանմունքներում, և ներգրավված են արդյոք վերապատրաստված հոգեբաններ:

Վարույթ նախաձեռնելուն առնչվող դժվարությունները

Քրեական օրենսգիրքը չի պահանջում երեխայի կամ նրա ներկայացուցիչների պաշտոնական բողոք տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի քրեական հետապնդման համար[42]: Ավելին՝ Օրենքը քննիչներից պահանջում է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է ֆիզիկական անձից, իրավաբանական անձից կամ պետական մարմիններից[43], պայմանով, որ դրանով փաստվի քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանության վերաբերյալ նախնական իրավական և փաստական գնահատականը[44]: Սրան անդրադարձել էին արդարադատության ոլորտի մի շարք մասնագետներ, որոնք պարզաբանել են հետևյալը. "Ծնողը ներկայանում է և հաղորդում է ներկայացնում ոստիկանություն: Պատահում է, որ ծնողը հրաժարվում է, սակայն քանի որ քրեական հանցանքի մասին հայտնի է դարձել, մենք կարող ենք ձևակերպել այն առանց ծնողների" (ԱՈՄ): Բացի այդ՝ որոշ դեպքեր հայտնաբերվում են ոստիկանության օպերատիվ աշխատանքի ընթացքում, որից հետո միայն նրանք մոտենում են տուժողներին: "Նրանք [տուժողները] կամովին չեն ներկայանում ոստիկանություն, և դեպքը հիմնականում բացահայտվում է օպերատիվ աշխատանքի արդյունքում, որից հետո միայն մենք գնում և հրավիրում ենք նրանց" (ԱՈՄ):

Այնուամենայնիվ, որոշ մասնագետներ նշել են, թե որքան դժվարությունների են բախվում, երբ վարույթը նախաձեռնում են առանց տուժողների կամ վկաների ֆորմալ ցուցմունքի: Մեր հարցին՝ "Ինչպե՞ս է հնարավոր, որ ոստիկանությունը տեղյակ լինի հանցանքի մասին, սակայն քրեական վարույթ չնախաձեռնի", մասնակիցներից մեկը պատասխանել է. "Որովհետև հաղորդում առկա չէ" (ԱՈՄ): Այն դեպքերում, երբ բռնության վերաբերյալ ապացույցներն անմիջականորեն ակնհայտ չեն, ոստիկանությունը կարող է հրաժարվել դեպքին ընթացք տալուց՝ ապացույցների անբավարարության հիմքով: "Եթե նա չի ներկայանում և հաղորդում չի տալիս բռնության մասին, և եթե նույնիսկ ֆիզիկական հետքերն ակնհայտ չեն, ապա ապացուցողական բազան բավականին թույլ է, և նրանք [ոստիկանները] ընթացք չեն տալիս դեպքին" (ԱՈՄ): Սա ընդգծում է դեպքերի քրեական հետապնդմանն առնչվող գործնական խոչընդոտները այն համատեքստում, երբ շահագործման և բռնության բացահայտումից հետո երեխաներն ու ընտանիքները կարող են քննադատության, մեղադրանքի և մեկուսացման ենթարկվել:

Ինչպես նշվել է սույն զեկույցի տարբեր հատվածներում, թեև Հայաստանում առկա են կառուցվածքային և ընթացակարգային դժվարություններ, ամոթի և խարանի խնդիրը շարունակում է լինել այն հիմնական պատճառներից մեկը, որի հետևանքով կարող է նվազել բռնության ենթարկվածների՝ իրենց հետ տեղի ունեցածի մասին հայտնելու պատրաստակամությունը: Սա դժվարացնում է տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերին արդյունավետորեն արձագանքելու գործընթացը:

Ոստիկանության բաժանմունքներում առկա պայմաններն ու գործող ընթացակարգերը

Հարցազրույցները ցույց տվեցին երեխայակենտրոն ընթացակարգերի վերաբերյալ իրազեկվածության տարբեր մակարդակներ, և թե ինչպես կարող են այդ ընթացակարգերն ազդել քրեական արդարադատության համակարգի հետ առնչվող երեխաների վրա:

42. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 15 հոդված:
43. Հայաստան, *Քրեական դատավարության օրենսգիրք*, 2021, 173-1 հոդված:
44. Նույն տեղում, 173-2 հոդված:

6.1 ԴԵՊՔԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ և ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Հետազոտությանը մասնակցած պետական սոցիալական աշխատողների կարծիքով ոստիկանության բաժանմունքներում ստեղծված պայմանները նպաստավոր են երեխաների համար. "Մեր ոստիկանությունում ստեղծված են շատ, շատ լավ պայմաններ [երեխաների համար]՝ ամեն առումով. նրանք [ոստիկանները] այդ հարցին շատ լուրջ են մոտենում" (ԱՕԱ): Մյուս կողմից՝ ոստիկանության ծառայողներից մեկն ընդունել էր, որ ոստիկանություն այցելելը կարող է շփոթեցնող լինել. "Երեխաներն ու ծնողները մեզ համարում են իրավապահ մարմին, պատժիչ ստորաբաժանում [...] Մենք փորձում ենք բացատրել, որ այստեղ ենք՝ ոչ միայն պատժելու, այլև աջակցելու, օգնելու համար" (ԱՈՄ): Մյուսներն էլ պատմել են այն մասին, թե ինչպես են իրենք փորձում երեխաների հետ իրենց առնչությունը նվազ ճնշող դարձնել. "Բոլորս հագնում էինք քաղաքացիական հագուստ, որպեսզի երեխաները չճնշվեն մեր համազգեստից" (ԱՈՄ):

Այնուամենայնիվ, իրավապահ մարմինների անդրադարձից կարելի է եզրակացնել, որ առկա են անհամապատասխանություններ երեխայակենտրոն գործընթացների մասին իրենց ընկալումների և երեխաների իրական փորձառության միջև: Օրինակ՝ ոստիկանության ծառայողներից մեկը պատմել էր մի դեպքի մասին, որի ժամանակ երեխաներն ու ծնողները միասին եկել էին ոստիկանության բաժանմունք՝ կասկածյալին ճանաչելու նպատակով. "Որոշ երեխաներ լալիս էին, ծնողները զայրացած էին [...] Նրանք բոլորը սրա նման մի սենյակում էին, և մենք հսկում էինք, որ նրանք չլքեն սենյակը" (ԱՈՄ): Այս դեպքը մատնացույց է անում այն գործելակերպը, որը (կրկնակի) տրավմայի է ենթարկում երեխաներին ու նրանց ընտանիքներին: Վերը նկարագրված դեպքին անդրադառնալիս հարցվողը դա ներկայացրել էր ոչ թե քննադատաբար կամ կրկնազոհականացման կամ երեխայակենտրոն արդարադատության տեսանկյունից, այլ որպես տուժող երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատանքի դժվարություններից մեկը:

Ընդհանուր առմամբ, մասնակիցները նշել էին, որ ոստիկանության հետ նախնական շփումների ժամանակ տեղի ունեցող կրկնակի հարցաքննությունները կարող են հանգեցնել նրան, որ բռնության ենթարկվածներն ու ընտանիքները չցանկանան շարունակել արդարադատության գործընթացը: Հարցվողներից մեկը նկարագրել է մի դեպք, երբ կրկնվող հարցաքննությունների պատճառով երեխան հրաժարվել էր այդ ամենին մասնակցելուց: "Այդ երեխան աղջիկ էր, և նա ամաչում էր այդ աստիճանի բաց խոսել նման թեմայով [...] Նա դարձավ, ինչպես ասում են, ավելի ինքնամփոփ և չէր ցանկանում շփվել" (ԱՕԱ):

Այլ դեպքերում էլ, ոստիկանության խարանավորող վերաբերմունքը նպաստել էր նրան, որ երեխաներն ու նրանց ընտանիքները սկսել էին ընդդիմանալ ֆորմալ մեղադրանք ներկայացնելուն: Առաջնային օղակի աշխատողների խոսքերով՝ ոստիկանությունը երբեմն ինքն էր դրսևորում նույն սոցիալական խարանը, որը համայնքը գործադրում էր տուժողների նկատմամբ: Օրինակ՝ համայնքներից մեկում լուրեր էին տարածվել երկու աղջիկների հղիանալու մասին: Երբ այս աղջիկները հետագայում ենթարկվել էին սեռական շանտաժի, դեպքը վարող սոցիալական աշխատողը նկատել էր, որ այս վնասակար վերաբերմունքը կրկնվում էր նաև ոստիկանության կողմից հարցաքննության ժամանակ: "Ոստիկանը սկսեց հարցեր ուղղել և կասկածանքով վերաբերվել [տուժողների հանդեպ], և ոստիկանության ծառայողները համոզված էին, որ գյուղում [աղջիկների մասին] տարածված բամբասանքները ճիշտ էին" (ԱՕԱ): Ըստ արդարադատության ոլորտի մասնագետի՝ ոստիկանությունում այս վերաբերմունքի հետևանքով որոշ երեխաներ կամ նրանց ընտանիքները հրաժարվեցին գործը շարունակելուց: "Ոստիկանության հետ շփման մի քանի դեպքերից հետո ընտանիքներն ու երեխաները հրաժարվեցին Քննչական կոմիտեի հետ կապ հաստատելուց և շարունակելուց [...] Նրանք որոշեցին լռել իրենց դեպքերի մասին" (ԱՈՄ):

Այս եզրահանգումներից հետևում է, որ պետական ծառայությունների և իրավապահ մարմինների կողմից տրամադրվող աջակցությունն ու գործելակերպը միշտ չէ, որ երեխայակենտրոն են և երբեմն կարող են անգամ հակադրվել երեխաների իրական փորձառությանը: Ոստիկանության ձեռնարկած գործողությունները կարող են ավելի խորացնել տրավման՝ կրկնակի հարցաքննությունների, խարանավորող վերաբերմունքի և տուժողների ու նրանց ընտանիքների հանդեպ զգայունության պակասի պատճառով: Ինչպես նշված է սույն զեկույցի տարբեր հատվածներում, երեխաների ու նրանց ընտանիքների ձայնը բացակայում է այս գործընթացներում, ընդ որում՝ այդ ձայները չափազանց կարևոր են՝ ավելի լավ հասկանալու համար, թե երեխաներն ու երիտասարդներն ինչ ապրումներ են ունենում արդարադատության համակարգի գործունեության տարբեր փուլերում: Այդուհանդերձ, դրա ապահովումը դեռևս խիստ դժվար է՝ հաշվի առնելով այն տրավման ու խարանը,

որոնց բազմաթիվ երեխաներ ու երիտասարդներ առերեսվում են, երբ փորձում են բարձրաձայնել և օգնություն հայցել:

Հոգեբանների ներգրավվածությունը հանցագործություններից տուժած երեխաների հետ ոստիկանության սկզբնական շփումներում

Հաշվի առնելով հոգեբանական այն ծանր ազդեցությունը, որ արդարադատության գործընթացը կարող է թողնել երեխաների վրա, նրանց հետ վերապատրաստված փաստաբանների և հոգեբանների ներկայությունը միևնույն սենյակում երեխաների բարօրությունն ապահովելու և լավագույն շահերը պաշտպանելու միջոցներից մեկն է: Թեև Քրեական օրենսգրքով ներկայում նախատեսված է դատական հոգեբանների ներգրավվածությունը Քննչական կոմիտեի կողմից իրականացվող հարցաքննություններում, քննիչներից մեկը բացատրել էր, որ տուժողների հետ *ոստիկանության սկզբնական առնչության* ժամանակ հոգեբանների ներգրավումը պարտադիր չէ: Համայնքային ոստիկանության մակարդակում հանցագործության մասին հայտնելու գործընթացի կարգավորման այս բացը լրացնելու համար կարելի է ներգրավել մանկավարժների կամ այլ մասնագետների՝ օգնելու համար երեխաներին, որ նրանք շահագործման և բռնության մասին հայտնեն նախքան դեպքը Քննչական կոմիտեին փոխանցելը[45]: Չնայած բարի մտադրություններին՝ այս գործելակերպը պարունակում է կրկնազոհականացման ռիսկ, եթե համայնքային ոստիկանությունը և ներգրավված մասնագետները պատշաճ վերապատրաստված չլինեն տրավմաները հաշվի առնող գործելակերպի և երեխայակենտրոն արդարադատության թեմաներով: Համայնքային ոստիկանությունում կատարվածի մասին հայտնելու վերաբերյալ առավել հստակ կարգավորող դրույթների սահմանումը կօգներ մեղմելու այս ռիսկը և ապահովելու ավելի լավ համապատասխանություն երեխաների հանդեպ զգայուն ընթացակարգերին:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ մասնակիցները որպես լրացման ենթակա բացեր մատնանշել են պաշտոնապես հաղորդում տալու դժկամությունը, կրկնակի հարցաքննություններն ու խարանավորող վերաբերմունքը: Արդարադատության համակարգի հետ առաջին առնչության ժամանակ երեխաների և ընտանիքների համար ավելի ապահով միջավայր ստեղծելը պարտադիր պայման է՝ ապահովելու, որ նրանք իրենց զգան հարմարավետ և պատրաստակամ՝ իրենց վերաբերյալ գործին հետագա ընթացք տալու համար:

> *Հաշվի առնելով հոգեբանական այն ծանր ազդեցությունը, որ արդարադատության գործընթացը կարող է թողնել երեխաների վրա, նրանց հետ վերապատրաստված փաստաբանների և հոգեբանների ներկայությունը միևնույն սենյակում երեխաների բարօրությունն ապահովելու և լավագույն շահերը պաշտպանելու միջոցներից մեկն է:*

45. ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ, առանձնազրույց, 2025 թ.:

6.2 ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեխաների համար քննության նպաստավոր տարածքներ

Մասնակիցները խոսել են Հայաստանում գործադրվող վերջին ջանքերի մասին, որոնք նպատակ ունեն ձևավորելու քննության այնպիսի տարածքներ, որոնք նպաստավոր կլինեն երեխաների համար: Այդուհանդերձ, մասնակիցները նաև մատնանշել են այդ տարածքների պատշաճ գործադրման հետ կապված մի շարք դժվարություններ:

"Ապահով անկյուններ": 2023 թվականին Հայաստանի կառավարությունը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ Երևանում և Կապանում հիմնել է "Ապահով անկյուններ"՝ Բարնահուսի կամ "երեխաների տան" մոդելով: Բարնահուսը "մեկ պատուհանի" սկզբունքով գործող կենտրոն է, որտեղ որևէ տեսակի բռնության, անտեսման, չարաշահման և շահագործման ենթարկված երեխաները պատրաստվում են քննչական ընթացակարգերին, և որտեղ բազմամասնագիտական թիմի ներգրավմամբ՝ քննիչներ, երեխայի փաստաբան, հոգեբաններ և սոցիալական աշխատողներ, կարող է տեղի ունենալ երեխայակենտրոն հարցաքննություն: Այս մոդելի նպատակն է՝ նվազագույնի հասցնել երեխայի բազմակի ուղիղ շփումը արդարադատության համակարգի հետ և պաշտպանել նրանց երկրորդային զոհականացումից:

Թեև այս "Ապահով անկյունները" Հայաստանում ձևավորել են քննությունների համար առավել երեխայակենտրոն միջավայր, դրանց կիրառման հաճախականությունը դեռևս ցածր է: Ըստ որոշ մասնագետների՝ "Շատ դեպքերում այս մոդելը [Ապահով անկյունները] չի կիրառվում" (ԱՈՄ), մեկ ուրիշն էլ հավելել էր՝ "Ոչ ոք չի օգտվում կամ օգտագործում այս մոդելը կամ այս սենյակը" (ԱՕԱ): Առաջնային օղակի մեկ այլ աշխատողի կարծիքով էլ՝ "Հազվադեպ է պատահում, որ ոստիկանությունը համաձայնում է երեխայի հետ զրուցել այստեղ [Ապահով անկյուններում]: Դեպքերի մեծամասնությունում [...] նրանց հարցաքննությունները տեղի են ունենում ոստիկանության բաժանմունքներում" (ԱՕԱ):

Մեկնաբանելով այս մոդելի սահմանափակ կիրառությունը՝ իրավապահ մարմնի ներկայացուցիչներից մեկը նշել էր նման կենտրոնների սակավությունը և դրանցից օգտվելու դժվարությունները: Քանի որ գործում է ընդամենը երկու կենտրոն՝ Երևանում և Կապանում, հեռավոր մարզերի երեխաների համար դրանցից օգտվելը դժվար է. "Այս վայրեր հասնելը դժվարությունների հետ է կապված: Գործողությունները հիմնականում կատարվում են քննչական բաժիններում" (ԱՈՄ): Քանի որ սա համեմատաբար նոր գաղափար է, հնարավոր է, որ հետագա աջակցության ցուցաբերումը կարող է բարելավել գոյություն ունեցող "Ապահով անկյունների" արդյունավետ կիրառությունը: Օրինակ՝ իրավապահ մարմինների պատասխաններից հետևում է, որ նրանք չեն տեսնում համապատասխանություն առկա ռեսուրսների և իրենց իրավապահ գործունեությամբ պայմանավորված կարիքների միջև. "Երևանում այն կանոնավոր չի կիրառվում [...], որովհետև ոչ բոլոր դեպքերն են ուղղորդվում Բարնահուս մոդելով քննչական գործողություններ կատարելու համար: Երբեմն էլ անհրաժեշտ է լինում իրականացնել մի քանի հարցաքննություն, երեխաների հետ կատարել քննչական գործողություններ և այլն" (ԱՈՄ):

Որքան էլ այս նախաձեռնությունը խոստումնալից է, ըստ հարցված մասնագետների, պարտադիր ուղղորդման բացակայությունը և մոդելի կիրառման հետ կապված վերապատրաստումների պակասը կարող են խոչընդոտել "Ապահով անկյունների" պատշաճ կիրառումը: Օրինակ՝ մասնակիցներից մեկը նշել էր այս կենտրոնների ընտրովի կիրառման մասին. "Լինում են դեպքեր, երբ նման կենտրոնի կարիքը չկա: Երբ մեզ դա իսկապես անհրաժեշտ է, մենք հանդիպումը կազմակերպում ենք այնտեղ" (ԱՈՄ): Կարևոր է նշել, որ հարցվածները չեն անդրադարձել հատուկ վերապատրաստումներին կամ ռեսուրսներին, որոնք կարող էին պահանջվել "Ապահով անկյունների" գործարկման համար, հատկապես սեռական շահագործման և բռնության այն դեպքերի առնչությամբ, երբ առկա է տեխնոլոգիական բաղադրիչ: Բացի այդ՝ հետազոտության ժամանակ քննարկված այս դեպքերից և ոչ մեկում "Ապահով անկյուններում" հարցաքննություններ չեն անցկացվել: Փոխարենը, հարցաքննությունները սովորաբար անցել են ոստիկանության բաժանմունքներում, Քննչական կոմիտեի գրասենյակներում կամ, մինչև անգամ, դեպքի վայրերում:

Քննչական կոմիտեի ստորաբաժանումներ: Քննչական կոմիտեում երեխաների համար նպաստավոր միջավայր ստեղծելուն ուղղված ջանքերի մասին խոսել են հենց իրավապահ մարմինների և պետական ծառայությունների մասնագետները: Մասնակիցների կարծիքով Քննչական կոմիտեի բազմաթիվ ստորաբաժանումներ վերանորոգվել են և այժմ ունեն երեխաներին իրենց շենքերում հարցաքննելու հատուկ սենյակներ:

Թեև Քննչական կոմիտեի կազմում երեխաների համար նպաստավոր տարածքների ուղղությամբ որոշակի առաջընթաց առկա է, դեռևս կան դժվարություններ՝ կապված դրանց հասանելիության և կիրառման հետ, հատկապես Երևանից դուրս տարածքներում: Ինչպես ամփոփել է մասնակիցներից մեկը, "ոչ բոլոր քննչական մարմիններն են կահավորված երեխաների հետ աշխատելու սենյակներով" (ԱՈՄ):

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ երեխաների համար նպաստավոր տարածքների թերի օգտագործումը վկայում է քննիչների վերապատրաստումների և երեխաների հարցաքննությունների համար նախատեսված և երեխաների համար նպաստավոր տարածքների կիրառումը թույլատրող հստակ քաղաքականությունների անհրաժեշտության մասին: Բացի այդ՝ անհրաժեշտ են այդ տարածքների և ընթացակարգերի պարբերական գնահատումներ՝ ապահովելու համար, որ դրանք լուծեն իրենց առջև դրված խնդիրները:

Երեխաների հարցաքննության ժամանակ կիրառվող մոտեցումները

ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրքը խիստ կանոններ է սահմանում տուժող և վկա երեխաների հարցաքննության վերաբերյալ: Օրինակ՝ հարցաքննությունները չեն կարող տևել անընդմեջ երկու ժամից ավելի, իսկ օրվա ընթացքում հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել վեց ժամը[46]: Ինչ վերաբերում է քննչական մյուս գործողություններին, երեխայի լավագույն շահերը երաշխավորելուն և ոչ զգայուն հարցաքննությունը կանխելուն օգնելու համար պետք է ներգրավել հոգեբանների[47]: Առկա են նաև դրույթներ պարտադիր տեսագրության մասին, որոնք քննարկվում են սույն բաժնում՝ հաջորդիվ:

Քննիչների վարքը: Որոշ հոգեբաններ դրական են արտահայտվել տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության գործերով զբաղվող քննիչների պրոֆեսիոնալիզմի մասին: Հարցվածներից մեկը նշել է. "Չի եղել որևէ դեպք, երբ քննիչն անցնի իր սահմաններն ու չարաշահի դիրքը: Նրանք աշխատում են օրենքին համապատասխան՝ ապահովելով երեխայի լավագույն շահը" (ԱՕԱ): Մեկ այլ դեպքում երեխաների համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով կատարվել էին հատուկ հարմարեցումներ: Օրինակ՝ "նույնիսկ քննիչն էր փոխվել, նշանակել էին մի կնոջ, և աղջիկների համար ստեղծվել էին ավելի նպաստավոր պայմաններ, որպեսզի վստահությունը ձևավորվի" (ԱՕԱ):

Ի տարբերություն դրա՝ հարցվողներից ոմանք նշել են, որ իրավապահ մարմինների պաշտոնյաների վերաբերմունքը կարող է տարբեր լինել՝ կախված երեխայի տարիքից, հատկապես երբ խոսքը ավելի բարձր տարիքի դեռահասների մասին է: Առաջնային օղակի աշխատողներից մեկը բացատրել է հետևյալ կերպ. "Եթե երեխան, օրինակ, 15 տարեկանից բարձր է, ինչպես նաև չափահասների հետ կապված բոլոր գործերում [...] մենք գիտենք, որ գործընթացը ճիշտ ուղղությամբ չի գնալու: Այսինքն՝ նրա հետ խոսելու են մեղադրական ոճով [նրա վարկածը կասկածի տակ դնելով], նա վստահաբար լավ չի զգալու: Իսկ այն դեպքերում, երեխան ավելի փոքր է, նրանք [իրավապահները] շատ պատրաստակամ են, ըմբռնող և այլն" (ԱՕԱ):

Որոշ մասնակիցներ էլ արտահայտել են այն կարծիքը, որ որոշ քննիչների կողմնակալությունը կարող է ազդել գործի հանդեպ իրենց մոտեցման վրա. "Շատ բան կախված է գործը քննող անձի ներքին համոզմունքից: Եթե նա կարծում է, որ երեխան ստում է, ապա կսկսի անել ամեն ինչ՝ մյուս կողմին օգնելու համար: Եթե նա համոզված է հանցանքը կատարողի մեղավորության մեջ, նա ամեն ինչ կանի՝ դա ապացուցելու համար" (ԱՈՄ): Հարցվողներից մեկն էլ ներկայացրել էր իր կարծիքը, որ Քննչական կոմիտեի օգնող վերաբերմունքն առկա է միայն այն գործերում, երբ "Քննչական կոմիտեն երեխայի կողմից է" (ԱՕԱ):

46. Հայաստան, *Քրեական դատավարության օրենսգիրք*, 2021, 217-3 հոդված:
47. Նույն տեղում, 212 հոդված:

6.2 ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն երեխաները, որոնց քաջությունը բավարարել է իրենց հետ կատարվածի մասին հայտնելու և մասնագետների հետ խոսելու համար, պետք է լսված լինեն, և նրանց պատմությունը պետք է լրջորեն ընդունվի՝ անկախ նրանց տարիքից: Վստահությունը, որ իրենց նկատմամբ զգայուն կլինեն՝ շատ կարևոր քայլ է՝ ապահովելու, որ երեխաներն ու ընտանիքները ցանկանան համագործակցել քննությունների ընթացքում, որը թույլ կտա ավելի արդյունավետ իրականացնել գործերի քննությունը և դեպքերի քրեական հետապնդումը, իսկ արդարադատությունը մատչելի կդառնա բռնության ենթարկվածների համար:

Չափազանց կարևոր է նկատի առնել երեխայի բարեկեցությունը, հուզական վիճակն ու քննության գործընթացին մասնակցելու պատրաստակամությունը: Մասնակիցները նշել են, որ քննության գործընթացում երեխայի հուզական վիճակը հաճախ արտացոլում է բռնության և շահագործման հոգեբանական հետևանքները, և այս համատեքստում հազվադեպ է պատահում, որ երեխաները հստակ և առանց որևէ մեկի օգնության արտահայտեն իրենց վերապրածը: Մասնակիցներից մեկը հիշատակեց մի երեխայի դեպք, որը հրաժարվել էր բռնարարի մասին խոսելուց՝ ասելով. "Եթե չեք ուզում, որ ինքնասպան լինեմ, ինձ մի՛ տարեք այնտեղ" (ԱՕԱ): Ամոթի և քննադատվելու վախը ևս առկա էին: Մասնակիցներից մեկը նշել էր. "Աղջիկն ամաչում էր տեղի ունեցածի համար, անհարմար էր զգում և ուզում էր, որ իր նկատմամբ բռնություն գործադրած անձը պատժվի, բայց նա մի տեսակ մոլորված էր" (ԱՈՄ): Մեկ ուրիշն էլ նշել էր, որ երեխաները "շատ էին վախենում քննադատվելուց, չհասկացվելուց... Նրանք դա դիտավորյալ չէին անում և ուզում էին, որ մենք հասկանանք դա" (ԱՕԱ):

Սա վերահաստատում է արդարադատության գործընթացի յուրաքանչյուր փուլում ֆիզիկական և հոգեբանական առումով ապահով վայրեր ստեղծելու կարևորությունը: Վերը նշված հետազոտական արդյունքները հուշում են այն քայլերը, որ կարող են ձեռնարկվել երեխաների համար առավել ապահով և նպաստավոր գործելակերպ ձևավորելու համար, այդ թվում՝ չբացառել դեռահասներին գործընթացից և նրանց չվերաբերվել որպես չափահասների, լուրջ ընդունել երեխաների ասածները՝ անկախ նրանց տարիքից ու սեռից, ինչպես նաև վերացնել քննիչների կամ դատախազների ընկալումներով պայմանավորված անհետևողականությունը:

> *Եթե երեխան, օրինակ, 15 տարեկանից բարձր է, ինչպես նաև չափահասների հետ կապված բոլոր գործերում [...] մենք գիտենք, որ գործընթացը ճիշտ ուղղությամբ չի գնալու: Այսինքն՝ նրա հետ խոսելու են մեղադրական ոճով [նրա վարկածը կասկածի տակ դնելով], նա վստահաբար լավ չի զգալու: Իսկ այն դեպքերում, երբ երեխան ավելի փոքր է, նրանք [իրավապահները] շատ պատրաստակամ են, ըմբռնող և այլն (ԱՕԱ):*

Պարզաբանում: Վնասակար առերեսումներ

Առերեսումները գործողություններ են, որոնք կիրառվում են Հայաստանի դատավարական իրավունքում և հարցաքննությունների ժամանակ, երբ ներգրավված կողմերի ցուցմունքները հակասում են միմյանց[48]: Որպես քննչական գործողություն՝ երեխաների մասնակցությամբ առերեսումները պետք է իրականացվեն որակավորված հոգեբանի մասնակցությամբ, և պետք է առկա լինեն երեխայի լավագույն շահերը պաշտպանելու գործուն երաշխիքներ, այդ թվում՝ մեղադրյալի հետ ուղիղ շփումը սահմանափակելու հնարավորությունը[49]: Բացի այդ՝ ինչպես սովորական, այնպես էլ խաչաձև հարցաքննությունները կարող են իրականացվել տեխնիկական այնպիսի միջոցների կիրառմամբ, ինչպիսիք են տեսակապի սարքավորումները՝ տուժող երեխաներին պաշտպանելու համար[50]:

Հայաստանում հետազոտությանը մասնակցած անձինք հարցեր են բարձրացրել առերեսման գործընթացի և տուժողների վրա դրա ներգործության մասին: Բռնարարի հետ առերեսումներին որոշ երեխաների արձագանքը կարող է այն աստիճանի բուռն լինել, որ նրանք կարող են "քարանալ": Մասնագետներից մեկը պատմել էր մի աղջկա մասին, որը "որևէ հույզ չէր դրսևորում, լաց չէր լինում, ամեն ինչ պահում էր ներսում" (ԱՕԱ): Նույն կերպ, որոշ երեխաներ առերեսումների ժամանակ ունենում են սթրեսի ֆիզիկական ախտանշաններ, և, ինչպես հարցվածներից մեկն է նշել՝ "Այդ տղան հիստերիայի մեջ էր ընկնում, հրում էր մորը, բղավում՝ "*Արի՛ դուրս գանք այստեղից*"" (ԱՕԱ):

Անգամ որոշ պաշտպանական մեխանիզմների՝ հոգեբանի ներկայության և տեսակապի հնարավորության պարագայում առերեսման ժամանակ կրկնակի տրավմայի ենթարկումը շարունակում է մտահոգության առարկա մնալ առաջնային օղակի որոշ աշխատողների համար. "Եթե երեխան այս փուլին արդեն հասել է իր զգացումները վերահսկելով, ապա նման մեկ հանդիպումը կարող է վերստին բռնկել ուժգին հույզերը" (ԱՕԱ): Դատական հոգեբաններից մեկը պարզաբանել է այն մոտեցումը, որ նա կիրառել էր երեխային պաշտպանելու համար. "Առերեսվող երկու անձանցից բացի՝ մի քանի այլ անձինք ևս մասնակցում են հարցաքննության գործընթացին՝ հանդես գալով որպես պատնեշ երկուսի միջև: Օրինակ՝ աղջիկը նստում է այլ մասնակիցների կողքին, որոնք տեղավորված են իր և մեղադրյալի միջև, ինչը ձևավորում է ֆիզիկական և հոգեբանական պատնեշ" (ԱՕԱ):

Չնայած նկարագրված մոտեցման բարի մտադրությանը՝ այն շարունակում է մտահոգիչ լինել: Երեխան և մեղադրյալը գտնվում են միևնույն սենյակում, ինչը կարող է խորապես սթրեսային լինել երեխայի համար՝ անկախ նրանից, թե քանի մարդ է գտնվում իր և բռնարարի միջև: Սա ընդգծում է այն պահանջը, որ նման գործողությունների ժամանակ կիրառվեն իրավաբանորեն թույլատրելի այնպիսի գործիքներ (նպատակահարմարության դեպքում), ինչպիսին է տեսակապը, և երեխայի հուզական անվտանգությունն ապահովելու համար վերապատրաստված հոգեբանի կողմից բոլոր հարցերի համակարգված զտումը : Առերեսումների ժամանակ երեխաների համար առավել ապահով միջավայրի ստեղծմանը կարող է օգնել նաև օրենսդրության փոփոխությունը՝ սահմանելու պաշտպանիչ այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են անկողմնակալ միջնորդները: Ըստ էության՝ տուժող երեխաների և ենթադրյալ բռնարարների միջև ֆիզիկական առերեսումներն արգելող հստակ իրավական դրույթների բացակայությունը պաշտպանությանն առնչվող բացեր է առաջացնում: Նման երաշխիքների սահմանումը կօգներ ապահովելու, որ արդարադատության գործընթացները լինեն միանգամայն երեխայակենտրոն և տրավմայի հետ կապված տեղեկությունների վրա հիմնված/տրավման հաշվի առնող:

48. Հայաստան, *Քրեական դատավարության օրենսգիրք*, 2021, 224 հոդված:
49. Նույն տեղում, 212 հոդված:
50. Նույն տեղում, 214-6 հոդված:

6.2 ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտադիր տեսագրությունները. Քննության գործընթացի մեկ այլ բաղադրիչ, որը վերհանվել է հարցազրույցների ժամանակ, տեսագրությունների կիրառումն է: 2022 թվականից այն պարտադիր է դարձել քննչական բոլոր գործողությունների՝ ներառյալ երեխաների հարցաքննությունների համար, որոնք պետք է տեսագրվեն և ձայնագրվեն[51]: Պարտադիր տեսաձայնագրումից հրաժարվելը նախատեսված չէ, քանի որ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված միակ բացառությունը օբյեկտիվ անհնարինությունն է կամ անկանխատեսելի տեխնիկական անսարքությունը: Տեսաձայնագրման ընդհատման պարագայում քննչական գործողությունը դադարեցվում է մինչև տեսաձայնագրման ընթացքի վերսկսումը[52]:

Քննչական գործողությունների ժամանակ պարտադիր տեսագրությունների ներդրումը արժանացել է արդարադատության ոլորտի մասնագետների բարձր գնահատականին, քանի որ դրանք ապահովում են բացահայտումները և մեղադրական դատավճիռների կայացումը. «Օգնեց տեսագրությունը, այլապես ոչ ոք չէր հավատա, որ հենց երեխան [տուժողն] է ասել դա» (ԱՈՄ): Գործընթացը նաև օգնում է երեխայակենտրոն արդարադատությանը և սահմանափակում է կրկնակի հարցաքննության դեպքերը. «Հարցաքննություններն արդեն կատարվում են տեսախցիկների առկայությամբ, որը թույլ է տալիս չկրկնել նույն հարցաքննությունը: Այսպես ավելի ապահով ու լավ է (ԱՕԱ):

Այս գործելակերպը դեռևս չի փորձարկվել թվային տեխնոլոգիաների (տեսախցիկներով և ոչ միայն) կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաներին տրավմայի ենթարկելու գործոնները հաշվի առնելու տեսանկյունից: Բռնության այս ձևերին ենթարկված երեխաները կարող են գերզգայուն լինել մեծահասակի կողմից ձայնագրվելու կամ տեսագրվելու հարցում: Որոշ տուժողների համար տեսախցիկների առկայությունը կարող է խոցելիության, շփոթվածության կամ հետագա բացահայտումից վախի զգացողություններ առաջացնել: Այդուհանդերձ, դա կարող է տեղի չունենալ բոլոր երեխաների և երիտասարդների հետ: Հարկավոր են լրացուցիչ հետազոտություններ՝ ապահովելու համար, որ պարտադիր տեսագրությունը համահունչ լինի տրավման հաշվի առնելու սկզբունքներին՝ յուրաքանչյուր դեպքով հավասարակշռելով հավաստի ապացույցներ ունենալու անհրաժեշտությունը և նման բռնության ենթարկվածների հոգեբանական կարիքները:

Հոգեբանների ներգրավվածությունը: Քննչական կոմիտեի կողմից իրականացվող հարցաքննություններին հոգեբանների պարտադիր մասնակցությունը Հայաստանի քրեական արդարադատության համակարգի վերջին զարգացումներից է, որի նպատակն է՝ աջակցել վկա և բռնության ենթարկված երեխաներին: Այս հոգեբաններն անցնում են հատուկ վերապատրաստում և հավաստագրվում են Արդարադատության նախարարության կողմից: Նրանց ներգրավելու նպատակն է ապահովել առավել աջակցող միջավայր, որը կխթանի ճշգրիտ և համակողմանի ցուցմունք տալու՝ երեխայի կարողությունը: Այս մոտեցումը համահունչ է միջազգային լավագույն փորձին, և դրանով ճանաչվում է իրավական գործընթացների ժամանակ փոքրահասակների հոգեկան առողջությունը պահպանելու կարևորությունը: Մասնագետներն ընդգծել են այն կարևոր դերը, որ այդ վերապատրաստված հոգեբանները կարող են կատարել արդարադատության իրականացման ամբողջ գործընթացում, այդ թվում՝ նախքան քննչական գործողությունները կամ դրանց ընթացքում:

Նախապատրաստական աշխատանք և նախնական գնահատում: Ըստ հարցված հոգեբանների՝ իրենց աշխատանքը բռնության ենթարկվածի հետ սկսվում է նույնիսկ մինչև բուն հարցաքննությունը: Նրանք աշխատում են երեխայի հետ՝ գնահատելով նրանց պատրաստակամությունն ու հուզական վիճակը: Սա երեխայակենտրոն արդարադատության կարևոր բաղադրիչ է, մասնավորապես՝ երեխայի լավագույն շահը գնահատելու և երեխաների իրավունքների նկատմամբ հարգանք ապահովելու և մատչելի լեզվով բոլոր ընթացակարգերի մասին տեղեկացնելու տեսանկյունից: Հոգեբաններից մեկը բացատրել է այսպես.

51. Նույն տեղում, 214 հոդված:
52. Նույն տեղում, 214-4 հոդված:

> *Նախքան հարցաքննությունը սկսելը ես աշխատում եմ երեխայի հետ, փորձում եմ հասկանալ, թե որքանով է նա պատրաստ հարցաքննությանը [...], որքանով է նա հասկանում, թե ինչի համար է այդտեղ և կարող է արդյոք հարցաքննության ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկությունը [...] Ես նրան հասկանալի լեզվով բացատրում եմ իր իրավունքներն ու պարտականությունները (ԱՕԱ):*

Ներգրավվածությունը քննչական գործողություններում. Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ հոգեբանները կարող են համագործակցել քննիչի հետ՝ ձևակերպելով ցուցմունք տալու համար հրավիրված երեխային տրվելիք հարցերը[53] և տրամադրել խորհրդատվություն հարցաքննության միջավայրի, տևողության և ձևի վերաբերյալ՝ երեխայի լավագույն շահերը երաշխավորելու համար[54]: Հոգեբանները կարող են նաև առաջարկել, որ մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից երեխային ուղղված ցանկացած հարցի շուրջ կարելի է խորհրդակցել իրենց հետ, որպեսզի դրանք ուղղվեն այնպես, որ կանխվի ուղիղ շփումը կողմերի միջև[55]: Քննիչներն իրավունք ունեն չընդունելու ներկայացված առաջարկները, սակայն ամեն դեպքում դրանք պետք է ներառվեն համապատասխան արձանագրությունում[56]:

Հարցազրույցների ընթացքում պարզվել է, որ այս համագործակցությունը գործնականում տեղի ունենում է: Որոշ դեպքերում դա դրսևորվում է ոստիկանությունում հարցաքննությունների ժամանակ աջակցող դեր ստանձնելով, օրինակ՝ ապահովելով, որ անհրաժեշտության դեպքում ընդմիջումներ արվեն. "Այս գործընթացում մեր ընդմիջումները [դադարները] շատ կարևոր են... որպեսզի երեխան հնարավորության սահմաններում չհայտնվի իր համար խորթ միջավայրում և կարողանա հանգիստ և ազատ շարադրել պատմությունը՝ առանց սխալ հասկացվելու կամ քննադատվելու մտավախության" (ԱՕԱ):

Քննիչների թույլտվությամբ հոգեբանները երբեմն կարող են վարել երեխայի հարցաքննությունը, օրինակ՝ երեխայի նկատմամբ սեռական ոտնձգության կամ շատ փոքր տարիքի երեխաների հետ կապված բարդ դեպքերում: Թեև Քրեական դատավարության օրենսգիրքը հատուկ չի շեշտում սրա մասին, մասնակիցներից մի քանիսը հաստատել են, որ Հայաստանում դա կիրառվում է: Ինչպես նշել է մասնակիցներից մեկը. "Ամենաբարդ դեպքերում, օրինակ՝ սեռական ոտնձգության դեպքում, նրանք հարցաքննության գործը թողնում են ինձ: Փոքրահասակ երեխաների դեպքում նույնպես նրանք հարցաքննությունը թողնում են հոգեբանին" (ԱՕԱ): Արդարադատության ոլորտի մասնագետները հաստատել են, որ հարցաքննությունների ժամանակ տրվելիք հարցերը վերանայելուց զատ հոգեբանները կարող են վարել հարցաքննությունը, երբ դա նպատակահարմար է:

Մասնակիցները նշել են հարցաքննությունից առաջ և դրա ընթացքում չքննադատող և վստահության վրա հիմնված հարաբերություններ հաստատելու կարևորությունը: "Մենք պետք է ստեղծենք այնպիսի մթնոլորտ, որպեսզի երեխան վստահի մեզ և պատմի եղելությունը... Չափազանց կարևոր է չքննադատող և հոգեբանորեն ապահով միջավայր ձևավորելը" (ԱՕԱ): Մասնագետների փորձը ցույց է տալիս, որ վստահության ձևավորումը հաճախ փոխակերպում է երեխայի՝ համագործակցելու պատրաստակամությունը. "Երբ վստահությունն ու շփումն արդեն ձևավորված են, երեխաներն իրենք են ուզում շփվել մեզ հետ, զրուցել: Նրանք բացվում են և սկսում օգնել ամբողջ գործընթացին, ինչը թույլ է տալիս ավելի արագ առաջ ընթանալ" (ԱՕԱ):

Ընթացակարգերի տևողությունը և ձգձգումները

Երեխաների մասնակցությամբ քննչական գործողությունների տևողությունը և արագությունը խիստ տարբեր են: Որոշ դեպքերում մասնագետները նշել են, որ քննիչները արագ են գործել: Օրինակ՝ մասնակիցներից մեկը նշել է, որ գործը հարցաքննությունից մինչև դատարան ուղարկելը տևել է ընդամենը հինգ օր. "Արդեն իսկ հինգերորդ օրը այդ տղաներին մեղադրանք առաջադրվեց, և գործն ուղարկվեց դատարան" (ԱՕԱ): Հարցվածներից

53. Նույն տեղում, 212-4 հոդված:
54. Նույն տեղում, 212-3 հոդված:
55. Նույն տեղում, 212-5 հոդված:
56. Նույն տեղում, 212-2 հոդված:

մեկ ուրիշն էլ նշել է հետևյալը. "Մենք գործը քննել ենք շատ արագ: Իհարկե, ապացույցների հավաքման գործընթացն ամիսներ տևեց, քանի որ ընթացքը չափազանց հետաքրքրական ու բարդ էր, բայց մենք շատ լավ ապացույցներ ունեինք, և գործը շատ արագ ուղարկվեց դատարան" (ԱՈՄ):

Այդուհանդերձ, ձգձգումները նույնպես հաճախ են լինում, երբեմն՝ պայմանավորված երկարաձգվող փորձաքննություններով և քննչական գործողությունները կրկնելու անհրաժեշտությամբ. "Մենք ունենք բազմաթիվ դեպքեր, որոնք դեռևս ընթացքի մեջ են մինչդատական մարմինների կողմից: Նախաքննության փուլում, երբ առկա է փորձաքննություն նշանակելու որոշում, դրանք տևում են ամիսներ կամ, մինչև անգամ, տարիներ: Փորձաքննությունների հետ կապված խնդիրներ, իհարկե, կան" (ԱՈՄ): Ըստ արդարադատության ոլորտի մասնագետների՝ քննության համար ժամկետների բացակայությունը է՛լ ավելի է նպաստում այդ ձգձգումներին:

Երեխաներին հաճախ հրավիրում են մասնակցելու կրկնվող գործողությունների, ասենք՝ հարցաքննությունների, առերեսումների և պարզաբանումների, ինչը կարող է հանգեցնել հավելյալ հուզական լարման: Մասնակիցներից մեկը նշել է, որ Հայաստանում "անձը, այդ թվում՝ երեխան, կրկին ու կրկին հրավիրվում է միևնույն գործողությանը: Այսինքն, եթե բռնությունը գործադրած անձը հարցաքննության ժամանակ ուրիշ բան է ասում, նրանք երեխային [բռնության ենթարկվածին] նորից հրավիրում են դա նրա հետ պարզելու" (ԱՕԱ): Առաջնային օղակի աշխատողներից մեկի կարծիքով, չնայած հարցաքննությունների թիվը նվազագույնի հասցնելուն ուղղված ջանքերին, ապացույցներին կրկին անդրադառնալու կամ ցուցմունքները հստակեցնելու անհրաժեշտությունը կարող է երեխաներին ստիպել մասնակցել հինգ կամ ավելի հարցաքննության:

Դատավարական գործողություններին տուժողների կրկնակի ներգրավումը կարող է ազդել մասնակցելու նրանց պատրաստակամության վրա:

> *Մարդիկ, որոնք հաղորդում են տվել պահանջով, որ քրեական գործ հարուցվի, և արդարադատություն իրականացվի, այլևս ի վիճակի չեն լինում շարունակելու պայքարը: Նրանց վճռականությունը վերանում է, ցանկությունը՝ նույնպես: Մենք երբեմն առնչվում ենք իրավիճակների, երբ տուժողը զղջում է, որ բողոք է ներկայացրել (ԱՈՄ):*

Ձգձգումներն ու կրկնվող գործողությունները կարող են բարդացնել արդարադատության գործընթացը և մեծացնել տուժած երեխաների և նրանց ընտանիքների հուզական բեռը: Հնարավոր բոլոր դեպքերում գործընթացն արագացնելը նվազեցնում է բեռը և օգնում երեխաներին՝ արդարադատության գործընթացում նրանց ներգրավված մնալու համար:

6.3 ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Նախևառաջ հարկ է նշել, որ դատական լսումների ժամանակ դատավարական երաշխիքներն ավելի թույլ են, քան քննչական փուլում, ինչը կարող է գործում ներգրավված երեխաների համար անհարմարություն ստեղծել և սթրես պատճառել: Թեև օրենքը թույլ է տալիս հոգեբանի մասնակցությունը դատարանում երեխայի հարցաքննությանը, սա ինքնաբերաբար չի կիրառվում, այլ պետք է նախ պահանջվի կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ[57]: Հայաստանում երեխան չպետք է հարցաքննվի, եթե հոգեբանը խորհուրդ չի տալիս անել դա՝ երեխայի իրավաչափ շահերը պաշտպանելու նկատառումներով: Այդուհանդերձ, դա թույլատրվում է միայն այն դեպքում, երբ պաշտպանության կողմը մինչդատական վարույթում արդեն իսկ հնարավորություն է ունեցել հարցեր տալու երեխային[58]: Հետևաբար հարկավոր են դատահիրավական բարեփոխումներ՝ ապահովելու համար լսումների պայմանների առավել երեխայակենտրոն բնույթը:

Չնայած այս ամենին՝ հարցված մասնագետները խոսել են նաև Հայաստանում դատական վարույթի ընթացքում երեխաների համար նպաստավոր մի շարք բաղադրիչների մասին, որոնք նպատակ ունեն նվազեցնելու բռնության ենթարկված երեխաներին պատճառվող սթրեսն ու տրավման: Հոգեբանները կարևոր դերակատարություն ունեն դատարանին խորհրդատվություն տրամադրելու գործում, թե արդյոք նպատակահարմար է, որ երեխան դատական նիստերի դահլիճում կամ այլ վայրում, օրինակ՝ առանձնասենյակում, ցուցմունք տա: Ինչպես նշել է հարցվողներից մեկը, "Նախքան հարցաքննությունը հոգեբանը խոսում է երեխայի հետ, ապա դատարանին խորհուրդ է տալիս, թե որտեղ պետք է երեխան ցուցմունք տա՝ դատական նիստերի դահլիճո՞ւմ, թե՞ առավել նպատակահարմար է այլընտրանքային տարբերակը, և պետք է հիմնավորի իր առաջարկը: Ներկայիս օրենքը թույլ է տալիս նման ճկունություն" (ԱՈՄ):

Այն դեպքերում, երբ երեխան ի վիճակի չէ առերես ցուցմունք տալու, դատարանը կարող է օգտագործել նախապես տեսաձայնագրված ցուցմունքները: Այս որոշումը հաճախ հիմնված է լինում հոգեբանի մասնագիտական կարծիքի վրա: Օրինակ՝ հարցվածներից մեկը նշել է. "Մեր օրենսգիրքը տեսաձայնագրումից օգտվել թույլ տալիս է մի շարք դեպքերում: Եթե դեպքը վերաբերում է անչափահաս վկային, ապա դա կարող է իրականացվել [...], եթե, ասենք, հոգեբանը ներգրավվում է և հայտնում, որ հնարավոր չէ հարցաքննել [երեխային], այդ դեպքում ես դիտում եմ տեսաձայնագրությունը" (ԱՈՄ): Եթե հոգեբանը նպատակահարմար է գտնում, որ երեխան ցուցմունք տա, ապա դատարանը հետևում է նրա խորհրդին:

Գոյություն ունի մեկ այլ ընթացակարգ, այն է՝ երեխայի ցուցմունքի դեպոնացումը, որը կոչված է նվազագույնի հասցնելու երեխայի մասնակցությունը դատավարությանը: Դա ներառում է քննության փուլում երեխայի տված ցուցմունքի տեսաձայնագրությունը, որի ժամանկ ներգրավված բոլոր կողմերը՝ ներառյալ դատավորը, փաստաբանը և քննիչը, ներկա են հարցեր ուղղելու համար. "Եթե դեպոնացումն իրականացվում է, այսինքն՝ նույն փաստաբանը, քննիչը, ներկայացուցիչները և այլք ներկայանում են դատարան, դատավորը մեկտեղում է բոլոր այն հարցերը, որոնք կարող են հարկավոր լինել պատշաճ որոշում կայացնելու համար: Այս ամենը տեսաձայնագրվում է և կցվում քրեական գործին, ուստի անձը [երեխան] կարող է այլևս չմասնակցել դատական նիստերին" (ԱՈՄ):

Բացառիկ դեպքերում, երբ երեխան հոսպիտալացվել է և չի կարողացել մասնակցել դատական նիստերին, դատարանը հաշվի է առնում նախաքննության փուլում ձեռք բերված ապացույցները (ԱՈՄ): Այս միջոցառումներն ընդգծում են դատական գործընթացները տուժող երեխաների յուրահատուկ կարիքներին համապատասխանեցնելու կարևորությունը՝ ապահովելով նրանց բարօրությունը և, միաժամանակ, արդարադատության գործընթացի ամբողջականությունը:

57. Նույն տեղում, 329-2 հոդված:
58. Նույն տեղում, 329-3 հոդված:

Այս խոստումնալից գործելակերպից բացի՝ մասնակիցները նաև մատնանշել են դատական վարույթի ընթացքում բարելավման ենթակա որոշ ուղղություններ, որոնք նկարագրված են ստորև:

Գործերը դատավորներին մակագրելը և մասնագիտացված վերապատրաստումները

Ըստ մասնագետների՝ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերն ինքնաշխատ եղանակով բաշխվում են ըստ դատավորների ծանրաբեռնվածության և ոչ թե մակագրվում են մասնագիտացած դատավորներին: Մասնակիցներից մեկն ընդգծել է դատական նիստի ընթացքում մասնակիցների վերապրած հոգեբանական անհարմարությունը, ինչպես նաև փոփոխությունների անհրաժեշտությունը.

> *Դատավորն ինքը անհարմար էր զգում: Նույնիսկ մեղադրյալի պաշտպանը որևէ հարց չուղղեց, որ աղջիկը նորից չհուզվի: Այս գործի պարագայում, կարծում եմ, դատավորը պետք է կին լիներ: Աղջկա համար ավելի հարմար է կնոջ հետ խոսելը: Աղջկա համար ավելի հեշտ է խոսել կնոջ հետ: Ամաչելու, նյարդայնանալու գործոնը միշտ կա: Աղջիկը բռնության էր ենթարկվել տղամարդու կողմից, և հիմա էլ բազմաթիվ տղամարդիկ հավաքվել են այդտեղ. դա նրան հոգեբանական ճնշման է ենթարկում (ԱՈՄ):*

Այս ցուցմունքն ընդգծում է ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնելու կարևորությունը, որպեսզի մասնագետները կարողանան բռնության ենթարկված կամ վկա երեխաների նկատմամբ զգայուն լինել: Այս առումով, "Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին" օրենքի նախագիծը[59] սահմանում է, որ դատավարության ընթացքում երեխաներին առնչվող բոլոր մասնագետները՝ ներառյալ դատավորները, դատախազները, քննիչները, փաստաբաններն ու այլ մասնագետները, պետք է հատուկ վերապատրաստում անցնեն: Այդ վերապատրաստման բովանդակությունը և համապատասխան ընթացակարգերը որոշում է ՀՀ Կառավարությունը[60]: Այս օրենքի ընդունումը և դրա արդյունավետ իրականացումը կարևորագույն քայլ կլինի, որպեսզի բռնության ենթարկված և վկա երեխաների հետ աշխատանքում արդարադատության ոլորտի մասնագետները ցուցաբերեն տրավմայի և գենդերային հարցերում և երեխայի նկատմամբ զգայուն վերաբերմունք:

Հոգեբանական վնասի վերաբերյալ տվյալների սահմանափակ կիրառումը

Մասնագետների կարծիքով երեխաներին վերաբերող գործերում հոգեբանական փորձաքննության եզրակացությունները սովորաբար սահմանափակ բնույթ ունեն և նախևառաջ նպատակ ունեն գնահատելու, թե երեխան որքանով է ի վիճակի տալու ճշգրիտ և հավաստի ցուցմունք՝ հաճախ հաստատելով իրենց տարիքը, իրադարձությունները ճշտորեն պատմելու պատրաստակամությունը, և չեն գնահատում բռնության հոգեբանական ազդեցությունը: Մասնակիցներից մեկի խոսքով.

> *Հոգեբանական փորձաքննություն նշանակվում է երեխաներին առնչվող գործերով, և ըստ էության, հարցերն այնպիսի բնույթի են, որ երեխան կարողանա ճիշտ ցուցմունք տալ, ասենք՝ իր տարիքի մասին, և որպեսզի հնարավորություն չունենա գործի դնելու իր երևակայությունը [չչափազանցնի իրադարձությունները], ընդամենը այդքանը: Նրանք չեն անդրադառնում այն հարցին, թե երեխան տվյալ դեպքից հետո հոգեբանական տրավմայի ենթարկվել է արդյոք: Այսինքն՝ հոգեբանները տրավմայի հետ կապված հարցեր չեն ուղղում (ԱՈՄ):*

59. Սույն զեկույցը խմբագրելու պահի դրությամբ՝ օրենքի նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025թ.-ի հոկտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2025թ.-ի նոյեմբերի 29-ին:
60. Հայաստան, *Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին օրենքի նախագիծ*, 2022, 29 հոդված: Հիշատակված դրույթը տեղ չի գտել ընդունված օրենքում, որի 15-րդ հոդվածի 3-րդ մասը անդրադառնում է երեխայի մասնակցությամբ վարույթի շրջանակներում մասնագետների վերապատրաստված լինելու պահանջին:

Հարցվողներից մեկ ուրիշն էլ ընդգծել էր տրավմայի վրա կենտրոնացած գնահատումների բացակայությունը. "Մենք չունենք տրավմայի հոգեբանական քննության պրակտիկա: Այսինքն՝ մենք միայն փորձում ենք պարզել, թե երեխան որքանով է հասկանում, թե ինչ է կատարվել իր հետ, ահա և ամբողջը: Հոգեբանը չի կարող ասել. *"Այո՛, երեխան ենթարկվել է սեռական ոտնձգության"*: Սակայն գոյություն ունեն հետտրավմատիկ սթրեսի ախտանշաններ, որոնք կարող են օգնել՝ հաստատելու փաստերը [հուշել բռնության մասին]" (ԱՕԱ):

Այս մոտեցմամբ առաջնահերթությունը տրվում է երեխայի ցուցմունքի իրավական օգտակարությանը, ոչ թե երեխայի հոգեբանական բարօրությանը: Դա վկայում է գործունեության ընթացքում տրավմային ուշադրություն չդարձնելու մասին, քանի որ երեխայի հոգեկան առողջության և հուզական բնույթի կարիքները հավուր պատշաճի չեն գնահատվում այդ փորձաքննությունների ընթացքում: Երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի շրջանակներում հոգեբանական գնահատումների սահմանափակ ծավալը կարող է բացասաբար անդրադառնալ արդարադատության գործընթացի վրա, քանի որ այն դատարանին թույլ չի տալիս լիովին պատկերացում կազմել երեխային պատճառված մնասի մասին: Հոգեբանական տրավման կարող է բռնության կարևորագույն ցուցիչ լինել, հատկապես, երբ իրեղեն ապացույցներ չկան, կամ դրանք համոզիչ չեն: Սա կարող է հատկապես վերաբերել այն դեպքերին, երբ սեռական բռնությունն ու շահագործումը տեղի են ունեցել բացառապես առցանց: Եթե տրավման վերհանված և արձանագրված չէ, ապա համակարգը գուցեև չկարողանա առաջարկել կամ պահանջել պատշաճ թերապևտիկ միջամտություններ երեխայի համար՝ նրան թողնելով առանց անհրաժեշտ վերականգնողական օգնության կամ ենթարկելով հավելյալ մնասի ռիսկի: Բացի այդ, երբ բռնության հոգեբանական հետևանքներն անտեսվում են, բռնության ենթարկվածին պատճառված մնասը կարող է թերագնահատվել, ինչն էլ կարող է ազդել դատավարության վերջնարդյունքի վրա:

Ստանդարտներ ապացույցների վերաբերյալ

Քրեական դատավարության օրենսգիրքը տալիս է իրեղեն ապացույցների ընդհանուր սահմանումը, այն է՝ ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատելու միջոց լինել[61]: Այս բաց ձևակերպումը, թերևս, ներառում է թվային բնույթի ապացույցները, ինչպիսիք են երեխայի սեռական բռնության վերաբերյալ նյութերը, հատկապես հաշվի առնելով, որ Քրեական դատավարության օրենսգիրքը թույլատրում է թվային խուզարկությունը՝ էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների որոնումը[62]: Այս ընթացակարգի համաձայն՝ տվյալները պատճենվում են այլ կրիչի վրա՝ ապահովելով այդ տվյալների պատճենների ամբողջականությունը՝ պահպանելով դրանց ապացուցողական նշանակությունը[63]: Թվային որոնումների համար պահանջվում է դատարանի կողմից նախապես տրված թույլտվությունը՝ ապահովելով դատական հսկողությունը քննչական այս գործողությունների նկատմամբ[64]:

Թեև սրանից հետևում է, որ թվային ապացույցները, սկզբունքորեն, ընդունելի են Հայաստանի օրենսդրությամբ, Քրեական դատավարության օրենսգրքում հստակ սահմանված չէ, թե երեխայի նկատմամբ սեռական բռնության մասին նյութերը որքանով բավարար կլինեն դատավարության ընթացքում, սահմանված չեն նաև հատուկ ընթացակարգեր թվային ապացույցների գործածման վերաբերյալ: Կարևոր այնպիսի հարցերի վերաբերյալ դրույթների բացակայությունը, ինչպիսիք են ապացույցների ժամանակագրական շղթան և պահպանման ստանդարտները, ապացույցների հասանելիության նկատմամբ հսկողությունը, ռիսկի են ենթարկում թվային ապացույցների ամբողջականությունն ու ընդունելիությունը: Սա հատկապես վերաբերում է տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերին, երբ թվային նյութերը կարող են կարևորագույն նշանակություն ունենալ հանցանքն ապացուցելու գործում: Առանց հստակ գործընթացների այնպիսի սխալները, ինչպիսին է ապացուցողական նշանակություն ունեցող տվյալների ոչ պատշաճ պահպանումը կամ կորուստը, կարող

61. Նույն տեղում, 94-1 հոդված:
62. Նույն տեղում, 236-1 հոդված:
63. Նույն տեղում, 236-2 հոդված:
64. Նույն տեղում, 209-4 հոդված:

են ոչ միայն թուլացնել քրեական հետապնդումը, այլև ավելացնել հանցանքից տուժած երեխաներին կրկնակի տրավմայի ենթարկելու ռիսկը, հատկապես, երբ զգայուն բովանդակությամբ նյութերը շրջանառվում են դատական վարույթից բխող անհրաժեշտ չափից ավելի:

Էլեկտրոնային ապացույցները կարգավորող կանոններից բացի՝ տվյալների պահեստավորման վերաբերյալ դրույթները կարևորագույն նշանակություն ունեն իրավապահ մարմինների կողմից արդյունավետ քննության իրականացումն ապահովելու համար: Այնուամենայնիվ, հայաստանյան օրենսդրությունում սահմանված չէ ծառայություն մատուցողների և առցանց հարթակների համար՝ օգտատերերի տվյալների պահեստավորման որևէ իրավական պարտավորություն: Նման կարգավորման բացակայության պայմաններում առկա է կարևոր թվային հետքի վերացման ռիսկ՝ նախքան իրավապահ մարմինների կողմից դրանց օգտագործումը, որի հետևանքով թուլանում են բռնարարների նկատմամբ արդարադատության իրականացմանն ուղղված ջանքերը: 2015 թվականի նոյեմբերին Քննչական կոմիտեն փոխըմբռնման հուշագիր է ստորագրել համացանցային ծառայություն մատուցողների, այդ թվում՝ Team Telecom-ի, Ucom-ի և VivaCell-MTS-ի հետ՝ դատախազների և ծառայություն մատուցողների միջև տեղեկատվության առավել արդյունավետ փոխանակումը խթանելու, ինչպես նաև տվյալների ժամանակավոր պահեստավորման քաղաքականություն ձևավորելու նպատակով[65]: Չնայած այս դրական քայլին՝ հարկավոր է ունենալ տվյալների պահեստավորման համապարփակ իրավական կարգավորումներ:

Անհարկի ձգձգումներից խուսափելը

Հետազոտության մասնակիցների կարծիքով սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների վերաբերյալ դեպքերը հաճախ բախվում են երկարատև դատական ժամկետների խնդրին, որը նշանակալի հուզական և հոգեբանական հետք է թողնում տուժողների վրա: Սոցիալական աշխատողներից մեկը հիշատակել է 22-ամյա մի աղջկա դեպք, որը բռնության ենթարկվելու պահին եղել է 16 տարեկան: 2024 թվականի հունիսի դրությամբ նրա վերաբերյալ գործը դեռևս ընթացքի մեջ էր, և նա շարունակում էր մասնակցել դատական նիստերի: Որոշ դեպքերում գործընթացներն այնքան երկար են տևում, որ "վաղեմության ժամկետները սպառվում են" (ԱՕԱ):

Վաղեմության ժամկետը այն ժամանակահատվածն է, որից հետո քրեական հանցանքի կապակցությամբ իրավական քայլեր այլևս չեն կարող ձեռնարկվել: Հայաստանում այդ ժամկետը տատանվում է 5-20 տարվա միջակայքում՝ կախված հանցագործության ծանրությունից[66]: Երեխայի նկատմամբ սեռական բռնության հետ կապված հանցագործությունների դեպքում այս ժամկետը հաշվարկվում է հանցագործության կատարմանը հաջորդող օրվանից[67]: Սակայն այլ հանցագործությունների դեպքում, օրինակ՝ առցանց գրումինգը, պոռնկագրական նյութեր ցուցադրելը, "սեքսուալ բնույթի զրույցը" և սեռական բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ և շանտաժի միջոցով երեխային սեռական բնույթի գործողությունների հարկադրելը, վաղեմության ժամկետը սկսվում է միայն երեխայի 18 տարին լրանալուց հետո[68]: Սա նշանակում է, որ շահագործման և բռնության այս ձևերին ենթարկված երեխային ավելի երկար ժամանակ է տրամադրվում, որպեսզի նա պատմի տեղի ունեցածի մասին և արդարադատություն պահանջի չափահաս դառնալուց հետո: Այնուամենայնիվ, հաշվի առնելով դեպքի մասին հայտնելու և հաղորդում տալու հետ կապված խոչընդոտները, որոնց մասին խոսվում է զեկույցում, երեխայի սեռական շահագործման և բռնության (տեխնոլոգիաների կիրառմամբ) հետ կապված հանցագործությունների մասով վաղեմության ժամկետների առկայությունն արդեն իսկ կարող է բռնարարներին թույլ տալ խուսափել պատասխանատվությունից:

Հուսահատության և սթրեսի զգացողություններ առաջացնելուց բացի՝ այս ձգձգումները բացասաբար են անդրադառնում ապացույցների որակի վրա և կարող են թուլացնել տուժողի դիրքերը գործի ընթացքում. "Մեր ապացուցողական բազան արդեն իսկ նվազում է: Որովհետև աղջիկը մեկ անգամ ցուցմունք է տվել առաջին ատյանի դատարանում: Ապա գործն ուղարկվել է վերաքննիչ դատարան:

65. Եվրոպայի խորհուրդ, "Armenia: Status regarding Budapest Convention" (Հայաստան. Բուդապեշտի կոնվենցիայի կատարման ներկայիս վիճակը), ամսաթիվ նշված չէ (կայքէջ մուտքը՝ 26 սեպտեմբերի, 2025 թ.):
66. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 83-1 հոդված:
67. Նույն տեղում, 83-2 հոդված:
68. Նույն տեղում, 83-11 հոդված:

Վերադարձվել է առաջին ատյանի դատարան: Նրա [հանցանքը կատարած անձի] նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Անցել են տարիներ: Իսկ հիմա աղջկան նորից կանչում են դատարան այս գործով" (ԱՈՄ):

Արդարադատության համակարգի հետ այս տևական առնչությունը ոչ միայն թուլացնում է ապացույցների նշանակությունը (օրինակ, երբ տուժողները ստիպված են լինում լրացուցիչ ցուցմունք տալ գործի հարուցումից տարիներ անց), այլև խաթարում է երեխայակենտրոն արդարադատության սկզբունքները:

Գաղտնիությունը

Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանում վարույթը դռնբաց է, բացառությամբ որոշ դեպքերի[69]: Այդուհանդերձ, դատարանը իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ իրավասու է սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում որոշում կայացնելու դատական նիստը դռնփակ անցկացնելու մասին՝ մասնակիցների մասնավոր կյանքի գաղտնիությունը կամ երեխայի լավագույն շահն ապահովելու նպատակով[70]: Թեև այս հայեցողությունը կարող է տարածվել (տեխնոլոգիաների կիրառմամբ) երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի վրա, օրենքը նման դեպքերում դռնփակ վարույթ պահանջելու մասին դրույթ չի պարունակում: Միակ դեպքը, երբ վարույթը պետք է անցկացվի դռնփակ, այն է, երբ հանցանքի կատարման մեջ մեղադրվողը երեխա է[71]: Դռնփակ վարույթի մանրամասները չպետք է հրապարակվեն դատական տեղեկատվական ԴատաԼեքս (DataLex) բաց համակարգում:

Մասնագետներն անդրադարձել են այն հարցին, թե գաղտնիության պահպանման պահանջների կատարումը ինչպես է հաճախ կախված լինում առանձին անձանց հայեցողությունից: Օրինակ՝ դատավորներից մեկը նշել էր, որ փորձում է դատական նիստերը պլանավորել դպրոցական դասաժամերից հետո, որպեսզի երեխան հետ չմնա դասերից, և դպրոցական հանրույթը չտեղեկանա վարույթի մասին: Նման ջանքերն անձնական նախաձեռնություններ են, ոչ թե ստանդարտ գործելակարգեր: Ստանդարտացված գործելակերպի հետ կապված այս բացի հետևանքով երեխաները կարող են խոցելի մնալ խարանի կամ հետագա վնասի նկատմամբ, ինչը կարող է խաթարել նրանց անվտանգության զգացողությունն ու վստահությունը արդարադատության գործընթացների նկատմամբ:

Հաշվի առնելով դեպքի մասին հայտնելու և հաղորդում տալու հետ կապված խոչընդոտները, որոնց մասին խոսվում է զեկույցում, երեխայի սեռական շահագործման և բռնության (տեխնոլոգիաների կիրառմամբ) հետ կապված հանցագործությունների մասով վաղեմության ժամկետների առկայությունն արդեն իսկ կարող է բռնարարներին թույլ տալ խուսափել պատասխանատվությունից:

69. Հայաստան, *Քրեական դատավարության օրենսգիրք*, 2021, 28-1 հոդված:
70. Նույն տեղում, 28-3 հոդված:
71. Նույն տեղում, 417-1 հոդված:

6.4 ՀԱՏՈՒՑՈՒՄ

Հայաստանում հանցագործությունից տուժած անձինք իրավունք ունեն հանցանք կատարած անձից պահանջելու իրենց պատճառված վնասի հատուցում[72]: Դրա համար նրանք պետք է հանցանքը կատարած անձի դեմ ներկայացնեն գույքային հայց մինչև նախնական դատալսումների ավարտը[73]: Հայցադիմումում պետք է նշվի պահանջվող գումարի չափը, ինչպես նաև խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի կամ գույքի բռնագանձման մասին[74]: Գույքային հայցը լուծվում է քրեական դատարանի կողմից, և այն կարող է լրիվ կամ մասնակի բավարարվել, մերժվել, կարգավորվել համաձայնությամբ կամ թողնվել առանց լուծման[75]: Եթե տուժողը գույքային հայց չի հարուցում, ապա նա իրավունք ունի այդպիսի հայց հարուցելու քաղաքացիական դատավարության կարգով[76]: Ավելին, եթե հանցագործությունից տուժած երեխան զրկված է իր գույքային շահերը պաշտպանելու հնարավորությունից՝ մեղադրյալից կախվածություն ունենալու կամ այլ պատճառով, դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ եզրափակիչ դատական ակտով լուծելու հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու հարցը[77]:

Հարկ է նշել, որ հատուցման այս ընդհանուր մեխանիզմը ի զորու չէ ամբողջ չափով լուծելու (տեխնոլոգիաների կիրառմամբ) սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների կրած ամբողջ վնասի հատուցման հարցը: Այն նեղ ուղղվածություն ունի և անդրադառնում է անմիջական գույքային վնասին կամ "առողջությունը վերականգնելու համար կատարված ողջամիտ ծախսերին", ինչպիսիք են հավելյալ սնունդը կամ խնամքը[78]՝ անտեսելով այդ բռնության պատճառած առավել ընդգրկուն հոգեբանական, հուզական և տևական վնասը:

Քրեական օրենսգիրքը Կառավարությանը թույլ է տալիս տուգանքների գանձումից գոյացած գումարն օգտագործել հանցագործություններից տուժած անձանց փոխհատուցմանն ուղղված սոցիալական ծրագրերի համար[79]: Արդարադատության ոլորտի մասնագետներից մեկը սրա վերաբերյալ ընդգծել է Կառավարության թիվ 1398 որոշումը, որն ապահովում է այս դրույթի գործնական կիրառումը՝ սահմանելով հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման սկզբունքները, առաջնահերթությունները, փոխհատուցման կարգը և չափը[80]: Որոշման մեջ փոխհատուցման առաջնահերթությունների շարքում թվարկված են սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները, և ենթադրաբար դրանց թվում են նաև տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումն ու բռնությունը, և փոխհատուցման ենթակա վնասների տեսակների շարքում առողջությունը վերականգնելու համար կատարված ողջամիտ ծախսերը նշված են առաջին տեղում[81]: Այդուհանդերձ, տուժողները պետական փոխհատուցումից կարող են օգտվել միայն երբ կա դատարանի վերջնական վճիռ, և այն էլ միայն այն դեպքում, եթե ներկայացնում են տվյալներ այն մասին, որ կատարողական վարույթի շրջանակում պատճառված վնասը փոխհատուցելը հնարավոր չի եղել[82]:

Ի հակադրություն դրա՝ "Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին" օրենքը սահմանում է փոխհատուցման այլընտրանքային եղանակ, որը պայմանավորված չէ դատական վարույթով: Որպես զոհ ճանաչված անձինք կարող են ստանալ միանվագ դրամական փոխհատուցում, որը տրամադրվում է՝ անկախ դատարանի վերջնական որոշումից կամ կատարողական վարույթի ձախողումից՝ դրանով իսկ թրաֆիքինգի և շահագործման զոհերին թույլ տալով ավելի հեշտ եղանակով օգտվել էական աջակցությունից: Փոխհատուցումից բացի՝ նույն օրենքը նախատեսում է նաև վերականգնման

72. Նույն տեղում, 23-3 հոդված:
73. Նույն տեղում, 160-2 հոդված:
74. Նույն տեղում, 160-4 հոդված:
75. Նույն տեղում, 162-1 հոդված:
76. Նույն տեղում, 160-8 հոդված:
77. Նույն տեղում, 163 հոդված:
78. Նույն տեղում, 159 հոդված:
79. Հայաստան, *Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք*, 2022, 59-6, 128-5 հոդվածներ:
80. Հայաստան, ՀՀ Կառավարության 2022 թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1398-Ն որոշում:
81. Նույն տեղում, հավելված, կետ 2:
82. Նույն տեղում, հավելված, կետ 6:

և վերաինտեգրման միջոցառումներ, ինչպիսիք են բժշկական սպասարկումը, կացարանի տրամադրումը և բնաիրային օգնությունը[83]: Այնուամենայնիվ, Հայաստանի օրենսդրությունը հատուկ (տեխնոլոգիաների կիրառմամբ) երեխայի սեռական շահագործումից և բռնությունից տուժած երեխաների համար նախատեսված վերականգնման կամ վերաինտեգրման միջոցառումներ չի պարունակում: Որքան էլ դա նախատեսված չէ նման դեպքերի համար, թրաֆիքինգի մասին օրենքով նախատեսված փոխհատուցման, վերականգնման և վերաինտեգրման մասին դրույթները, ըստ էության, կարող են կիրառվել այն դեպքերում, երբ նման շահագործումը նույնական է թրաֆիքինգի իրավական որակմանը:

Այն երեխաները, որոնց քաջությունը բավարարել է իրենց հետ կատարվածի մասին հայտնելու և մասնագետների հետ խոսելու համար, պետք է լսված լինեն, և նրանց պատմությունը պետք է լրջորեն ընդունվի՝ անկախ նրանց տարիքից: Վստահությունը, որ իրենց նկատմամբ զգայուն կլինեն՝ շատ կարևոր քայլ է՝ ապահովելու, որ երեխաներն ու ընտանիքները ցանկանան համագործակցել քննությունների ընթացքում:

Արդարադատության ոլորտի մասնագետներից մեկի կարծիքով փոխհատուցման այդ մեխանիզմները լայնորեն չեն կիրառվում այնպիսի խոչընդոտների պատճառով, ինչպիսիք են դատավարական բարդությունները, համապատասխան կողմերի իրազեկվածության պակասը և, դրանց հետևանքով, հայցերի բացակայությունը: Օրինակ՝ մյուս մասնակիցներից որևէ մեկը չի կարողացել հիշել որևէ իրավական փաստաթղթի մասին, որը կերաշխավորեր պետության կողմից փոխհատուցում հատկապես սեռական բռնությունից տուժած երեխաների համար: Բացի այդ՝ մասնակիցներից որևէ մեկը չի կարողացել վերհիշել տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների փոխհատուցման թեկուզև մեկ դեպք: Սա հուշում է հատուկ պետական հիմնադրամ ունենալու անհրաժեշտության մասին, որը կկարողանար անմիջական աջակցություն ցուցաբերել սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաներին՝ առանց պահանջելու, որ նրանք անցնեն երկարատև դատական և կատարողական գործընթացներով:

Մասնակիցներից որևէ մեկը չի կարողացել վերհիշել տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների փոխհատուցման թեկուզև մեկ դեպք:

83. Հայաստան, *"Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին" օրենք*, 2014, 22 հոդված:

7. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ և ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ՝ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

7. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ և ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ՝ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դեպքերի գաղտնիության պահպանման և դրանց մասին տեղեկությունների արտահոսքի շուրջ վախը դեռևս լրջագույն խնդիր է Հայաստանի երեխաների և ընտանիքների համար: Իրավիճակը կարող է է՛լ ավելի բարդանալ Հայաստանում երեխաների նկատմամբ սեռական շահագործման և բռնության դեպքերի ոչ ճշգրիտ և մնասակար լրատվական լուսաբանման հետևանքով. մի խնդիր, որի մասին բարձրաձայնել են առաջնային օղակի աշխատողները և արդարադատության ոլորտի մասնագետները: Մասնագետները մատնացույց են արել այն անմիջական և տևական ներգործությունը, որ դա կարող է ունենալ երեխաների, նրանց ընտանիքների և արդարադատության գործընթացի վրա:

Բռնության դեպքերին առնչված երեխաների ինքնության պաշտպանությունը և անանունությունը, ինչպես նաև դատավարության գաղտնիությունը պահպանելը սահմանված են մի շարք միջազգային փաստաթղթերում և ուղենցույցներում[84]: Այդուհանդերձ, մասնագետների գնահատմամբ, Հայաստանի լրատվության և հաղորդակցության բնագավառում երեխաների սեռական շահագործման և բռնության թեմայով լուսաբանման էթիկական ուղեցուցներ չկան, ինչը կարող է խախտել տուժողների մասնավոր կյանքի գաղտնիությունը և կասկածի տակ դնել երեխաների լավագույն շահերը:

Լրատվամիջոցները կարող են նշանակալի դեր կատարել տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության մասին իրազեկվածության բարձրացման գործում, սակայն հարցված մասնագետների կարծիքով լրատվամիջոցների արդյունավետությունը սահմանափակվում է սենսացիաներով և տուժողների հանդեպ մեղադրանքով: Առաջնային օղակի աշխատողներից մեկը մեկնաբանել է այսպես. "Երբ մենք սենսացիոն դեպք ենք ունենում, բոլորը խոսում են դրա մասին, լրագրողները լուսանկարներ են անում, տարածում այդ ամենը... սակայն երբ բանը հասնում է իրենց աշխատանքը կատարելուն, այնքա՜ն դժվար է գտնել պրոֆեսիոնալ անձի, որը կօգնի քեզ՝ երեխային դուրս բերելու այդ իրավիճակից" (ԱՕԱ):

Այս խնդիրը ավելի պատկերավոր ներկայացնելու համար առաջնային օղակի աշխատողներից մեկը նկարագրել է մի դեպք, որի շրջանակում իրենք տեղեկացել էին լայն տարածում ունեցող Telegram ալիքով հրապարակված տեսանյութի մասին, որտեղ առկա էր երեխայի նկատմամբ սեռական բռնության տեսարան. "Այդ տեսանյութում ամեն ինչ երևում էր՝ երեխայի անունը, ամբողջ տեղեկությունը, ամբողջ խոսակցությունը" (ԱՕԱ): Տեսանյութը տեղադրվել էր Հայաստանում հայտնի մի գործչի կողմից՝ երկրում բռնության խնդրի լրջությունը ցույց տալու նպատակով: Առաջնային օղակի աշխատողը հաղորդում էր ներկայացրել իրավապահ մարմիններին: Այնուամենայնիվ, գործը տեղից չէր շարժվել: "Նրանք կանչեցին ինձ և ասացին, որ զբաղվում են այդ հարցով և այլն, և այլն: Սակայն դրանից հետո որևէ քայլ չձեռնարկվեց" (ԱՕԱ): Սա ցույց է տալիս երեխայի և/կամ առցանց տիրույթում նրանց նկատմամբ գործադրված շահագործման և բռնության մասին տվյալներ տարածելու ծանր հետևանքները: Երբ տեղեկությունն արդեն իսկ հրապարակվել է, միշտ չէ, որ հնարավոր է հասնել տուժողի համար արդարադատության, կամ ապահովել, որ երեխային վարկաբեկող տեղեկատվությունը հեռացվի: Շահագործման և բռնության դեպքի մասին լրատվամիջոցներով հայտնելը կարող է կրկնազոհականացման ենթարկել երեխային և միջամտել նրա իրավունքներին, հատկապես, երբ հրապարակված նյութում առկա է անձի ինքնությունը նույնականացնող տեղեկություն:

Առցանց ծանոթության հետևանքով տղամարդկանց կողմից սեռական շահագործման ենթարկված 16-ամյա տղայի ինքնասպանության դեպքը քննարկման առարկա դարձավ հանրային հարթակներում՝ ամբողջ Հայաստանում: Հանցանքը կատարած անձանցից մեկը ևս ինքնասպանություն էր գործել: Ըստ մասնագետների՝ լրատվամիջոցների լուսաբանման հետևանքով հանրության ուշադրությունը երեխայի նկատմամբ գործադրված շահագործումից սկսեց ուղղվել երեխայի հանդեպ մեղադրանքներին: Արդարադատության մասնագետներից մեկի կողմից ստորև նկարագրված հանրային խոսույթը ցույց է տալիս ԼԳԲՏՔԻ+ անձանց և հանրույթների

84. Միավորված ազգերի կազմակերպություն, Standard Minimum Rules for the Administration of Juvenile Justice (“The Beijing Rules”) (Անչափահասների գործերով արդարադատության իրականացման նվազագույն ստանդարտ կանոններ (Պեկինյան կանոններ)), Գլխավոր ասամբլեայի բանաձև 40/33, 29 նոյեմբերի, 1985, Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ, Guidelines for Action on Children in the Criminal Justice System (Քրեական արդարադատության համակարգին առնչվող երեխաների հետ կապված գործողությունների ուղենիշեր), բանաձև թիվ 1997/30, 21 հուլիսի, 1997, Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ, Guidelines on Justice in Matters Involving Child Victims and Witnesses of Crime (Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներ), բանաձև թիվ 2005/20, 22 հուլիսի, 2005, Եվրոպայի խորհուրդ, Convention on Action against Trafficking in Human Beings (Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիա), 2005:

նկատմամբ խտրականությունն ու խարանը: "Դեպքը թեժ քննարկման առարկա էր դարձել, սակայն այն քննարկվում էր ոչ թե երեխային պաշտպանելու դիրքից, թե ինչու էր երեխան գնացել այդ քայլին, այլ հետևյալ տեսանկյունից. *"Լավ է, որ հիմա այդ երկուսն էլ [երեխան և բռնարարը] չկան [մահացել են], դրանցից [գել տղամարդկանցից] ավելի քիչ կուենանք""* (ԱՈՄ):

Մշտական մտահոգության առարկա է տուժողների ինքնության թերի պաշտպանությունը: Հետազոտության մասնակիցների կարծիքով երեխաների անձնական տեղեկությունը պաշտպանված է քննության գաղտնիության շրջանակում: Այդ պատճառով արդարադատության ոլորտի մասնագետներից պահանջվում է զերծ մնալ տուժած երեխայի ինքնությունը բացահայտելուց: Այդուհանդերձ, երեխաների մասին տեղեկությունը այլ ուղիներով (անկախ մասնագետների, ընտանիքի անդամների, հարևանների կամ լրագրողական հետաքննությունների միջոցով) հաճախ սպրդում է լրատվամիջոցներ:

Հետազոտության մասնակիցների կարծիքով լրատվական միջոցները հայտնել են այնպիսի տեղեկություն, որը կարող էր վնասել երեխային, օրինակ՝ անունները կամ ինքնությունը հաստատող այլ մանրամասներ, անկախ նրանից՝ դա արվել է առանց դիտավորության, թե սենսացիոն պատմություն ներկայացնելու նպատակով: Օրինակ՝ արդարադատության ոլորտի մասնագետներից մեկը նշել է. "Լրատվամիջոցը հրապարակում է տեղեկությունը: Չի նշում երեխայի անուն-ազգանունը, սակայն [հայտնում է], որ հարուցվել է քրեական գործ, որը վերաբերում է այս կամ այն դպրոցի աշակերտին" (ԱՈՄ): Մեկ այլ մասնակից էլ նշել էր, որ որոշ լրատվամիջոցներ տարածում են "բոլոր անձնական տվյալները" (ԱՕԱ):

Մասնագետները պատմել են, որ սեռական բռնության ենթարկված երեխաների անձնական տվյալները հրապարակած լրագրողների համար իրավական պատասխանատվություն սահմանված չէ: Դրա հետևանքով երեխաները խոցելի են լրացուցիչ վնասի կամ սոցիալական խարանի նկատմամբ: Թեև կարելի է ասել, որ "Անձնական տվյալների պաշտպանության մասին" օրենքն արգելում է նման վարքագիծը, իսկ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն իրավասու է կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ[85], այնուամենայնիվ, դրա իրականացումը շարունակում է թերի մնալ[86]: Թեև որոշ կազմակերպություններ ունեն վարքագծի կամավոր կանոնագրքեր, դրանց հետևելը պարտադիր չէ: Արդյունավետ իրավական կարգավորումների և կարգավորման ավելի խիստ միջոցառումների բացակայության պայմաններում լրատվամիջոցները կարող են պատասխանատու լրագրության փոխարեն նախապատվությունը տալ սենսացիաներին՝ խախտելով տուժողների մասնավոր կյանքի գաղտնիությունն ու արժանապատվությունը:

Սեփական պատմությունները և ցուցմունքները գաղտնիության պայմաններում ներկայացնելը երեխայակենտրոն արդարադատության անկյունաքարն է: Երեխայի անանունության անտեսումը կարող է իրական վնաս պատճառել տուժողներին և նրանց ընտանիքներին: Դա հատկապես վտանգավոր է՝ հաշվի առնելով ամոթի, տուժողին մեղադրելու և ճնշելու այն միջավայրը, որտեղ երեխաները երբեմն հայտնվում են շահագործման և բռնության մասին հայտնի դառնալու հետևանքով:

> ***Երբ մենք սենսացիոն դեպք ենք ունենում, բոլորը խոսում են դրա մասին, լրագրողները լուսանկարներ են անում, տարածում այդ ամենը... սակայն երբ բանը հասնում է իրենց աշխատանքը կատարելուն, այնքա՜ն դժվար է գտնել պրոֆեսիոնալ անձի, որը կօգնի քեզ՝ երեխային դուրս բերելու այդ իրավիճակից (ԱՕԱ):***

85. Հայաստան, Անձնական տվյալների պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 2015:
86. ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ, առանձնազրույց, 2025 թ.:

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության երևույթի յուրահատկությունների մասին պատկերացում տալու նպատակով, սույն զեկույցը ներկայացրել է տարբեր տեսակետներ, այդ թվում՝ երեխաների ու երիտասարդների, ծնողների, առաջնային օղակի աշխատողների, արդարադատության ոլորտի և իրավապահ մարմինների մասնագետների: Ընդհանուր առմամբ, հավաքված տվյալները վկայում են Հայաստանում սեռական շահագործման և բռնության թեմայի շուրջ առկա չափազանց խիստ խարանի և ամոթի երևույթի մասին՝ ծուղակում հայտնված լինելու զգացումներ առաջացնելով երեխաների մեջ: Այդ երեխաները, որոնց իրավունքներն արդեն իսկ խախտվել են բռնության և շահագործման ենթարկվելու հետևանքով, առերեսվում են հավելյալ զոհականացման՝ մեղադրող վերաբերմունքի հետևանքով, որը բարդացնում է դեպքերի մասին հայտնելու և օգնության դիմելու գործընթացը: Արդյունքում, բռնության բազմաթիվ դեպքեր մնում են ստվերում, և երեխաները չեն օգտվում այն աջակցությունից, արդարադատության մատչելիությունից կամ ապաքինման ու վերականգնման այն գործիքներից, որոնց կարիքն ունեն:

Այդ խարանն ու ամոթը համատարած են և ազդում են երեխայի կյանքի բազմաթիվ կողմերի վրա: Ինչպես ցույց է տալիս այս զեկույցը, համայնքի կողմից խարանը և երեխայի հետագա վախը, որ իր նկատմամբ տեղի ունեցած շահագործումն ու բռնությունը կարող են հայտնի դառնալ, կարող է օգտագործվել հանցանքը կատարած անձանց կողմից՝ երեխաներին զոհականացնելու և նրանց շարունակական բռնության ծուղակում պահելու համար: Համայնքի կողմից դատապարտվելու և ընտանիքի հեղինակության շուրջ մտահոգությունները նույնպես կարող են ազդել ծնողների և դպրոցների արձագանքի, ինչպես նաև պրոֆեսիոնալ օգնության դիմել-չդիմելու որոշման վրա:

Ակնհայտ է շահագործման և բռնության և դրա համար տուժողներին մեղադրելու ծանր հետևանքները երեխաների վրա: Մասնագետները խոսել են այնպիսի դեպքերի մասին, երբ երեխաներն ու ընտանիքները ենթարկվել էին նման ծանր խարանի երեխայի նկատմամբ բռնությունը հայտնի դառնալուց հետո, ինչի հետևանքով նրանք ստիպված էին եղել փոխել բնակության վայրը կամ դպրոցը: Նրանք նաև խոսել են այն մասին, որ երեխաները ենթարկվել են մեկուսացման հասակակիցների կողմից կամ պատժվել են իրենց նկատմամբ գործադրված շահագործման և բռնության մեջ իրենց ունեցած ենթադրյալ դերի համար: Մասնագետներն անդրադարձել են այնպիսի դեպքերի, որոնք հանգեցրել են ինքնասպանության և ինքնավնասման՝ ևս մեկ անգամ ընդգծելով Հայաստանում այս խնդրի լուծման կարևորությունը, ինչպես նաև անգործության հետևանքները:

Թեև այս խնդիրները դեռևս առկա են, Հայաստանը շարունակում է առաջընթացը տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեմ պայքարի ուղղությամբ: Հայաստանի օրենսդրությունը պարունակում է մի շարք երաշխիքներ, որոնք նպատակ ունեն քրեական դատավարության ընթացքում պաշտպանելու երեխաների լավագույն շահերը, օրինակ՝ անվճար իրավական օգնության և թարգմանության իրավունքը, որը երեխաներին թույլ է տալիս իմաստավորված մասնակցություն ունենալ այդ գործընթացներում: Երեխայի մասնավոր կյանքի գաղտնիությունը պահպանելու համար դատարանը կարող է նիստը դռնփակ հայտարարել: Սկսել են արդյունք տալ երեխայակենտրոն արդարադատությանն ուղղված որոշ ջանքեր՝ ներառյալ Բարնահուս մոդելով "Ապահով անկյունների" ստեղծումը և հարցաքննություններին հոգեբանների պարտադիր մասնակցությունը: Մասնագետները դրական են անդրադարձել Քրեական դատավարության օրենսգրքում վերջերս տեղի ունեցած փոփոխություններին, ինչպես նաև "Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին" օրենքի նախագծին[87], որով փորձ է արվում ներդնելու լրացուցիչ բարելավումներ, օրինակ՝ երեխաների մասնակցությամբ վարույթներում ներգրավված արդարադատության ոլորտի մասնագետների պարտադիր վերապատրաստումները:

87. Սույն զեկույցը խմբագրելու պահի դրությամբ՝ օրենքի նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025թ.-ի հոկտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2025թ.-ի նոյեմբերի 29-ին:

Այս դրական քայլերը և մարտահրավերները հաշվի առնելով՝ սույն զեկույցն ավարտվում է տվյալների վրա հիմնված առաջարկներով, որոնք մշակվել և 2025 թվականի մայիսին վավերացվել են տեղացի փորձագետների և շահագրգիռ կողմերի կողմից: Այդուհանդերձ, այդ առաջարկությունների արդյունավետությունն ապահովելու համար կարևոր է անդրադառնալ խարանի և ամոթի հիմնարար պատճառներին, որոնց հետևանքով հաճախ անտեսվում է այն փաստը, որ խնդրի կրող երեխաները շահագործման և բռնության զոհեր են, որոնք ունեն աջակցության և ըմբռնման, ոչ թե դատապարտման կարիք:

Ընդհանուր առմամբ, հավաքված տվյալները վկայում են Հայաստանում սեռական շահագործման և բռնության թեմայի շուրջ առկա չափազանց խիստ խարանի և ամոթի երևույթի մասին՝ ծուղակում հայտնված լինելու զգացումներ առաջացնելով երեխաների մեջ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 1

Խարանավորումը, ամոթը և մեղադրանքը ազդում են Հայաստանում երեխաների շահագործման և բռնության բոլոր ասպեկտների վրա: Երեխայի՝ բացահայտվելու և մեղադրվելու վախը բռնարարներն օգտագործում են որպես գործիք՝ նրան շարունակական բռնությունների շրջապտույտում պահելու համար: Խարանի ենթարկվելու վախի պատճառով երեխաները խուսափում են դեպքի մասին հայտնելուց, հաղորդում տալուց և օգնության դիմելուց: Ստացված տվյալներով՝ երբ երեխայի պատմությունը հայտնի է դառնում, նրանց սկսում են մեկուսացնել, դատապարտել և ավելի են վնասում:

Ուղղված է. Կառավարությանը, լրատվամիջոցներին, կրթական հաստատություններին.

- Տուժողներին մեղադրելու վերաբերմունքի հաղթահարումը կարևորագույն քայլ է Հայաստանում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության կանխարգելման համար: Անհրաժեշտ է մշակել և իրականացնել տվյալների վրա հիմնված սոցիալական և վարքաբանական փոփոխությունների ծրագրեր՝ իրազեկվածության բարձրացման և կրթական արշավների հետ մեկտեղ, որոնք երկարաժամկետ հեռանկարում պետք է ուղղված լինեն բռնությանը նպաստող վերաբերմունքի և վարքագծի փոփոխությանը: Այդ ջանքերը պետք է ընդգծեն, թե համայնքի կողմից խարանավորումը ինչպես կարող է գործիք դառնալ բռնարարների ձեռքում՝ երեխաներին շարունակական բռնությունների ծուղակում պահելու համար: Այդ ջանքերով հարկավոր է խրախուսել ապահով տարածքների ստեղծումը, որտեղ երեխաները կարող են դիմել օգնության համար: Ցանկացած բովանդակություն կամ ուղերձ պետք է մշակված լինի երեխաների, ընտանիքների, ուսուցիչների և պատասխանատու այլ անձանց հետ՝ ապահով և էթիկայի սահմաններում խորհրդակցությունների միջոցով:
- Երեխաների, երիտասարդների և ընտանիքների համար նախատեսված կրթական նախաձեռնությունները՝ նոր կամ արդեն իսկ առկա, պետք է համապարփակ կերպով անդրադառնան սեռականությանն առնչվող հարցերին, մարմնի անկախությանն ու անձեռնմխելիությանը ու համաձայնությանը: Դրանք նաև պետք է տարածեն մարմնի անձեռնմխելիության և համաձայնության վերաբերյալ հասկացությունները թվային աշխարհի և առցանց փոխհարաբերությունների վրա: Այսպիսով, կհասցեագրվեն սեռական շահագործման և բռնության խորքային պատճառները՝ նպաստելով խնդրի կանխարգելման ջանքերին:
- Թվային միջավայրին ուղղված կրթությունը նույնպես օգտակար հավելում է՝ երեխաներին մեդիա գրագիտության հմտություններ փոխանցելու համար: Այս ջանքերը պետք է ուղղվեն առցանց սոցիալական փոխազդեցությունների քննադատական գնահատման կարողություններ զարգացնելուն, ներառյալ համացանցում մարդկանց ինքնությունները ստուգելու գործիքների և շահագործող և բռնի գործողությունների նույնացման և հաղորդման վերաբերյալ:

Ուղղված է. օրենսդիրներին.

- Հաշվի առնելով, որ Հայաստանում երեխաները կարող են առերեսվել ամոթի, խարանի և մեղադրանքի՝ իրենց նկատմամբ բռնության կամ շահագործման մասին հայտնի դառնալուց հետո, հարկավոր է նկատի առնել, թե հայաստանյան համապատասխան օրենքի նախագծում[88] նախատեսվող պարտադիր հաղորդում տալու մասին դրույթները ինչպես կարող են ազդել երեխաների լավագույն շահի վրա: Դա կարող է ներառել.
  - Խուսափել պարտադիր հաղորդում տալու վերաբերյալ չափազանց լայն կամ անորոշ ձևակերպումներից:
  - Մշակել տեղայնացված գործելակարգեր կամ դրույթներ, որոնք թույլ կտան մասնագետներին պարտադիր հաղորդում տալու գործընթացում գնահատել երեխայի լավագույն շահը, այդ թվում՝ հաղորդում չտալու և այլընտրանքային աջակցության ձևերով:

88. Սույն զեկույցը խմբագրելու պահի դրությամբ՝ օրենքի նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025թ.-ի հոկտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2025թ.-ի նոյեմբերի 29-ին:

Ուղղված է. Կառավարությանը, ՀԿ-ներին, իրավապահ մարմիններին.

- Հաշվի առնելով գաղտնիությունը պահելու հետ կապված վախերը, որոնք երեխային հետ են պահում շահագործման և բռնության դեպքերի մասին հաղորդում տալուց՝ դիտարկել օգտատերերի կարիքներին հարմարեցված, անվտանգ և գաղտնի առցանց հարթակ և դեպքերի մասին հայտնելու համար նախատեսված թեժ գիծ ստեղծելու հնարավորությունը: Հարթակը պետք է անանուն մնալու հնարավորություն տա՝ խրախուսելով տուժողներին և դեպքին առնչվող այլ անձանց՝ հայտնելու դեպքի մասին: Ապահովել հասանելիությունը բազմաթիվ ուղիներով (հեռախոս, կայքէջ, բջջային հավելված, սոցիալական ցանցեր):
- Առաջարկվում է, որ այդ մեխանիզմները մշակվեն երեխաների, նրանց խնամողների և մասնագետների հետ համատեղ:
- Առանց համակարգի հանդեպ վստահության, դեպքի մասին հայտնելու մեխանիզմները, ամենայն հավանականությամբ, չեն կիրառվի: Այս առաջարկության իրականացումը պետք է զուգորդվի ընտանիքների և երեխաների վստահությանն արժանանալու ուղղությամբ հաստատությունների ջանքերի հետ, որպեսզի արդարադատության համար դիմելիս և աջակցության ծառայություններից օգտվելիս ընտանիքներն ու երեխաներն իրենց զգան ապահով, հարգված և աջակցված:

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 2

Թեև տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի մեծ մասը տեղի է ունենում չափահաս անձանց կողմից, Հայաստանում վնասակար սեռական վարք դրսևորում են նաև որոշ երեխաներ:

Ուղղված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, վերջինիս կազմում գործող Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնին, Հանրապետական մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոններին և բարձրագույն կրթության բարեփոխումներում ընդգրկված գիտական հաստատություններին: 2025 թվականի մայիսին տեղական շահագրգիռ կողմերի հետ աշխատաժողովի ժամանակ սույն առաջարկության իրականացման գործում կարևորվել է նշված հաստատությունների ներգրավվածությունը:

- Զարգացնելով երեխաների ու երիտասարդների համար դպրոցներում ներդրված "Առողջ ապրելակերպ" առարկան[89]՝ դիտարկել վերանայված մոտեցում, որը նախատեսում է անձնական հարաբերությունների և սեռականության մասին ուսուցման իրավունքահենք, համակողմանի մոտեցումների հարմարեցում ու փորձարկում[90]: Դրանք պետք է լինեն տարիքին համապատասխան, հաշվի առնեն երեխաների նկատառումներն ու տեսակետները, ինչպես նաև պարբերաբար թարմացվեն՝ նոր հետազոտություններն ու միտումներն արտացոլելու համար:
- Անհրաժեշտ է դիտարկել հարաբերություններ հաստատելու և սեռականության թեմայով դասավանդող ուսուցիչների հավաստագրման չափանիշներ սահմանելու և նախքան դասավանդումը սկսելը գնահատումներ իրականացնելու, ինչպես նաև այդ դասընթացները մշտադիտարկելու հնարավորությունը:

89. 8-11-րդ դասարանների ուսումնական ծրագրերում ներդրված դասընթացներ, որոնք անդրադառնում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են գենդերը և գենդերային ինքնությունը, կոնֆլիկտների լուծումը, վերարտադրողական առողջությունը, սեռահասունությունը և այլն:
90. Իրավունքահենք մոտեցման հիմքում ընկած է այն համոզմունքը, որ սեռականությունը, սեռական առողջությունը, սեռական իրավունքներն ու գենդերը այնպիսի հարցեր են, որոնք պետք է բարձրացվեն համատեղ ուժերով, որպեսզի երեխաների մեջ ձևավորվի պատասխանատու մոտեցում, և նրանք տեղեկացված ընտրություն կատարեն իրենց սեռական կյանքում:

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 3

Արդարադատության համակարգին առնչվող երեխաները կարող են բախվել իրենց հետ աշխատող մասնագետների դատապարտող վերաբերմունքին, նրանցից կարող է պահանջվել առերեսումների ժամանակ դեմառդեմ հանդիպել բռնարարի հետ կամ բազմիցս ցուցմունք տալ, և այս ամենը միասին կարող է ենթարկել նրանց կրկնակի տրավմայի:

Ուղղված է. օրենսդիրներին, իրավապահ մարմինների ներկայացուցիչներին, արդարադատության ոլորտի մասնագետներին.

- Քրեական դատավարության օրենսգրքում ներդնել դրույթներ սեռական շահագործման և բռնության որևէ ձևի ենթարկված երեխաներին քննչական գործողությունների, այդ թվում՝ առերեսումների ընթացքում մեղադրյալի հետ անմիջական շփումից պաշտպանելու վերաբերյալ:
- Կատարել համապատասխան հետազոտություն և մշակել համատեքստին համապատասխան երեխայակենտրոն միջնորդավորման համակարգ՝ քննչական գործողություններում և արդարադատության ընթացակարգերում երեխաների մասնակցությանն աջակցելու, ինչպես նաև տրավմայի դեպքերը նվազեցնելու համար (օրինակ՝ արգելելով տուժող երեխաների և ենթադրյալ հանցանքը կատարած անձանց միջև ֆիզիկական առերեսումը և ապահովելով, որ բոլոր հարցերը զտվեն երեխաների գծով մասնագիտացված փաստաբանների և հոգեբանների կողմից):

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 4

Մասնագիտացած մանկական հոգեբանների հասանելիությունը դեռևս լուրջ խնդիր է, հատկապես գյուղական բնակավայրերում: Նրանց մասնակցությունն այժմ արդեն պարտադիր է Քննչական կոմիտեի կողմից իրականացվող քննությունների ժամանակ, ինչը ևս վկայում է այն մասին, որ այս մարտահրավերը հաղթահարելը կարևոր է:

Ուղղված է. Կրթական հաստատություններին, Կառավարությանը, առողջապահության ոլորտին.

- Ձևավորել տրավմայի հետ կապված խնդիրներին քաջատեղյակ մասնագիտացված մանկական հոգեբանների խումբ, որոնք կանցնեն ստանդարտացված մասնագիտական վերապատրաստում և պրակտիկա: Նրանց ծառայությունները պետք է հասանելի լինեն ամբողջ երկրում՝ ապահովելու համար, որ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական բռնության և շահագործման ենթարկված ցանկացած երեխա ստանա որակյալ աջակցություն՝ անկախ բնակության վայրից: Այս ուղղությամբ անհրաժեշտ քայլերից են:

  ա) Ծառայությունների ոլորտի կրթական ծրագրերի համապատասխանեցում՝ մանկական հոգեբանների համար տրավման հաշվի առնող ստանդարտացված պրակտիկա և մասնագիտացված վերապատրաստում ներառելու նպատակով:

  բ) Խրախուսել մասնագիտացված հոգեբանների տեղաբաշխումն ու հաստիքների ստեղծումը Երևանից դուրս կամ նախաձեռնել ռոտացիոն գործողություններ՝ Հայաստանի բոլոր երեխաների համար համապատասխան հոգեբանների հասանելիությունն ապահովելու համար:

  գ) Ընդլայնել ծառայությունների հասանելիությունը Հայաստանի բոլոր, այդ թվում՝ գյուղական բնակավայրերում ապրող երեխաների համար՝ շարունակելով պատվիրակել ծառայությունները դժվար հասանելի մարզերում աշխատող ՀԿ-ներին:

դ) Երկարաժամկետ հեռանկարում լուծել առողջապահության համակարգի ներկայիս կառուցվածքային խնդիրները, որոնք ստեղծում են աշխատավարձերի միջև զգալի անհավասարություն, որի հետևանքով մասնագետները կարող են նախընտրել աշխատանքը մասնավոր կլինիկաներում՝ համեմատաբար ցածր պետական աշխատավարձերի պատճառով:

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 5

Թեև սույն հետազոտության եզրահանգումներում ընդգծվում է հատկապես մասնագիտացած հոգեբանների դերը, առաջնային օղակի աշխատողների, արդարադատության ոլորտի և իրավապահ մարմինների մասնագետների վերաբերյալ մյուս եզրահանգումներն ընդգծում են, որ սեռական շահագործման և բռնության ենթարկված երեխաների հետ աշխատող բոլոր մասնագետները նույնպես կարող են շահել մասնագիտական վերապատրաստումներից և կարողությունների զարգացման ծրագրերից:

Ուղղված է. առաջնային օղակի աշխատողներին, արդարադատության ոլորտի և իրավապահ մարմինների ներկայացուցիչներին.

- Պահանջել մասնագիտացված, շարունակական վերապատրաստում երեխաների մասնակցությամբ դեպքերով զբաղվող ամբողջ անձնակազմի համար: "Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին" օրենքի նախագծի համաձայն[91], որով սահմանվում է, որ երեխաների հետ աշխատող կամ արդարադատության գործընթացում երեխաների հետ առնչություն ունեցող բոլոր մասնագետները (ներառյալ դատավորները, դատախազները, քննիչները, փաստաբանները և դատական ակտերի հարկադիր կատարողները) անցնեն հատուկ վերապատրաստում, այդ վերապատրաստումները պետք է ինտեգրվեն երեխայի պաշտպանության և երեխաների համար արդարադատության ծրագրերում և համակարգերում: Դրանք պետք է լինեն ավելին, քան ընդհանուր իրազեկում, հիմնվեն հմտությունների վրա՝ կենտրոնանալով երեխաների համար նպաստավոր հարցաքննության հնարքների, տրավման հաշվի առնող մոտեցումների և շահագործման և բռնության դինամիկայի

91. Հայաստան, *"Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին օրենքի նախագիծ"*, 2022, 29 հոդված: Սույն զեկույցը խմբագրելու պահի դրությամբ՝ օրենքի նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025թ.-ի հոկտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2025թ.-ի նոյեմբերի 29-ին: Հիշատակված դրույթը տեղ չի գտել ընդունված օրենքում, որի 15-րդ հոդվածի 3-րդ մասը անդրադառնում է երեխայի մասնակցությամբ վարույթի շրջանակներում մասնագետների վերապատրաստված լինելու պահանջին:

նկատմամբ զգայուն վերաբերմունքի վրա: Այդ ծրագրերը պետք է հետևողականորեն գնահատվեն և թարմացվեն՝ թվային տեխնոլոգիաների ամենավերջին զարգացումները և հանցավորության միտումներն արտացոլելու համար:

- Կազմակերպել շարունակական աշխատարաններ արդարադատության բնագավառի բոլոր մասնագետների՝ ներառյալ դատախազների, դատավորների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար՝ համաձայնեցնելու համար հետագա համագործակցության ուղիները, երեխաների համար նպաստավոր արդարադատության իրականացման միջոցները և մասնագետների կարողությունների զարգացումը՝ ներառելով այնպիսի թեմաներ, ինչպիսիք են թվային ապացույցները, բաց աղբյուրների հետազոտությունը (open-source intelligence կամ OSINT), տուժողների հայտնաբերումը, ԻՆՏԵՐՊՈԼ-ի՝ Երեխայի սեռական շահագործման վերաբերյալ միջազգային տվյալների շտեմարանը (International Child Sexual Exploitation կամ ICSE) և քրեական հետախուզության աջակցությունը քննության գործընթացին: Ապահովել տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի վարման ստանդարտացված ընթացակարգերի առկայությունը՝ հետևողական և մասնագիտացված արձագանքի համար:
- Ապահովել կապը ICSE տվյալների շտեմարանի հետ՝ ջանքերի կրկնապատկումը նվազեցնելու և երեխայի սեռական շահագործման վերաբերյալ նյութերին առավել արդյունավետորեն արձագանքելու նպատակով:
- Որպես առաջնահերթություն՝ վերապատրաստում տրամադրել մարզային իրավապահ մարմինների աշխատակիցներին, քանի որ նրանք տուժողների համայնքներում բռնության ենթարկված անձանձ կոնտակտի առաջին կետն են: Ի տարբերություն ավելի խոշոր քաղաքների՝ նրանք կարող են չունենալ նույն հասանելիությունը վերապատրաստումներին, ռեսուրսներին կամ մասնագիտական աջակցության ծառայություններին, ինչ Երևանում կամ Կապանում աշխատողները, որոնք կարող են օգտվել այնպիսի ծառայություններից, ինչպիսիք են "Ապահով անկյունները": Նրանց համակողմանի վերապատրաստմամբ ապահովելը կարող է բարելավել տուժողների խնդիրներին նրանց արձագանքելու կարողությունը և առավել արդյունավետորեն խթանել այն տարածքներում, որոնք բավարար չափով ապահովված չեն համապատասխան ծառայություններով:
- Նույնքան կարևոր է համակարգի նկատմամբ վստահության ձևավորումը՝ հաշվի առնելով տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության հետ կապված խարանի բարձր հավանականությունը: Ուստի իրավապահ մարմինները պետք է ներգրավվեն կանխարգելմանն ուղղված ջանքերում և համագործակցեն համայնքային իրազեկման նախաձեռնությունների շրջանակներում: Սոցիալական խարանի, տուժողներին մեղադրելու վարքագծի դեմ պայքարելով և պատասխանատվությունը տեղափոխելով հանցանքը կատարած անձանց վրա՝ իրավապահ մարմինները կարող են հաստատել իրենց հստակ հանձնառությունը կանխարգելման գործում: Այս նախահարձակ և կանխարգելիչ մոտեցումը ոչ միայն կամրապնդի համայնքի վստահությունը, այլև կօգնի տուժողների և նրանց ընտանիքների համար ավելի ապահով և աջակցող միջավայրի ձևավորմանը:

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 6

Չնայած որոշակի դրույթների առկայությանը՝ իրավական կարգավորումների և քաղաքականության վերլուծությունը վերհանում է բարելավման կարիք ունեցող ուղղությունները՝ ապահովելու համար, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործումն ու բռնությունը համակողմանի քրեականացված լինեն և համապատասխանեն միջազգային ստանդարտներին:

Ուղղված է. օրենսդիրներին.

- Փոփոխել Հայաստանի օրենսդրությունը՝ ապահովելու համար տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի արդյունավետ քրեական հետապնդումը: Սա կարող է նպաստել նաև կանխարգելմանը՝ ամրապնդելով զսպման մեխանիզմներն ու ահազանգելով, որ տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործումն ու բռնությունը լուրջ հանցագործություն են: Միջազգային ստանդարտներին համապատասխանեցմանն ուղղված օրենսդրական փաթեթը պետք է ներառի հետևյալը.

  ա) Սեռական նկրտումներով առցանց գրուումինգի վերաբերյալ գործող դրույթների փոփոխություն՝ ապահովելու համար 18 տարին չլրացած բոլոր երեխաների պաշտպանությունը, ինչպես նաև վերանայել սահմանումը, որպեսզի այն ներառի նաև բռնության այն ձևը, որն ամբողջությամբ տեղի է ունեցել առցանց՝ հանցանքի որակումը չպայմանավորելով բռնարարի կողմից առերես հանդիպման առաջարկի առկայությամբ:

  բ) Փոփոխել օրենսդրությունը՝ հստակ քրեականացնելով երեխայի նկատմամբ սեռական բռնության ուղիղ հեռարձակումը, ընդ որում՝ դա անելով կա՛մ առանձին դրույթ սահմանելով կա՛մ ուղիղ նշելով, որ երեխայի նկատմամբ սեռական բնույթի նյութերի և/կամ "երեխաներին պոռնկագրական բնույթի գործողություններ կատարելուն ներգրավելու" վերաբերյալ գործող դրույթները կիրառվում են նաև այն դեպքերում, երբ բռնությունը ուղիղ հեռարձակվել է առցանց տիրույթում, և նյութերը ներբեռնված կամ պահեստավորված չեն: Ապահովել, որ հանցակազմը ընդգրկի ինչպես այդ նպատակներին երեխաների ներգրավումը, այնպես էլ բռնութայն ուղիղ հեռարձակումիից օգտվելը կամ դիտումը:

  գ) Ընդունել իրավական դրույթներ, որոնք հստակ կքրեականացնեն տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական բնույթի շանտաժը, ընդ որում՝ այնպիսի սահմանմամբ, որը կարտացոլի երեխայից դրամ կամ սեռական գործողություններ շորթելու նպատակով ինքնուրույն ստեղծված սեռական բնույթի նյութերից օգտվելուն հարկադրելը:

  դ) Քրեական օրենսգրքում փոփոխել սեռական բռնություն պատկերող նյութերի սահմանումը՝ հստակ ներառելով ոչ վիզուալ և թվային եղանակով ստեղծված բովանդակությունը՝ ներառյալ ԱԲ-ի կիրառմամբ ստեղծված նյութերը: Վերանայված սահմանման մեջ պետք է հստակ նշվի, որ երեխաների պատկերող ցանկացած նյութ, անկախ նրանից՝ իրական երեխաները ներգրավվել են դրա ստեղծմանը, թե ոչ, որակվում է որպես երեխայի նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութ:

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 7

Բացակայում են դրույթները, որոնցով համացանցային ծառայություն մատուցողներն ու առցանց հարթակները պարտավոր կլինեն հեռացնել անօրինական բովանդակությունը և պահեստավորել այն տվյալները, որոնք կարող են օգնել երեխաների սեռական շահագործման և բռնության գործերի քննությանը: Սա հատկապես մտահոգիչ է՝ հաշվի առնելով, որ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի կեսից ավելին (առնվազն մասամբ) տեղի է ունենում առցանց հարթակում: Երեխայի սեռական շահագործման նյութերի արագ հեռացումը շատ կարևոր է կրկնակի զոհականացումից խուսափելու համար:

Ուղղված է. օրենսդիրներին, սոցիալական ցանցերին, խաղային հարթակներին.

- Ընդունել իրավական դրույթներ, որոնք համացանցային ծառայություն մատուցողներին և առցանց հարթակներին կպարտավորեցնեն սահմանել հստակ, հասանելի և օգտագործողների համար հասկանալի ծանուցման և հեռացման մեխանիզմներ՝ անօրինական բովանդակության, այդ թվում՝ երեխայի նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութերի մասին հայտնելու նպատակով: Այդ դրույթները պետք է ուղեկցվեն երրորդ կողմի ստեղծած նյութերի համար միջանկյալ պատասխանատվության մասին հստակ իրավական կարգավորումներով՝ գործուն պաշտպանությունը և նման նյութերի արգելափակումը խթանելու նպատակով:
- Սահմանել համապարփակ իրավական կարգավորումներ տվյալների պահեստավորման վերաբերյալ՝ գաղտնիության անհրաժեշտ երաշխիքներով՝ ապահովելու համար, որ ծառայություն մատուցողները պահպանեն գործածողների այն տվյալները, որոնք կարող են էական նշանակություն ունենալ երեխայի սեռական շահագործման և բռնության հանցագործությունների քննության համար:
- Բոլոր սոցիալական ցանցերը, ակնթարթային հաղորդագրությունների և առցանց խաղերի հարթակները պետք է ձգտեն ամրապնդելու տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերի կանխարգելման, բացահայտման և դրանց մասին հայտնելու իրենց միջոցառումները: Այդ ջանքերը պետք է ներառեն մշտադիտարկման և գնահատման կարգավորումների առկայությունը՝ ապահովելու համար, որ երեխաներին վնասից զերծ պահելուն ուղղված անվտանգության միջոցառումները գործեն արդյունավետ և ըստ նպատակի: Չափման ցուցանիշները պետք է ոչ միայն չափեն որոշակի արշավներում ներգրավվածության աստիճանը, այլև պետք է ուղղված լինեն վարքագծի տևական փոփոխությանը:

ՆԿԱՏԱՌՈՒՄ ԹԻՎ 8

Եզրահանգումներում մատնանշված են մի շարք օրինակներ, երբ տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության դեպքերում երեխաների և նրանց ընտանիքների մասնավոր կյանքի գաղտնիությունը չի պահպանվել, հատկապես լրատվամիջոցներում: Այս երևույթը ծանրագույն հետևանքներ է ունենում երեխաների համար՝ մեկ այլ դպրոց կամ բնակավայր տեղափոխվելու անհրաժեշտությունից մինչև ինքնասպանության փորձ:

Ուղղված է. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնին[92], օրենսդիրներին, արդարադատության ոլորտի մասնագետներին, իրավապահ մարմիններին, առաջնային օղակում ծառայություն մատուցողներին.

- Մշակել կարգավորում կամ ուղեցույց էթիկական և իրազեկված լրատվական լուսաբանման վերաբերյալ և վերանայել ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի բարեվարքության կանոնները՝ դրանում ներառելու համար երեխաների և տեխնոլոգիաների կիրառմամբ սեռական շահագործման և բռնության դեպքերին վերաբերող դրույթներ:
- Լրատվամիջոցների մասնագետները պետք է վերապատրաստվեն այն թեմայով, թե ինչպես կարող են էթիկապես և պատասխանատու ձևով լուսաբանել երեխաներին առնչվող դեպքերը՝ անկախ նրանից՝ երեխան հանցագործությունից տուժած ա՞նձն է, հանցանքի համար մեղադրվո՞ղը, թե՞ օրինազանցը: Վերապատրաստումները պետք է ներառեն այնպիսի թեմաներ, ինչպիսիք են պատշաճ եզրույթաբանության կիրառումը, Հայաստանում (տեխնոլոգիաների կիրառմամբ) սեռական շահագործման և բռնության ազդեցությունը երեխաների վրա, ինչպես նաև այն ազդեցությունը, որ կարող են ունենալ գաղտնիության խախտումները արդարադատության համակարգին առնչվող երեխաների վրա:
- Թեև գաղտնիության պահպանման խախտումները շեշտադրվել են երեխայի նկատմամբ բռնությունների լրատվական լուսաբանման ընթացքում, գաղտնիությունը պետք է երաշխավորվի հստակ, իրավական առումով հիմնավոր գործելակարգերով, որոնք կսահմանեն պահանջներն ու պարտավորությունները բոլոր բնագավառներում: Դրա համար անհրաժեշտ է օրենսդրական և մասնագիտական ուղեցույցների մշակում, որը կզուգորդվի ծառայություն մատուցողների և արդարադատության ոլորտի և լրատվամիջոցների աշխատողների վերապատրաստման և կարողությունների զարգացման ծրագրերով: Առանց նման երաշխիքների գաղտնիության խախտումները կարող են հանգեցնել կրկնակի տրավմայի և հավելյալ վնասի և երեխաներին հետ պահել օգնության դիմելուց կամ ծառայություններից օգտվելուց:

92. Տեղական շահագրգիռ կողմերի հետ 2025 թ. մայիսին տեղի ունեցած խորհրդակցությունների արդյունքում այս հիմնական հաստատությունները մատնանշվել են որպես սույն հանձնարարականի կատարման կարևորագույն օղակ:

10. ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

“Disrupting Harm in Armenia: տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների սեռական շահագործման և բռնության վերաբերյալ տվյալներ" զեկույցը հեղինակել են Մարիում Սահիդը, Անջելա Դևիսը, Տիագո Ալֆոնսոն, Անդրեա Վարելլան և Լաուրա Սմիթը:

ԷՔՓԱԹ-ը, ԻՆՏԵՐՊՈԼ-ը և ՅՈՒՆԻՍԵՖ Իննոչենթիի՝ Հետազոտությունների և կանխատեսումների գլոբալ գրասենյակը բարձր են գնահատում տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի սեռական շահագործման և բռնության վերաբերյալ տվյալների հավաքման ուղղությամբ կատարված համատեղ աշխատանքը: Սույն զեկույցը այդ տվյալները հավաքելու և ստեղծելու ուղղությամբ երեք տարվա համագործակցված ջանքերի արդյունք է:

Սույն հետազոտությունը չէր հաջողվի առանց բազմաթիվ անհատների և գործընկերների ներգրավվածության, հատկապես Հայաստանում: Մեր շնորհակալությունն ու գնահատանքն ենք հղում Հայաստանի մեր գործընկերներին՝ ներառյալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակին, "Հույս և օգնություն" հասարակական կազմակերպությանը և Երևանում ԻՆՏԵՐՊՈԼ-ի ազգային կենտրոնական բյուրոյին:

Մասնավորապես, սույն զեկույցում ներկայացված հետազոտական արդյունքներն ու նկատառումները հնարավոր չէին լինի առանց հետազոտության մասնակիցների, որոնք իրենց ժամանակը հատկացրին հետազոտողների հետ զրույցի համար: Մեր երախտագիտությունն ենք հայտնում բոլոր երեխաներին, երիտասարդներին, ծնողներին, առաջնային օղակի աշխատողներին, արդարադատության ոլորտի մասնագետներին, իրավապահ մարմինների աշխատակիցներին և այլ մասնագետներին, որոնք մասնակցեցին այս հետազոտությանը:

Հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում հետազոտության հայաստանյան գործընկերներին՝ իրենց փորձառության և տվյալների հավաքման ժամանակ ցուցաբերած համագործակցության համար.

- **"Հույս և օգնություն" և Առողջության ամրապնդման և բռնությունից պաշտպանության "Աստրա" հիմնադրամ.** ազգային օրենսդրության և քաղաքականության ուսումնասիրություն, արդարադատության ոլորտի մասնագետների, առաջնային օղակի աշխատողների և երեխաների ու երիտասարդների հետ հարցազրույցներ և որակական վերլուծություն,
- **Իփսոս միջազգային սոցիալական հետազոտություններ), ԱյՓիԷմ (IPM) և ԷմՓիՋի(MPG).** տնային տնտեսությունների հարցման իրականացում:

Հեղինակները երախտապարտ են նաև հետևյալ փորձագետներին՝ Հայաստանում հետազոտության մեթոդաբանական ուղեցույցների քննության և կարծիքի համար. Հարություն Վերմիշյան և Լուսինե Սաղումյան:

Հեղինակները ցանկանում են շնորհակալություն հայտնել ՅՈՒՆԻՍԵՖ Իննոչենթիի հետևյալ գործընկերներին արժեքավոր մեկնաբանությունների և առաջարկությունների համար. Բելլա Բաղդասարյան, Կամիլա Պերերա Ալադրո, Դանիել Կարդեֆելտ Ուինտեր և Յորուն Արնդտ:

Հեղինակները նաև իրենց երախտագիտությունն են հայտնում այն գործընկերներին, որոնք ուսումնասիրել են զեկույցը և ունեցել իրենց ներդրումը դրանում. Ադրինե Բաբլոյան, Աստղիկ Մարտիրոսյան, Գիյոմ Լենդրի, Նորա Մնացականյան, Սենդրին Կոնստանտ, Սերենա Տոմմազինո, Վերոնիկա Օդինոկովա և Վիկտորյա Օհանյան:

11. ՀԱՎԵԼՎԱԾ. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Երեխայի նկատմամբ սեռական բռնություն: Դժվար է գտնել այնպիսի ձևակերպում, որն ամբողջությամբ կամ ճշգրիտ բնութագրի բռնություն պարունակող գործողությունը: "Բռնություն" եզրույթը հաճախ ենթադրում է մեկ այլ անձի նկատմամբ դաժան կամ բռնի վերաբերունք: Եզրույթը հաճախ վերաբերում է ինչպես գործողության բնույթին (օրինակ՝ բռնի, կամքին հակառակ), այնպես էլ դրա հետևանքները, օրինակ՝ մարմնական վնասվածք, ցավ (ֆիզիկական կամ հուզական), դիսթրես և այլն:

Ինչ վերաբերում է հենց երեխայի նկատմամբ բռնությանը, ապա այն ենթադրում է երեխաների (18 տարին չլրացած անձանց) նկատմամբ սեռական բնույթի տարբեր բռնարարքներ՝ անկախ նրանից՝ երեխաները գիտակցո՞ւմ են արդյոք, որ իրենց հետ տեղի ունեցողը նորմալ և ընդունելի չէ: Դա կարող է կատարվել ինչպես չափահասների, այնպես էլ հասակակիցների կողմից և, սովորաբար, ենթադրում է այնպիսի արարք, երբ ինչ-որ անհատ կամ խումբ օգտվում է ուժերի անհավասարությունից: Այն կարող է կիրառվել առանց ուժի բացահայտ գործադրման, երբ բռնարարները հաճախ օգտվում են իրենց ազդեցությունից, ուժից կամ գործի են դնում մանիպուլյացիա կամ խաբեություն[93]:

Երեխայի սեռական շահագործում: Պարունակում է վերը նկարագրված բռնի գործողությունները: Այդուհանդերձ, այս հանցանքի դեպքում առկա է երրորդ անձի և/կամ բռնարարի կողմից սպառնալիք կամ փոխհատուցման առաջարկ կամ խոստում (օրինակ՝ գումարի, կացարանի, նյութական բարիքների կամ ոչ նյութական փոխհատուցման, այդ թվում պաշտպանության, հարաբերությունների կամ դրանց խոստման ձևով)[94]:

Երեխայի նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութեր, ներառյալ՝ ԱԲ-ի միջոցով ստեղծված լուսանկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ և այլ ձայնատեսագրություններ, կամ երեխայի նկատմամբ սեռական բռնության իրական կամ թվային (այդ թվում՝ ԱԲ-ի միջոցով ստեղծված) նյութերի կամ երեխայի մարմնի սեռական մասերի ցուցադրում՝ հիմնականում սեքսուալ բնույթի նպատակներով[95]:

Երեխայի նկատմամբ սեռական բռնության ուղիղ հեռարձակում: Երեխայի նկատմամբ սեռական բռնությունը, որը կատարվել և համաժամանակյա դիտվել է իրական ժամանակում՝ հաղորդակցական գործիքների, տեսակապի սարքավորման և/կամ զրուցարան/չաթ-հավելվածների միջոցով: Դեպքերի մեծամասնությունում հանցանքը կատարող անձը, որը խնդրել է կատարել բռնություն հանդիսացող արարքը՝ վճարման կամ նյութական այլ օգուտի դիմաց, ֆիզիկապես գտնվում է երեխա(ներ)ի և բռնությունը կազմակերպող անձի գտնվելու վայրից տարբերվող վայրում[96]:

Երեխաների առցանց գրումինգը սեռական նպատակներով/ երեխաների գայթակղում սեռական նպատակներով: Տեխնոլոգիաների կիրառմամբ երեխայի հետ հարաբերության հաստատում՝ երեխային սեռական բռնության ենթարկելու կամ շահագործելու նպատակով[97]:

Երեխայի սեռական շանտաժը: Անձին շանտաժի ենթարկելը հենց այդ անձի կողմից ստեղծված պատկերների միջոցով՝ սեռական ծառայություն, գումար կամ այլ օգուտ ստանալու նպատակով, այդ նյութերը պատկերված անձի կամքին հակառակ տարածելու (օրինակ՝ նկարները սոցիալական ցանցերում տեղադրելու) սպառնալիքի ներքո: Գրումինգի ձևով հանցանք կատարողներին բնորոշ տևական (երբեմն ամիսներ տևող) ազդեցությունն ու մանիպուլյացիան հաճախ վերածվում են ահագնացող սպառնալիքների, նվաստացման և հարկադրանքի, երբ անձը, որին համոզել են ուղարկել իր առաջին սեքսուալ նկարը, կատարում է այդ քայլը[98]:

93. Interagency Working Group on Sexual Exploitation of Children, *Terminology Guidelines for the Protection of Children from Sexual Exploitation and Sexual Abuse: Second Edition*, ECPAT, Bangkok, 2025, pp. 31–34 (Երեխաների սեռական շահագործման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, *Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու տերմինաբանության ուղեցույց. Երկրորդ հրատարակություն*, ԷՔՓԱԹ Ինտերնեշնլ, Բանգկոկ, 2025 թ., 31-34 էջեր):
94. Նույն տեղում, 39-44 էջեր:
95. Նույն տեղում, էջ 63:
96. Նույն տեղում, էջ 86:
97. Նույն տեղում, էջ 95:
98. Նույն տեղում, 97-98 էջեր:

Սեռական հետապնդումը. "Սեռական բնույթի բանավոր, ոչ բանավոր կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նսեմացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը", ինչպես սահմանված է Ստամբուլյան կոնվենցիայով (հոդված 40), որը միակ փաստաթուղթն է, որ պարունակում է այս եզրույթի սահմանումը[99]:

Վնասակար սեքսուալ վարք դրսևորող երեխաներ. Այս եզրույթը վերաբերում է երեխաների և երիտասարդների կողմից դրսևորվող սեռական վարքագծին կամ զարգացման աստիճանին ոչ հարիր սեռական վարքին, որը վնասակար կամ բռնի բնույթ ունի[100]:

Եզրույթների և հիմնական նկատառումների հետ կապված լրացուցիչ ուղղորդման համար տես՝ Երեխաներին սեռական շահագործումից և բռնությունից պաշտպանելու Տերմինաբանական ուղեցույցը:

99. Նույն տեղում, 36-38 էջեր:
100. Նույն տեղում, էջ 160;